Հակոբ Սրապյան

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՐԾՎԱՅԻՆ ԹՌԻՉՔ

Երևան 1998

ԳՄԴ 66.3(2Հ)
Ս-910

Ս-910 Սրապյան, Հակոբ
Արծվային փասներկու թռիչք.-եր; Շուշան, 1997.-104 էջ

Արծվաշենի պաշտպանության ժամանակ նահատակված 12 հերոս հայորդիների մասին է այս հուշամատյանը՝ հյուսված ցավով, փառապանքով, սիրով...

Ս $\frac{0801000000}{782(01)}$ 97 ԳՄԴ 66.3(27)

© Սրապյան, Հ. 1997թ.

Այս հուշակոթողը ես պիտի կոչեմ մշտաբարբառ հուշարար, քանզի անցյալը չէ միայն, որ պիտի հիշենք, մեր քաջ տղոց զոհողությունը չէ միայն, որ պիտի հիշենք: Այս հուշարձանը մեզ պետք է հիշեցնե մեր պարտքը դեպի ներկան, դեպի ապագան ... Նրանք ուսուցիչ են իրենց մահից հետո, դրովհետև իրենք աշակերտը եղան հերոսական մեր մյուս նահատակների ...

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱԿՈԲ ՍՐԱՊՅԱՆ

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայրենակիցներ: Վերջին օրերին աննախադեպ ծանր դրության մեջ էր հայտնվել Արծվաշենը: Փակելով գյուղը Հայաստանին կապող, Ադրբեջանի տարածքով անցնող միակ ավտոճանապարհը, ադրբեջանական բանակի կազմավորումները բոլոր կողմերից շրջափակել էին այն: Օրեցօր սաստկանում էին գյուղի հրետակոծումները «Գրադ» կայանքներից, տանկերից և հրանոթներից:

Գյուղի ապաշրջափակելու բոլոր առաջարկները մերժվում էին Ադրբեջանի կողմից: Փաստորեն շուրջ 4500 արծվաշենցիների վրա կախվել էր ֆիզիկական ոչնչացման իրական սպառնալիք: Ստեղծված պայմաններում ամենակարևոր խնդիրը գյուղի բնակչությանը չարագույժ վտանգից փրկելն էր:

Օգոստոսի 6-ին և 7-ին հայկական բանակի մարտիկներն ու աշխարհազորայինները, համառ մարտերում ետ շպրտելով թշնամուն, ապահովեցին Արծվաշենի ողջ բնակչության կազմակերպված դուրս բերումը կրակի գոտուց:

Սակայն գյուղը պահել չհաջողվեց: Օգոստոսի 8-ին, մոտեցնելով մեծ թվով կենդանի ուժ և զրահատեխնիկա, թշնամին աքցանի մեջ առավ գյուղի պաշտպաններին: Դժվարագույն պայմաններում հայտնված հայկական բանակի մարտիկները չընկրկեցին թշնամու առաջ: Գերադասելով մահը գերությունից, նրանք խիզախորեն մարտնչեցին և ճեղքելով շրջափակման օղակը՝ դուրս եկան գյուղից: Ըստ նախնական տվյալների, նրանցից 12-ը զոհվեցին մարտում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը խոնարհվում է նրանց անմար հիշատակի առջև: Նրանց անունները ընդմիշտ կմնան հայկական բանակի տարեգրության մեջ որպես հայրենասիրության և հարազատ ժողովրդի հանդեպ զինվորական պարտքին մինչև վերջ հավատարիմ մնալու մեծագույն օրինակ:

Երևան, 10 օգոստոսի 1992 թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության, Ներքին գործերի և Պաշտպանության նախարարությունների մի շարք ծառայողների Հայաստանի Հանրապետության շքանշաններով և մեդալներով պարգևատրելու մասին

Հայաստանի Հանրապետության նախագահի

1996 թվականի սեպտեմբերի 20-ի ՆՀ-640

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 5-րդ տարեդարձի առթիվ Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության, Ներքին գործերի և Պաշտպանության նախարարությունների մի շարք ծառայողների պարգևատրել.

1-ին աստիճանի Մարտական խաչ շքանշանով (հետմահու).

Կիրովականի N զորամասի խմբակային սխրագործություն (Արծվաշենում)

1. Ավետիսյան Էդվարդ Սպարտակի - մայոր, հրամանատարի տեղակալ
2. Դարբինյան Վոլոդյա Սարգսի - լեյտենանտ, դեսանտային ջոկի հրամանատար
3. Աբրահամյան Հարություն Վարանգյուլի - շարքային
4. Եղիազարյան Սուրեն Լյուդվիգի - շարքային
5. Թովմասյան Տիգրան Գրիգորի - շարքային
6. Հակոբյան Ժորա Ալբերտի - շարքային
7. Մակարյան Արմեն Վոլոդյայի - շարքային
8. Միքայելյան Դավիթ Արամայիսի - շարքային
9. Մնացականյան Կարեն Սերյոժայի - շարքային
10. Չիլինգարյան Մխիթար Գևորգի - շարքային
11. Սարիբեկյան Կամո Ռոբերտի - շարքային
12. Սմբատյան Անանիա Վարդանի - շարքային

Երևան

20 սեպտեմբերի 1996 թ.

Հայրենիքն է շնորհում մարդուն հպարտանքներից ամենաարդարը, ցավերից՝ ամենախորը, պաշտամունքներից՝ ամենաանխաբը և մահերից՝ ամենասուրբը:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ամեն ոք գալիս է իր արմատներից: Մոլախոտի արմատն ընդամենը մոլախոտ է սնուցում, ծաղկի արմատը՝ ծաղիկ: Մինչդեռ ուրիշ է հողմերի դեմ շաչող կաղնին: Ուրիշ են կաղնու արմատն ու հիշողությունը: Կաղնին զորավո՞ր է, ըմբո՞ստ, անընկճելի, փառահեղորեն շքեղ՝ անգամ ընկած ժամանակ...

Արծվաշենի տասներկուսն իմ աչքին դիտապաստ ընկած կաղնիներ են, ջահել, չծերացած կաղնիներ, որոնց էություն-արմատները գալիս են, էէ՞, էրգրի խորքից, մեր հիշողության մաքրամաքուր ակնաղբյուրներից: Բոլորը: Անխտիր... Եվ ես գլուխ եմ խոնարհում տասներկու ընկած կաղնիների առաջ՝ նրանց հիշատակին ի հուշարձան բերելով այս գիրքը՝ հուսալով, որ այն գալիք սերունդներին ի պահ կտա տասներկու խնկելի անուններ...

ՀԵՂԻՆԱԿ

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀՈՂ

«Նրանք պատկանում են մարդկանց այն խմբին. ովքեր գիտակցված ճշմարտության պես ընդունել են կանգնած մեռնելու գաղափարը, ովքեր իրենց գերեզման-սրբավայրի համար հեղել են սեփական արյունը՝ դառնալով լեգենդ, դառնալով իրենց հավերժական հանգրվանի տերը: Նրանք արդեն մասնիկներն են հողի, իսկ հողը երբեք չի նվաճվի, որովհետև հողը հավերժական է»:

Է. Հեմինգուեյ

Հավերժական հող:

Դեռ մեր նահապետից՝ Հայկից է գալիս մեր հողի հավերժությունը. Բելը պիտի խոցվեր, որովհետև նպատակն էր անբարո: Եվ Հայկը պիտի հաղթեր, քանզի իր ազատությունն էր պաշտպանելու, իր ազգ ու տոհմի պատիվն էր պաշտպանելու և իր հաղթանակով ապահովելու էր իր տոհմի, իր արյան հավերժացումը: Նախնառաջ արյան, քանզի, եթե պղտորվեր արյունը, ապա հողը կերերար նրա ոտքի տակ, հողը կխռովեր իր իսկական տիրոջից ու մի օր էլ ավար կդառնար օտար բռնակալներին: Իսկ այդպիսիք քի՞չ են եղել մեր պատմության քառուղիներում: Քի՞չ են եղել ի սկզբանե: Բայց եկել են ու անցել բյուրավոր ու բյուրանուն ելուզակները: Եկել են ու անցե՞լ... Ոչ: Ումում՝ բայց հայի բախտը միշտ է եղել իր հետ և ստվերի նման հետամուտ եղել իրեն՝ թշնամու տեսքով, թուրքի տեսքով, թուրքազերու տեսքով: Նաև մեր օրերում: Եվ հենց մեր օրերում պիտի պոռթկար մեր արյունը, այլապես վաղն արդեն ուշ կլիներ: Անդառնալիորեն ուշ, որովհետև դարեր շարունակ «եկող հոտը» (Հ. Սահյան) արդեն շա՜տ էր բազմացել...

Ահա այս վտանգն էր, որն զգաց ու որի դեմ պոռթկաց մեր արյունը: Պոռթկաց՝ արցախյան ընդվզումով, որը հետո վեր էր աճվելու համազգային արթնացման, համազգային ըմբոստացումի, համազգային հերոսացման.

Արծվաթև ֆիդայիներ, սեգ սարերից Սասունի
Իջեք Արցախ աշխարհը մեր, ուր հայ սիրտը կարյունի,
Առած ձեր բոց նժույգներին՝ Անդրանիկին բերեք տուն,
Կարոտել ենք ձեր զենքերի շանթ ու բոցին փոթորկուն...

Ստեփան Զորյանը Կարմիր բանակի զորամասերի հրամանատարներ Ս. Գեղեցկի, Ս. Ասլանի, Ս. Ավագյանի, Ս. Ալիխանյանի, Ս. Ալեքսանդրի, Ս. Ալեքսանդրի, Ս. Ալեքսանդր

«Սխրանք» հուշակոթողի բացումը
Եռաբլուրում, 1995 թ. մայիսի 28-ին:

Համազգային արթնացման ալիքն անցավ շրջանից-շրջան, քաղաքից-քաղաք, գյուղից-գյուղ, տնից-տուն: Մեր ժողովրդի արգանդը ծնեց իր նորօրյա Մարգպետունիներին, իր Այծեմնիկներին ու Սոսեներին, իր Արաբոներին ու Դժոխք Հրայրներին, հանուն հայրենյաց հողի փրկության՝ գնդակի հրեղեն համբույրին կարոտ խնկելի ու անմահ իր մյուս զավակներին: Ծնեց, քանզի չծնել չէր կարող, քանզի ճակատագրական պահերին են անհրաժեշտ Նժդեհները, որ գալիս են իբրև ասուպ՝ լուսավորելու իրենց ապրած ժամանակաշրջանը, գալիք սերունդների անցնելիք ուղին, անփուշ ու ապահով դարձնելու այդ ուղին, որը միտում է դեպի հավերժություն:

ԱՐԾՎԱՇԵՆ

Աչքի անցկացնելով «Հայկական սովետական հանրագիտարանի» երկրորդ հատորը՝ սուղ տողերից տեղեկանում ենք, որ շենն այդ հիմնադրվել է 1845 թվականին և կոչվել Բաշքենդ (Կրասնոսելսկի շրջան, շրջկենտրոնից շուրջ 25 կիլոմետր հյուսիս-արևելք): Խորհրդային շրջանում տնտեսությունն զբաղվել է այգեգործությամբ, կարտոֆիլի, ծխախոտի, հացահատիկի մշակմամբ: Գյուղում գործել են Երևանի «Հայգորգ» ֆիրմայի, այլ գործարանների մասնաճյուղեր, երկու միջնակարգ դպրոց, արհեստագործական ուսումնարանի մասնաճյուղ, գրադարան, հիվանդանոց, դեղատուն, մանկապարտեզ, կինոթատրոն, կապի բաժանմունք, կենցաղսպասարկման տաղավար:

Այստեղ է ծնվել Խորհրդային Միության հերոս Ս. Չիլինգարյանը:

Հանրագիտարանային տեղեկատվությունն այսքանն է՝ չոր ու ցամաք տողեր:

Գալու էր ժամանակը, և ինձ կանչելու էր Արծվաշենը՝ ավելի մոտիկից ճանաչելու իրեն: Եվ նոր միայն հայացքիս առաջ բացվելու էր հայոց հնօրյա այս շենի կենդանի պատկերը՝ իր զուլալ ու անապակ աղբյուրներով, ու իմ ունկերում քչքչալու էին այդ աղբյուրները՝ իրենց զրնգուն անուններով՝ Չամչի աղբյուր, Ձնգան քար... Չամչի աղբյուր. ո՞վ է տվել այս անունը սառնորակ այս ջրին... Մի անցո՞րդ, որի՝ ծարավից տոչորվող շուրթերին աղբյուրի ջուրը չամչի համ է տվել... Կամ՝ Ձնգան քար. ինչո՞ւ զնգան: Ինչ իմանաս: Կարևորը, որ շատ գեղեցիկ է հնչում: Ճիշտ այնպես, ինչպես Վերին ու Ներքին թաղերը. ինչպես Ցից քարն ու այլ տեղանուններ:

Թերթում եմ իմ գործընկերոջ՝ արմատներով արծվաշենցի Արտակ Ճաղարյանի հոդվածները՝ նվիրված այսօր արդեն հանգած փեթակ հիշեցնող Արծվաշենին. «Վերջին տներին զուգահեռ, գյուղամիջով մի բարակ գետակ է հոսում, բարակ ու ջրառատ: Իր համար ճամփա է բացել ու ափերին հենվելով՝ հազարամյա ծերուկի նման օրորվում է առաջ... Ամեն անցորդի բարև է տալիս և, պատասխանը չառած, սահում է ու երկար պոչը քաշում: Քաշում է հարյուր տարի, հազար տարի, միլիոն տարի... Քաշելու է, հա՛ քաշելու... Գետափնյա քարերը կանաչել են, մամռակալել ու ջրի հայելու մեջ ցոլցլում են՝ իրենց սևությանը խառնելով արևի մի բարակ շողք ու դեպի երկինք խոյացող ժայռաբեկորների սևությունը:

Քարերը կարծրացել, սեղմվել են իրար, դարձել մի հսկա, որ ուսերին եկեղեցի է կրում ու խաչքարեր: Գմբեթարդ տանիքով շինություն է եկեղեցին՝ մոռացված, անկարեկից, ուր քանի՜ տասնամյակ ոչ զանգի ձայն է լսվել, ոչ քարոզ ու ժամերգություն...

Լսվել է, չի լսվել՝ եկեղեցին կանգուն է եղել: Կա՞ հիմա եկեղեցին, կա՞ն խաչքարերը կամ սրբատեղի-գերեզմանոցի տապանաքարերը: Եվ ընդհանրապես՝ կա՛ մի տուն, մի շինություն, որ կանգուն մնացած լինի, թե՞ ավերվել է ամենն այն, ինչ ստեղծվել է արարչագործ արծվաշենցու ձեռքով, ստեղծվել է տքնանքով ու տառապանքով...»

Շարունակում եմ ընթերցել լրագրող ընկերոջս տողերը. «Արծվաշենցիները մեծամասամբ եկել են Չորաթանից, (Արցախ) տնավորվել, շենացրել են իրենց գյուղն ու դարձել 700-800 ընտանիք, ստեղծել են Արծվաշենն ու այն դարձրել Հայաստանի ամենամեծ շեներից մեկը: Իսկ 1994-ի օգոստոսի 6-ին ոչ թե Արծվաշենում, այլ Կրասնոսելսկում նշվեց գյուղի 140-ամյակը: Ո՞նց նշվեց... Տոն լիներ՝ տոնի նման: Մեծ, գեղեցիկ տոն, հոբելյանական տոն: Խրախճանք լիներ՝ խրախճանքի նման: Արծվաշենի հանդերում գինին հեղվեր, թնդային դհոլն ու զուռնան՝ ցնցելով լեռներն ապառաժ: Բայց տոնը տոն չէ, տոնը կարոտի ու ցավի սպիներ է բացում, սպիներ, որ չեն էլ սպիացել ու դժվար թե սպիանան... Ու հոբելյանի հետ նշվում է Արծվաշենի... անկմա՜ն երկրորդ տարին: ... Տոն լիներ՝ տոնի պես... Ցավը մաճկալի մեջքինը լիներ՝ հողին շատ խոնարհվելուց, կարոտը՝ գարանանը լիներ՝ խստաշունչ ձմռանից ձերբազատվելու: Կյանք լիներ ու խնդություն, զրնգուն ծիծաղ լիներ Չորաթանի անձավներում ու սարերում: Տկողնուտում սուփրեն փռած լիներ, հողի բերք ու բարիքը սեղանին, հարազատ օջախի հարազատ փռան անուշաբույր հացը լիներ, ու սարերի քամին բնության խաղքն ու խնդությունը բերեր...

Այս գյուղը կռիվ է տեսել, արյուն է տեսել: Այս գյուղը դեռ խորհրդային կարգերի հաստատումից էլ առաջ հարևան պետության աչքի փուշն է եղել, այդ պետության սրտում մխրճված թերակղզի, իսկ հետո՝ կղզի... Ես չէ, տարեց արծվաշենցիներն են վկայում, թե ինչպես են կանայք իրենց ամուսինների, զավակների ու եղբայրների հետ հավասար մաքառել հարազատ օջախի անառիկության համար, աղի ու քարածխափոշու խառնուրդով լի տոպրակներն ուսերից կախ դուրս եկել թշնամու դեմ-հանդիման: Ու եկել է խաղաղ կյանքի, արարման շրջանն, ու ոչ ոք չի կասկածել, թե կգա մի օր, երբ Արծվաշեն չի լինի, թեպետ տասնա-

մյակներ շարունակ Արծվաշենը շնչահեղձ է եղել... 25 ադրբեջանական գյուղերի միջև, շրջապատված նրանցով ու... այնքան անապահով...»:

Սրտի ցավով, տագնապով գրված տողեր՝ թղթին հանձնված հուզմունքից դողացող մատներով: Այսպես է, որովհետև Արծվաշենի ծնունդ է ինքը՝ հարազատ բնակավայրի կորստյան ցավից մղկտացող և հանուն Արծվաշենի այնքան ձիգեր գործադրած իմ ընկեր, լրագրող Արտակ Ճաղարյանը: Առայժմ մխիթարանքի խոսքեր չգտնելով ասելու նրան, ինքներս փորձենք մխիթարվել իր վերջին տողերով.

«Բայց վերքեր կան, որ երբեք չեն սպիանում, հիշողություն կա, որ երբեք չի խամրում, զայրույթ կա, որ երբեք չի մարում, ժողովուրդ կա, որ երբեք չի ընկճվում: Ու քանի տարի էլ անցնի, ինչպիսի ժամանակներ էլ լինեն, միևնույն է, գալու է պատմության արդար դատաստանի օրը»:

Ես հավատում եմ Արծվաշենի զավակի ցավոտ հավատին, որովհետև յուրաքանչյուր հայի համար Հայաստան աշխարհը մեկն է, ճակատագիրը մեկն է՝ լինի արծվաշենցի, լինի ջավախքցի, լինի բիթլիսցի, թե կիլիկիացի: Եվ Արծվաշենն է մեկ բոլորի համար: Եվ Արծվաշենի հանդեպ սերն է զորավոր, սերը, որ վեր է ածվում բանաստեղծության, երգի, ասքի: Բայց նախևառաջ արծվաշենցի բանաստեղծի շուրթերին...

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐԾՎԱՇԵՆԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Այնքան շատ են, որ խմբերգ են Արծվաշենի աղբյուրները,
Որդիական կանչող ձե՞ռք են Արծվաշենի աղբյուրները:
Ամեն աղբյուր՝ մի-մի համբույր, ամեն համբույր՝ հայրենաբույր:
Եթե խմես՝ քեզ օրհնե՞րգ են Արծվաշենի աղբյուրները:
Ամեն աղբյուր ունի անուն, ամեն անուն՝ մի պատմություն,
Կա Մովսեսի, Արշալույսի, հիմա նաև՝ Հույսի աղբյուր,
Խաչի, Չամչի, Աղավարդի, նաև... հողաչափի աղբյուր -
Ախ, իրարից թանկարժե՞ք են Արծվաշենի աղբյուրները:
Ամեն աղբյուր՝ հողից բխող մի արցունք է խորհրդավոր:
Հայ անուններ՝ Սահակ, Արամ, Շուշան, Մարտիկ, Ազատ, Արզո...
Դուք գնացեք Կառնետի ձոր, Ցից քար, Թեղի և Տանձի ձոր -
Ամեն ինչից իրազե՞կ են Արծվաշենի աղբյուրները:

Արծվաշենը մի կոգի է՝ սահմանից դուրս, ինչպես՝ Արցախ,
Հին Ուտիքի մի որդին է, որին ուտե՞լ կուզեն սաղ-սաղ...
Արծվաշենի ամեն աղբյուր՝ կճախրի, ոնց արծիվ խիզախ -
Կռվողների համար ե՞րգ են Արծվաշենի աղբյուրները:
Եթե կուզեք՝ նաև զե՞նք են Արծվաշենի աղբյուրները...

1990

ՄՇՏԱԳՐԳԻՌ ԱԽՈՐԺԱԿ

Արցախյան պատերազմը, որ Հայաստանի համար սկսվեց սահմանամերձ շրջանների օր-օրի սաստկացող հրետակոծություններով, օսմանյան թուրքերի նորօրյա ժառանգներին առավել հեռահար նպատակների էր մղելու: Ըստ Աբուլֆազ Էլչիբեյների և ուրիշ թուրք քաղաքական գործիչների, երբեմնի ծովից-ծով Հայաստանից մի ափաչափ մնացած այսօրվա հողակտորից բզկտվել-պոկվելու էր նաև Զանգեզուրը, վերցվելու էր Սևանա ծովակն ամբողջությամբ, և, իբրև հայ ժողովրդի միակ ապաստան, մնալու էր մայրաքաղաք Երևանը: Եվ Հայաստանի Հանրապետություն կոչվածը սահմանափակվելու էր Երևանի նահանգով միայն: Անշուշտ, բացվել էր նրանց ախորժակը, որովհետև 1988 թվականի փետրվարի սումգայիթյան ջարդն անպատիժ էր մնացել, հրապարակավ չէր դատապարտվել: Եվ արդեն իսկ նոր քարտեզներ էին գծվել:

«Աֆարիմ, Աբուլֆազ»,- երևի ոգեշնչվել էին ադրբեջանական զորամիավորումների հրամանատարները: Նրանց մտքովն անգամ չէր անցել, թե իրենց «գյավուր» հարևանը կարող է նաև ըմբոստանալ, թե նա կարող է իր հանապազօրյա հացը վաստակող արորի խոփը ձուլել ու վերաձևել ազգապահ սրի: Եվ ինչպե՞ս մտածեին: Ի՞նչ հիմքեր ունեին այդպես մտածելու. չէ՞ որ 1915-ի հայկական աննախադեպ կոտորածները այդպես էլ անպատիժ էին մնացել: Չէ՞ որ քաղաքակիրթ աշխարհի լայն-լայն բացված աչքերի առաջ մորթվել էր նույնքան քաղաքակիրթ ու մարդկությանը այնքան ծառայություններ մատուցած մի ողջ ժողովուրդ:

Պիղատոսյան ժամանակներ, պիղատոսյան վարքագիծ, պիղատոսացած մեծ տերություններ, որոնք միշտ էլ միայն իրենց պատառի տերն են եղել, և միշտ էլ իրենց հայացքները փախցրել են հայի արցունքոտ աչքերից:

Իսկ թուրքը շատ լավ գիտեր, որ մենք ավելի շատ խաչ ենք պաշտել, քան՝ սուր: Այդպես էր բաղադրվել մեր արյունը մեր հավատքով: Մեր սակավ, բայց թանկ արյունը, որ մեր քարուքառա զոհասեղան հողում հեղել ենք այնպես առատորեն.

Քար ու քա՛ռ է,
Տատասկոտ է նա,
Բայց այն ո՞ր հողն է,

Որ իր սեղանին
Այսքա՜ն անհամար
Զոհեր ունենա...

Սումգայիթում հայի արյամբ էր բոտորվելու թուրքական յաթաղանի միայն մի սայրը: Եվ դա նրանց քիչ էր թվալու: Ու նույն յաթաղանի սումգայիթյան կոտորածներից դեռ չբթացած մյուս սայրն ուղղվելու էր Բաքուն քաղաք դարձրած, Բաքուն շենացրած հայության կողմը: Եվ այս քաղաքում նոր կոտորածներ էին սկսվելու, ինչպես դարասկզբին: Այդ նույն յաթաղանն այնուհետև, հայեր հնձելով, հասնելու էր Գանձակ, Կամո ու Գետաշեն, հայաշատ այլ բնակավայրեր: Գազազած ամբոխը ռռնալու էր՝ մահ գյավուրներին: Ու անցնելու էր թաղից թաղ, տնից տուն, ջարդելու էր դուռ-պատուհան, դուռ ու պատուհանից շպրտելու էր օրորոցում անխռով քնած, ճակատը հուլունք-հուլունք քրտինքով զարդարուն հայ մանուկին, հորը սրախողխող էր անելու, դեռատի կանանց ու աղջիկներին պատուհասելու էր անասնական բնազդով: Պատուհասելու էր, որովհետև ինքը թուրք էր, իսկ թուրքի անցած ճամփան միշտ էլ արյան ու կոտորածի է եղել, միշտ էլ ավերի ու թալանի է եղել ու է: «Այստեղով թուրքն է անցել» (Վ. Հյուգո): «Խարդախությունն ու շողոքորթությունը,- ասել է Ամերիկայի ամենահեղինակավոր նախագահներից մեկը՝ Աբրահամ Լինքոլնը.- արյունակից զարմիկներ են»: Մեր երբեմնի «եղբայր-բարեկամի» ՝ ազերու համար է ասված կարծես: Բայց երբ «եղբայրական ընտանիքի» փլուզումից հետո պատռվեց կեղծ բարեկամության դիմակը, ազերին այլևս անկարող եղավ զսպելու իր «անայբուբեն» (Ս. Թորոսյան) բնազդը: Անգամ մտավորական կոչվածը՝ հանձինս ժողովրդական բանաստեղծ, Ադրբեջանական ԽՍՀ ակադեմիայի թղթակից-անդամ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Բախտիար Վահաբզադեի, արյան կոչ արեց՝ ապացուցելով իր ողորմելի լինելը իբրև ակադեմիայի թղթակից-անդամ, իբրև պատմաբան: Ավելորդ չեմ համարում այս գրքի ընթերցողներին հիշեցնել ողորմելի այդ «մարգարեությունը», որից գարշահոտություն է փչում: Այդ «բանաստեղծությունը» նաև ազգային սնապարծության «սքանչելի» գլուխգործոց է, որն առաջին հերթին ապտակ է իրենց՝ «խաչքարը» «խաչդաշ» դարձնող ազերի ժողովրդին ու գիտնական հանգաթուխին: Ահա այդ բանաստեղծությունն ամբողջությամբ:

ԲԱԽՏԻԱՐ ՎԱՀԱԲԶԱԴԵ

ՀՈՂԻՑ ԲԱԺԻՆ ՉԵՆ ՏԱ

Մոտիկ ենք եղել հնում. շատ մոտիկ,
Այնքան մոտիկ, որ մեր սեգ լեռների
Շուքն ընկել է ձեր լեռների վրա:
Եվ հիմա... հիմա
Ես մեր անցյալին ավաղ եմ ասում.
Բախչու նվագից խաբված էինք մենք,
Դուք՝ մեր Ջաբբարի երգից արտասվում:
Բարեկամ էին մեր պապերն, իրոք,
Եվ չէին ասում այդ մասին մի բան.
Իսկ մենք, իրար դեմ ատամ սրելով,
Ճառում ենք անվերջ «բարեկամաբար»:
Սա ի՞նչ աղուերգ, ծես է դառնալի,
Ո՞ր սատանան է խառնկում կրկին:
Ասում են՝ դրսից մեկը, երևի,
Մատը դրել է վաղեմի վերքին:
Քեզ ինչպե՞ս ընկեր, եղբայր անվանեմ,
Որ ինձնից հող ես պահանջում հիմա:
Քանի՞ անգամ եմ աչքերդ հանել՝
Հողիս վրա աչք գցելու համար:
Միթե՞ դա երբեք դաս չի լինելու...
Թե՞ ավել արյուն ունես հեղելու...
Եղբայր ես ասում դու ինձ արտաքուստ
Եվ ասեղի պես ծակծկում թաքուն:
Ես միշտ եղել եմ պարզ, հավատարիմ,
Իսկ դու՝ խորամանկ, կավատ ահավոր:
Թե թշնամի ես՝ մի խորամանկիր:
Քեզ հետ կերած իմ աղուհացը,
Քիրվայությունս հարամ լինի քեզ,
Ե՞րբ քոնը դարձավ Ղարաբաղն իմ վեր:
Նրա անունն իսկ թող դա վկայի:
Հողը կամավոր ոչ ոքի չեն տա.
Արյամբ են կնքում ու զոռով առնում:
Դու աչք ես տնկել և Նախիջևանի՞ն:
Գուցե Թավրի՞զն էլ, Արաբն էլ քոնն են:
Այն երկրները, ուր կա Վարդան անուն,

Գուցե թե նույնպես քե՞զ են պատկանում...
Իմ մեղքը ո՞րն է, մարեմ փուշի պես,
Որ ցանվել ես ողջ աշխարհում այդպես:
Իմ հոսող առվին ջրբանդ մի դարձիր,
Դա արյան կռիվ, հողի կռիվ է:
Եվ ամենևին արծիվ մի կարծիր
Քո բնում ապրող ճնճղուկներին էլ,
Իմ նախնիներից՝ ձայնն առ ձայնն,
Իմ փառքն ու պատիվն են այս հողում հանգչում:
Չե՞ս խնդա վրաս,
Թե ապուպապիս հողից բաժին տամ,
Չխնդաս՝ պապս վրաս կխնդա
Ու ձեռ կառնի ինձ:
Դու ինձ միամիտ քնած չկարծես,
Հո պարտական չէ՞ Բաբեկը Դավթին:
Չեռ առնելով ինձ, դու լավ իմացիր,
Կտրում ես ճյուղն այն, որին նստած ես:
Տեսնում եմ՝ աչքդ արյուն է կոխել.-
Իմ տան բաղձանքով դու քեզ չտանջես:
Այսօր ինձանից հող ես պահանջում,
Վաղը նամուսս պիտի պահանջես,
Իսաբուլադիս գլգլանքները.
Ջաբբարի, Սեյիդի, խանի երգերից...
Բաբեկի դամբանն ինչպե՞ս գյադին տամ:
Գազան են կտրել գյադեքդ դարձյալ,
Ինձնից գանգատ են գրում վերևին,
Ինչքան տվել եմ, քիչ է, երևի,
Պահանջում են, որ էլի բաժին տամ...

«Ագիտատոր», Բաքու, N5, 1988 թ.

Ասեմ, որ սա ժամանակին անպատասխան չմնաց: Տասնյակ հայ բանաստեղծներ ապտակ հասցրին ժողովրդական կոչված Բախիարին ու նրա նման բազմաթիվ գրչակիցների: Անհրաժեշտ եմ համարում այս գրքի էջերում նույնությամբ զետեղել նաև մեր լավագույն բանաստեղծներից մեկի՝ Իգնատ Մամյանի չափածո պատասխանը.

ԲԱԽՏԻԱՐ ՎԱՀԱԲԶԱԴԵԻՆ՝ ի պատասխան նրա՝ «Ագիտատոր», Բաքու, N5, 1988 թ. տպագրված «Հողից բաժին չեն տա» զազրախոսության

ԻԳՆԱՏ ՄԱՄՅԱՆ

Ես՝ խաղաղ ազգի բարեպաշտ զավակ,
Ես՝ մի բանաստեղծ Նարեկա ցեղից,
Չեմ կրկնելու բառերդ անարգ,
Քեզ չեմ դիմելու խոսքերով քո պիղծ:
Ես քեզ չեմ ատում: Ես խղճում եմ քեզ:
Որ թեև պոետ՝ «լույսով ներշնչուն».
Բայց քո շուրթերից երգի փոխարեն
Դահճային արնոտ բառեր են հնչում:
Սպառնում ես ինձ՝ արյուն կհորդի...
Հավատում եմ ձեզ, ու պետք չէ երդում.
Դա հին արհեստն է քո ժողովրդի,
Որ վերհիշեցիր դու Սումգայիթում:
Կարող ես, գիտեմ, իմ հին «բարեկամ»:
Պետք չի խոսքերդ երդումով օծել.
Տաճա՞ր ես շինում, որ չհավատամ,
Մատյա՞ն ես ծաղկում՝ ուժիդ կասկածեմ...
Ես քեզ խղճում եմ, որ ատում ես ինձ,
Այդպես խղճում են մարդիկ խելացի
Հոգեհիվանդի մռայլ վանդակից
Իրենց հայհոյող խենթ արարածին...
... Քնած բնակիչ նիրհուն դաշտերի,
Դու ի՞նչ լեռներ ես վկայաբերում,
Որ իբր հայոց ջինջ գագաթները
Ապաստանել են իրենց ստվերում:
Դու լեռներ չունես հողմաշունչ ու սեգ,
Քոնը - շոգ հովիտն ու ծովն են աղի,
Քո ագռավները չեն հասնի երբեք
Արծվալեռներին հայոց Արցախի:
Քո ագռավները՝ կռինչով անհագ
Թառելով իմ սուրբ խաչքար ու վանքին՝
Քո թշնամանքն են հավաստում ահա
Եվ նենգությունը մեծ ստահակի...
Ինչքան էլ, սակայն, թույնը շառաչի
Ինչքան էլ ոռնա ոխդ արնաբաշ,
Իմ Գանձասարը չի դառնա մեջիդ,
Իմ սուրբ խաչքարը չի դառնա խաչդաշ:
ԵՍ քեզ չեմ ատում: Քեզ խղճում եմ լոկ,
Որ անզոր եղել ի դեմ պատմության

Ու մեղքերի մեջ այսպես թաղվելով՝
Ուրիշի հողին կոչում ես վաթան:
Ճշմարտությունից դեմքդ մի թեքիր,
Մի ամբաստանիր կրքերով անսանձ.
Ոչ շիրիմն է պետք ինձ քո Բաբեկի,
Ոչ քո նամուսի լաթը ճմրթված:
Ես իմ երկիրն եմ ուզում լեռնաշեն,
Իմ հայրենիքը-դարերում անթիվ.
Դու քո սև թաթը ետ պիտի քաշես
Նրա ալեկոծ բախտի ճակատից...
... Ու թե այնտեղ է ձայնը պապիդ,
Ապա դու նրան՝ նախորդին քո թանկ,
Պիտի անվանես թալանի ճանփին
Ալլահի կամքով ընկած ասպատակ:

***

Թուրք-ազերին Հայաստանի հանդեպ իր ոտնձգություններն սկսեց... անասնագողությամբ, հովիվների ու շինական մարդկանց գերեվարելով: Երբեմնի «անոխ» հարևանն, այսինքն, միշտ է դիմել նման ստորության, միշտ է գողացել ու թալանել:

Եվ քիչ ժամանակ էր պետք, որպեսզի ջղաձգվեր ու վերստին փորձեր... հո՞ղ գողանալ: 1990-ի վերջերից բացահայտ գործողություններ սկսեց մեր սահմանամերձ շրջանների նկատմամբ: Մեր ժողովուրդն սկսեց լրջորեն անհանգստանալ. վտանգն արդեն ակնհայտ ու շատ մոտիկ էր: Առավել տագնապալի էր վիճակը Երասխավանում, որից այն կողմ հարևան հանրապետությունը զգալի ուժեր էր կենտրոնացրել և, փաստորեն, դուրս եկել բացահայտ առճակատման: Նրան գուցե թվում էր, թե ամեն ինչ շատ հեշտ է լինելու, և իր առաջին զոհը դառնալու է Երասխավանը: Բայց այստեղ էր, ուր թուրքը փշրված էր տեսնելու իր երազանքները: 1991 թվականի հունավարի 13-18-ը տեղի էր ունենալու Երասխավանի հերոսական ճակատամարտը՝ ղեկավարությամբ հայոց երկրի պաշտպանության ներկա նախարար Վազգեն Սարգսյանի: Այստեղ էր, որ իրենց անմահության ուղին էին բռնելու Մովսես Գորգիսյանը, Երվանդ Սաղումյանը, մեր անկախությանն ու ազատությանն իրենց կյանքը զոհաբերած այլ քաջազուններ: Եվ հենց հունվարյան այդ նույն օրերին վերստին եռալու էր Ազատության հրապարակը: Ժողովուրդը պահանջելու էր՝ զենք տվեք, թուրքը նորից է գազազել, զենք տվեք...

Ազգային բանակ դեռ չունեինք, չէինք հասցրել ունենալ: Նո-

ռորյա ենիչերիների դեմն առնելու միակ ճանապարհը կամավորական զորամիավորումների ստեղծումն էր: Դա էր փրկության ելքը մեր անկախության նախնական փուլում: Եվ մեկը մյուսի ետևից ծնվեցին «Տիգրան Մեծն» ու «Գարեգին Նժդեհը», «Արաբոն» ու «Նիկոլ Դումանը», «Շանթն» ու «Սասունցի Դավիթը», այլ զորամիավորումներ: Դյուցազնական այս միավորումներին էլ հետագայում բախտ էր վիճակվելու դառնալ հայոց ազգային բանակի կորիզն ու հիմքը: Բանակ, որը ծնկի էր բերելու հակառակորդին: Բանակ, որի փառքը տարածվելու էր աշխարհով մեկ և համարվելու էր Կովկասում ամենամարտունակը: Իսկ մեզ նախնառաջ դա էր պետք, որովհետև՝ «Ուժն է ծնում իրավունք»: Մեզ համար՝ նախնառաջ ապրելու իրավունք, չմորթվելու իրավունք, եղեռնազարկ չլինելու իրավունք... Մեր ուժ չունենալն է եղել պատճառը, որ ժամանակին Պոլսում գերմանական դեսպանը հեգնել է. «Թուրքերը հայերին թողեցին միայն Սևանա լիճը, ուր նրանք կարող են լողանալ, բայց չթողեցին բավականաչափ տեղ՝ ջրից դուրս գալուց հետո չորանալու համար»:

1992 թվականի հուլիսին, երբ դարաբաղյան ռազմաճակատներից մեկում՝ Մարտակերտում, զգալի էր ազերիների կտրուկ առաջխաղացումը, Էլչիբեյն սկսեց հրձվալի երազներ փայփայել՝ մոտակա օրերին լողանալ Սևանա լճում, իշխան ու սիգ վայելել... Նախանձելի՜ ախորժակ: Իսկ նրանից առաջ, երբ դեռևս գոյություն ուներ ԽՍՀՄ կոչված կայսրությունը, Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղար Աբդուռահման Վեզիրովը մոսկովյան կենտրոնական հեռուստատեսությամբ ունեցած ելույթում ծաղրել էր նույն Մոսկվայում հացադուլի նստած հայ մտավորականներին. «Մեր հայ բարեկամները մոռացել են, որ հողն արյունով են վերցնում, ոչ թե հացադուլի նստելով...»: Որքան էլ արյան մղող, այնուամենայնիվ, ճիշտ էր Վահաբզադեի արժանավոր խոհակիցը. հողը արյամբ են վերցնում: Բայց ո՞ր հողը, բայց ե՞րբ: Նույնիսկ 20-րդ դարավերջի՞ն: Ա՞յն հողը, որ դարեր շարունակ արյան հեղեղնե՞ր է տեսել, որ արյա՞մբ է սնուցել իր ամեն ծառն ու թուփը:

Աչքերն արյունով լցված հարևանի, նրա հեռահար ծրագրերի, նպատակների գերեզմանը փորելու համար մեր հանրապետության ղեկավարների ուշադրությունը նախնառաջ պիտի բևեռվեր կանոնավոր բանակ կերտելու խնդրին: Եվ ստեղծվեց այդպիսին, որի զորամիավորումներից մեկն էլ Կիրովականի N մոտոհրաձգային-դեսանտային գունդն էր՝ Արծվաշենի 12 փառաբանված հերոսների ոգու կոփման դպրոցը:

ԱՌԱՅԺՄ ՆՐԱՆՑ ԱՌԱՎԵԼՈՒԹՅԱՄԲ

Կիրովականի մոտոհրաձգային գնդի ստեղծումը հիմնականում պայմանավորված էր հանրապետության հյուսիս-արևելյան շրջանների սահմանամերձ գյուղերի անվտանգությունն ապահովելու նպատակով: Թշնամին հրետանային հեռահար հարվածների տակ էր առել Տավուշի շրջանի Մովսես և Այգեպար, Ներքին և Վերին Կարմիրաղբյուր, Չինարի, Այգեձոր, Պառավաքար և այլ գյուղեր: Այս ուղղությամբ թշնամու աշխուժացման խթանը Մարտակերտում ազերիների ունեցած ժամանակավոր հաջողություններն էին: Եթե Մովսես գյուղի գլխին կրակ էին թափում Ղարադաշ սարի գլխին բնավորված գիշանգղները, ապա շրջակա շեների բնակչության համար իսկական պատուհաս էին դարձել Ներքին Կարմիրաղբյուր և Այգեպար գյուղերի միջև ընկած՝ ռազմավարական մեծ նշանակություն ունեցող բարձունքները: Ազերիթուրքը բավականին երկար ժամանակ տիրում էր դրանց և մեծ ավերածություններ պատճառում հայկական շեներին: Ասել, թե մեր կողմից այդ բարձունքները գրավելու փորձեր չեն արվել, ասել, թե երկրապահ ջոկատները ջանքեր չեն գործադրել այդ ուղղությամբ՝ անստույգ կլինի: Բայց թշնամին շատ ամուր էր կառչել, և մերձակա հարթ տարածությունները, դաշտերն ու արտերը նրա համար առավել ապահով էին՝ ամեն ինչ երևում էր, ինչպես ափի մեջ: Թշնամու համար այս նպաստավոր հանգամանքներին գումարվում էր և այն, որ ինքը զինված էր մինչև ատամները, իսկ մեր երկրապահները դեռևս շարունակում էին ապավինել ինքնաշեն զենքերին, որսորդական հրացաններին, կարկտահար հրանոթներին:

ԿԻՐՈՎԱԿԱՆԻՑ ՏՂԵՐՔԸ ՀԱՍԱՆ...

Վերին Կարմիրաղբյուրից դեպի Բերդ իջնող ամենակարճ ճանապարհը անտառամիջյան նեղլիկ, արահետանման այն խճուղին է, որով իջնելու դեպքում պիտի վտանգն աչքիդ առաջ ունենաս: Նեղլիկ, ծուռումուռ, այսուայնտեղ քանդված, դարուփոսերով հարուստ ճանապարհն այս վիճակում է քիչ օգտագործվելու պատճառով: Գյուղի մարդիկ՝ վերին Կարմիրաղբյուրցիները, առիթից-առիթ են դիմում այս խճուղուն, հատկապես դաշտային աշխատանքների ժամանակ՝ վարուցանք, խոտհունձ, բերքահավաք:

Ինձ համար անտառամիջյան այս ճանապարհով իջնելն այնքանով էր հետաքրքիր, որ անպայմանորեն ուզում էի տեսած լինել նախ Վոլոդյա Դարբինյանի հիշատակին կառուցվելիք աղբյուրի տեղը՝ Նաֆլարի ձորը՝ ուր հայրը՝ Սարգիս Դարբինյանն արդեն խողովակներով ջուր էր հասցրել, մտովի նախագծել անելիքը: Այդ վայրը ծաղկավետ մի բացատ էր, խաղաղ մի անկյուն՝ մարդկանցից, ժխորից հեռու: Հիշում եմ՝ հունիսյան մեր այցի օրը, երբ գնացել էինք տեսնելու ջոկատի տեղակայման վայրը, Սարգիսն ասաց.

- Սա էլ մեզ հատկացված հանդամասն է, հողակտորը, բայց ես թուլացած կռներով ինչպե՞ս ենք մշակելու, չգիտեմ...

Ճանապարհն իջավ ձորն ու նորից թեքվեց դեպի աջ: Մեզ ուղեկցող ծնողների աչքերն սկսեցին խոնավանալ:

- Մի քանի րոպեից կհասնենք Չինարուտ,- ասաց Արամայիս Միքայելյանը՝ իմ վաղեմի բարեկամն ու զարմանալի շռայլ հոգու տեր մարդը: Ինքն էլ էր հուզված, որովհետև այս տեղանքում նաև իր հերոս զավակի՝ Ռ գնդի բուժակ Դավթի ոտնահետքերը կային, ձեռագիրը կար չինարի ծառի վրա:

Քիչ անց զառիթափն ի վեր մագլցող «վիլիսը» փնչոցով կանգ առավ: Հեռուստալրագրող ընկերներս՝ Վադիմը և Ռոմիկը առաջինն իջան մեքենայից. նրանք այդ օրը «Չինուժի» համար ահագին նյութեր ունեին պատրաստելու:

Չինարուտում, ճանապարհից դեպի ձախ, երկինք էր խոյանում հսկա մի չինարենի: Ահռելի հաստությամբ բնի վրա փորագրություններ կային. «Դ», «Վ», «Ա», «Մ» ... Հետո ես պիտի իմանայի, որ այդ փորագրություններն արված էին Փամբակից Տավուշ եկած ու Չինարուտում տեղակայված Կիրովականի դեսանտային գնդի տղաների ձեռքերով: Եկել էին հետևակային մարտական մեքենաներով: Եկել էին լռեցնելու թշնամու կրակակետերը: Եկել էին ապացուցելու, որ իրենք ընտրյալներ են, ընտրյալներից ընտրյալներ, որ իրենց՝ դեսանտայինների առաջ խաղ չունի խաղալու ազերին, որքան էլ նրանց ձեռքին գտնվող բարձունքները թվային անառիկ:

Դեսանտայինների ուժն ու զորությունը լավ գիտեին մեր ռազմական հրամանատարությունը, նույն ինքը՝ գնդի հրամանատար Ալեքսանդր Թազագռյանը, սահմանապահ զորքերի ղեկավարությունը: Դեսանտային գնդում պատահական մարդիկ չեն ծառայում: Զինկոմիսարիատները առանձնահատուկ բծախնդրությամբ են նրանց ընտրում: Պատերազմական գործողությունների ժամանակ դեսանտայիններն այն գլխավոր ուժն են, որ գործի են դրվում ամենավճռորոշ, ամենալարված ու վտանգավոր պահերին:

Ես, իբրև ականատես չէ, որ պիտի պատմեմ վերոհիշյալ բարձունքների համար մղված ահեղ կռիվների մասին: Բայց գիտեմ, որ այստեղ հողն այրվել է թշնամու ոտքերի տակ, որ Լոռի-Փամբակում հատուկ պատրաստվածություն անցած դեսանտայինները հրաշքներ են գործել, իրենց խոսքերով ասած՝ թուրքին ցույց տվել, թե որտեղ են ձմեռում խեցգետինները: Օրեր տևած մարտերի ընթացքում, ոսոխը, զգալի կորուստներ կրելով, նահանջում է դեպի մոտակա ադրբեջանական Այբալու գյուղը: Նահանջում է՝ ջարդված, խուճապահար և ատամները կրճտացնում հեռվից: Իսկ այգեպարցիները, որ այնպես հոգնել էին թշնամու հրետակոծություններից, թշնամու շունչն այդքան մոտիկից զգալուց, բարձունքների գրավումից հետո լեգենդանման պատմություններ էին հյուսելու դեսանտային գնդի տղաների մասին: Իմ մեջ տպավորվել է նրանցից մեկի խոսքը, որն այս պարագայում գեղեցկացնելու կարիքը չունի.

- Ազերին, ամիսներ անընդմեջ, կրակ էր, որ թափում էր մեր, հարևան գյուղերի վրա: Ոչ հող մշակել էր լինում, ոչ հովվություն անել, ոչ հանգիստ քնել: Մեր ոսկեբեր հողը մնում էր անմշակ հատկապ-ես սահմանին հարող հանդամասերում: Զոհերի, անմեղ զոհերի մասին էլ չասեմ, այդպիսիք շատ ունեցանք: Մտածում էինք՝ ե՞րբ վերջ կլինի, որ ազատ շունչ քաշենք... Մի օր էլ, բեմպեները հանդացնելով, եկան Կիրովականի տղաները: Տեսնել էր պետք, թե բձի տղերքն ի՞նչ արին, ի՞նչ մի շան օր գցել էր, որ գցին թուրքին... Հիմա նայում ենք մեր դաշտերին, ազատագրված բարձունքներին, հոգիներս փառավորվում է: Հե՞յ, Աստված, հայի Աստվածը չի մեռել, որովհետև այսօր էլ հայ

մայրը շարունակում է կորյուններ ծնել: Ազգի փրկության համար կյանքները զոհաբերելու պատրաստ կորյուններ...

Ասողը ծերունազարդ Խաչիկ քեռին էր:

ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՉԻՆԱՐՈՒՏ

Ծառասպանության վերջին տարիներին զարմանալիորեն խիտ, թավ ու անվնաս են մնացել Տավուշի անտառները: Տասնյակ հեկտարներով դեռ այսօր էլ պահպանվում է նրանց կուսական անաղարտությունը, այսօր էլ այդ անտառները լիքն են կենդանիներով: Եվ այնքան ապահով է զգում իրեն գյուղացին, որ դարձյալ օրերով անտառ է թողնում իր անասունը՝ կով, հորթ, այծ, խոզ... Գողության դեպքեր էլ են, իհարկե, լինում երբեմն, բայց սա արդեն այն գողությունը չէ, երբ ադրբեջանցիները հովիվներին սպանելով, նախիրներ ու հոտեր էին քշում դեպի իրենց սահմանը:

Չինարուտ կոչված անտառահատվածը բնության սիրահարներին կանչում է նաև իր սառնորակ աղբյուրներով: Թերևս Չինարուտին այնքան մոտ գտնվող այդ աղբյուրներից մեկն էր պատճառը, որ Փամբակից հատուկ առաքելությամբ եկած տղաներին ստիպեց հանգրվանել այստեղ՝ հայոց բնաշխարհի այս հրաշք անկյունում, որտեղից և սկիզբ էր առնելու նրանց փառքի ճանապարհը, հերոսացման ու անմահության ուղին:

Աղբյուրից, չինարի ծառից մի քանի հարյուր մետր դեպի հյուսիս՝ ընդարձակ մի բացատ կա: Բացատն ընկնում է ավարտվող ձորի ձախակողմյան պռնկին: Տղաներն այստեղն են ընտրել ու իրենց ձեռքերով հարթել խորդուբորդությունները, տնակ դրել, հաստատել իրենց ժամանակավոր կացարանը: Բացատից քիչ այն կողմ մարտական մեքենաների կայանատեղին է՝ երկկողմյա ձորալանջերով պատսպարված: Յուրաքանչյուր մեքենայի համար հատուկ խորշ է փորված, խորշերն այսօր էլ կարող են ծառայել իրենց բուն նպատակին... Դեպի կայանատեղի տանող խձոտ ճանապարհը մաշվել է մարտական մեքենաների հաճախակի ելումուտից: Չէ՞ որ այստեղ բույն դրած արծիվները չէին եկել նստակյաց կյանք վարելու, չէին եկել խրախճանելու որպես «մանիկյուր տղերք»: Նրանք եկել էին ցանկացած պահի ստացված հրահանգի դեպքում սուրալու անհրաժեշտ ուղղությամբ, հուր ու կրակ թափելու ոսոխի գլխին: Իսկ խաղաղ պահերին մեկ-մեկ բարձրանալու էին Վերին Կարմիրաղբյուր և ջոկատի հրամանատար Վոլոդյա Դարբինյանի հայրական հարկի տակ նրա ու իր ծնողների ձեռքերով պատրաստած գինին էին համտեսելու, մի քիչ էլ գինովանալու էին ու ետ՝ հանդյունով իջնելու էին դեպի ձորը, դեպի Չինարուտ: Դեսանտայիններ էին,

ասել է, թե անհրաժեշտաբար նաև մարզվելու էին: Տավուշի այգաբացները դիմավորելու էին սառնորակ աղբյուրների ջրերում լողանալով, դրախտային անտառի արահետներում վազել-մարզվելով, օր-օրի կռփվել-առնականանալով: Գնդի տղաներից յուրաքանչյուրը ներքին համոզմունք ուներ, որ իր անելիքը չի ավարտվելու Տավուշով, Այգեպարն ու հարակից գյուղերն ավերող, գիշանգղի բույն դարձած, բարձունքների նվաճումով: Նրանք գիտեին, որ իրենք են հայոց ազգային բանակի առաջին զինվորները: Իսկ առաջինները միշտ էլ առաջինն են իրենց վրա վերցնում ճակատագրի ծանր հարվածները:

...եվ այս տղաները կատարեցին հրամանը Ծիշտ ժամանակին և անթերի:

... ցամք վրեմ վր ընդրտնդ է ղեմոցդ ոկսոմոր մոոոիմպրտ ու նգկդ

ԴԵՊԻ ԱՐԾՎԱՇԵՆ՝ ԴԵՊԻ... ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Այնտեղ է միայն սխրանքն սկսվում, երբ վերջանում է ամեն մի հնար...

Ազերիների հրահրած բախումներն օր-օրի ավելի սաստկանում էին: 1992 թվականի ամռանը, երբ արցախյան ռազմաճակատներում, մասնավորապես Մարտակերտում հրո ճարակ էին դառնում Հաթերքը, Չափարը, Կիչանը, Չլդրանը, տասնյակ այլ գյուղեր, Հայաստանի սահմանամերձ շրջաններում նույնպես կատաղի հարձակումները հաճախակիացան: Էլչիբեյին թվում էր, թե եկել է իր գահակալության աստեղային ժամը, թե իր «ասկյարների», իր օմոնականների դեմն այլևս չի առնի և ոչ մի պատվար. նա մոռացել էր, որ 1918 թվականին նույնպես թուրքերը ունեցել էին հաջողություններ, բայց Սարդարապատում սարսափահար աղերսել են ալլահի օգնությունը՝ դեմ առնելով հայոց անպարտ ոգու պարիսպներին: Աղերսել են ոչ միայն ալլահին. «Եղբայր հայեր, խնայեցե՛ք մեզ, մենք հայկական ջարդերին չենք մասնակցել...» Եվ փախել են Սարդարապատից գլխովին ցախջախված: Սա էր մոռացել Էլչիբեյը: Մոռացել էր Բաշ-Աբարանը, Ղարաքիլիսան: Նա իր հիվանդոտ երևակայությամբ... զովանում էր Սևանա զուլալ ջրերում: Հիվանդ երևակայության արդյունք էր նաև Կարմիրի շրջանով դեպի Գեղամա լեռնաշխարհի գեղեցկուհին բերող ամենակարճ ճանապարհի նախագիծը...

Երևակայությունը՝ երևակայություն, բայցև իրողություն էր ռազմական ուժի մղումն ու կենտրոնացումը այս ուղղությամբ:

Միևնույն ժամանակ, ինչպես միշտ, աչալուրջ ու զգոն էին նաև մեր ռազմական ղեկավարները. օրըստօրե առնականացող հայոց ազգային բանակը, տարբեր մարտերում թրծված երկրապահները արդեն վաղուց ի զորու էին պատնեշելու թշնամու առաջ խաղացող ուժերին:

Նույն 1992 թվականի հուլիսի կեսերին, Տավուշում գերազանց կատարելով իրենց սրբազան պարտքը, Կիրովականի գնդի դեսանտայինները տեղափոխվում են Կրասնոսելսկի շրջանի Վահան գյուղ: Այս գյուղը և Արծվաշենը, ըստ ազերիների, իրենց հերթական զոհերն էին լինելու: Թուրքական Մութուդարա (ի՞նչ մութ անվանում) գյուղը սեպի նման խրված էր Արծվաշենի ու Վահանի միջև՝ իսկական մի որջ, պատուհասի մի բույն, որ օրե-

րի ընթացքում հողումոխիր էր դառնալու՝ շնորհիվ Կիրովականից-Տավուշից եկած քաջազունների:

Մինչդեռ տղաները պաշտպանում էին Վահանի դիրքերն ու մերթ ընդ մերթ արծվային գրոհներով ոչնչացնում մահ ու ավեր սփռող թշնամական կրակակետերը, Արծվաշենի վիճակը շարունակում էր տագնապալի դառնալ: Տարբեր շրջաններից շենը պաշտպանելու եկած կամավորականները, երկրապահ ջոկատների անձնուրաց զինյալները դժվարին մաքառումներով փորձում էին ետ մղել գազազած ոսոխին: Բայց ինչպե՞ս, երբ հստակորեն տեսանելի էր նրանց ուժերի գերակշռությունը այդ հատվածում՝ շուրջ 800 օմոնականներ, հետևակի 28 մարտական մեքենա, շուրջ 30 տանկ: Իսկ Արծվաշենը՝ կդզիուցած, միայնակ, անհուսալի: Միշտ է այսպես եղել՝ վտանգված, անապահով: Բայց մարտնչել է Արծվաշենն ու... հաղթել:

Թերթենք պատմության մի երկու էջ, որոնք ժամանակների ու գալիք սերունդների հիշողությանն է հանձնել Սամվել Վարդանյանը: (Ես այն բառացիորեն քաղում եմ Արամայիս Սահակյանի «Խաչ և սուր» գրքից):

«Ո՞վ էր նա՝ արժանահիշատակ հայ քաջորդին, Հին Բաշքենդի ինքնապաշտպանության հերոսը՝ Միքայել Աստվածատրյանը:

1905 թվականին՝ գյուղի շրջակա աուլների և քոչատեղերի հազարավոր թուրք-թաթարական ասպատակիչներ, վայրի խուժանի մուսուլմանական բնազդով պաշարել էին Բաշքենդը, որի ինքնապաշտպանության կազմակերպիչը Միքայել Աստվածատրյանն էր, և նրա առաջին օգնականը՝ գյուղի ռազմագիտակ և զինյալ քահանա, արժանահիշատակ տեր Վահանը: Ինքնապաշտպանությունը հմտորեն էին կազմակերպում ցարական բանակում ծառայած գյուղի բնակիչները՝ Ղալուսց Ղուլին, Ուսուբ Չոբանյանը, Գաբրիել Գաբրիելյանը, Խշտրանց (Գալստյան) Սարգիսը, Սահակ Նադիրյանը, Արզուման Գյուլումյանը և ուրիշներ:

Միքայելի և տեր Վահանի ջանքերով որոշ քանակությամբ զենք էր ձեռք բերվել Կարսից: Պատրաստել էին նաև ինքնաշեն թնդանոթ: Գյուղի չորս բլուրը երեք շրջանով դիրքեր էին փորվում: Առաջին դիրքերում երիտասարդ և հմուտ նշանառու հրաձիգներն էին: Այնուհետև հաջորդում էին միջին տարիքի և տարեց զինյալ պաշտպանները: Իսկ ծերունիներն ու կանայք կազմ ու պատրաստ էին ոսոխին դիմագրավելու ներխուժելու ժամանակ: Զենքը հիմնականում կռվողների ձեռքում էր, իսկ գյուղում մնացածները՝ ծերունիների և կանանց գլխավորությամբ «զինված» էին եղաններով, բահերով, գերանդիներով, մոխիրով ու աղով (տներ ներխուժելու դեպքում թուրքերի աչքերը մոխիր և աղ շաղ տալու և մինչև վերջ պայքարելու նպատակով):

Ծանր էր առաջին հարձակումը: Սև սելավի պես թուրք-թաթարները ձիավոր, հետիոտն և սայլերով դեպի Արծվաշեն էին թափվում: Ահավո՜ր գրոհներ էին: Միքայել Աստվածատրյանը հրամայեց խնայել փամփուշտները և թշնամու դեմ կրակ տեղալ միայն մոտ 56-60 քայլաչափ մոտենալու դեպքում, որպեսզի ավելորդ փամփուշտ չկորչի:

Թուրքերը վայրի աղաղակներով, «հալլա՜հ» ծղրտալով չորս կողմից գրոհի նետվեցին մեծաքանակ ուժերով: Ինքնապաշտպանությունը սառնասրտորեն էին ղեկավարում Միքայելը, Ֆիդայի Հայկը և տեր Վահանը՝ «Պեծուրակ, կայծակնացայտ քեշիշը», ինչպես թուրքերն էին նրան հորջորջում:

Հայկական դիրքերից մեկեն որոտացին հրացանները, և թնդանոթի կրակոցի դղրդյունը խլացրեց հարձակվողներին ու խուճապի մատնեց: Թշնամու անկանոն խուճապահար փախուստը նրանցից ավելի զոհեր խլեց: Հարյուրավոր թուրքական լեշեր փռվեցին Հին Բաշքենդի մատույցներում: Այդ օրը բաշքենդցիներն ութ որդիներից զրկվեցին:

Թուրքերն ավելի էին գազազել: Ծարավ էին արյան վրեժի, նոր արյունահեղության: Սպասվում էր ավելի մեծաքանակ խուժանի նոր հարձակումը, որը չուշացավ:

Գյուղը զենքի և օժանդակ մարդկային օգնության խիստ կարիք էր զգում: Միքայել Աստվածատրյանի և տեր Վահանի խորհրդով յոթ զինյալ բաշքենդցիներ սարերով գաղտնի ճանապարհ են ընկնում Իջևանի Սևքար գյուղ՝ Սևքարեցի Սաքոյից օգնություն խնդրելու: Սևքարեցի Սաքոն ընդունում է Հին Բաշքենդից եկած ֆիդայիներին, սակայն հանձն չի առնում աջակցել նրանց.

- Հայաստանը ամբողջովին ծանր ու անհուսալի վիճակի մեջ է: Դուք պիտի լինեք ձեր հողի և գլխի տերը,- ասում է նա:

Հին Բաշքենդցի յոթ քաջ ֆիդայիների շնորհիվ կասեցվեց թուրք-թաթարների հարձակումը Ճամբարակի ու Ղրղիի վրա: Նրանք գիշեր ու զոր հերթապահում էին սարերում, վտանգի ու տագնապի դեպքերում իրենց նշանառու կրակոցներով «ջհանդամն» էին ուղարկում հայոց շեների վրա հարձակվող բաշիբոզուկների անկանոն խմբերին:

Հին բաշքենդցի յոթ քաջ ֆիդայիներին Միքայելը հրաման էր տվել մնալ Ճամբարակում և պահել այդ գյուղերը, իսկ թուրքերի հարձակման դեպքում, թիկունքից Շնողի ձորով հարձակման անցնել թուրքերի վրա:

Աշնանամուտին թուրքերն ավելի մեծաքանակ ուժերով պաշարում են Բաշքենդը: Ֆիդայապետ Հայկը թնդանոթը տեղավորում է գյուղի արևմտյան մասում և թնդանոթաձիգ Գաբիրել Գաբրիելյանին ու նրա օգնական Պավլի Գյուլումյանին հրամայում ազդանշանի դեպքում գործի գցել թնդանոթը:

Ինքնապաշտպանությունն այս անգամ կատարվում է ավելի կազմակերպված, ստույգ հաշվարկներով:

Թուրքերն ավելի ու ավելի են մոտենում գյուղի մատույցներին: Եվ ահա ազդանշանից հետո որոտում է թնդանոթը և դիրքերից հրացաններով միանգամից կրակ է մաղվում չորս կողմից հարձակված թշնամիների վրա:

Այդ ժամանակ, պայմանավորվածության համաձայն, թուրքերի թիկունքից հարձակվում են Սահակ Նադիրյանն ու Արզուման Գյուլումյանը՝ իրենց հինգ ընկերներով:

- Ֆիդայինե՜ր... Եկա՜ն, ֆիդայինե՜ր... Եկա՜ն,- ուրախ բացականչում են բաշքենդցիները:

- Ֆիդայինե՜ր...- Ֆիդայինե՜ր...,- խուճապահար աղաղակում են թուրքերը և ընկնում երկկողմանի կրակի տակ:

Թուրքերի երկրորդ հարձակման ժամանակ հայերից ոչ մի զոհ չի լինում: Վիրավորվում է միայն թնդանոթաձիգ Գաբրիել Գաբրիելյանը՝ կորցնելով մի աչքը:

Արծվաշենին օգնության է հասնում նաև ճամբարակցի երիտասարդների զինված խումբը՝ գլխովին ջախջախելով անկանոն խուճապի մեջ ընկած թուրք գրոհայիններին...»:

Սա՝ 1905 թվականին: Եվ հիմա նորից է կախվել մահացու վտանգը Արծվաշենի գլխին: Թուրքը գազազել էր՝ 25 ադրբեջանաբնակ գյուղերով շրջապատված այս արծվաբույնը միթե՞ հնարավոր չի լինելու ծնկի բերել, միթե՞ յաթաղանը չի իջնելու, չի բնաջնջելու 4500 «գյավուրի»: Ընդամենը մեկ ամիս առաջ՝ 1992-ի մայիսի 9-ին՝ ֆաշիստական ժանտախտի դեմ տարած հաղթանակի օրը, ազատագրվել էր տասնամյակների ընթացքում հայաթափ արված Շուշին, բացվել էր Արցախը մայր Հայաստանի հետ կապող կյանքի ճանապարհը՝ Լաչինի միջանցքը: Ահա այս ամենից էր նաև գազազել ենիչերին:

1992-ի օգոստոսի 4-ին Արծվաշենի վիճակն օրահասական էր: Մինչև ատամները զինված թշնամին օղակի մեջ էր առել գյուղը: Տեղի զինյալ ջոկատները անզոր են դիմագրավել: Եվ վերստին մահու և կենաց կռվի են նետվում Կիրովականի գնդի զինվորները: Պատմում են, որ երբ գնդի փառաբանված հրամանատար Ալեքսանդր Թազագուլյանը (որը մեկ տարի հետո հերոսաբար զոհվելու էր Քելբաջարում) տեղեկացնում է Արծվաշենի ծանր վիճակի մասին և դիմում գնդի մարտիկներին, թե՝ ովքե՞ր են պատրաստ այնտեղ մեկնելու, շարքից դուրս են գալիս ընտրյալներից ընտրյալները.

- Մենք, հրամանատար, մենք մահից չենք վախենում...

- Ահեղ մարտեր են սպասվում, իմ արծիվներ, ահեղ քննություն, որը կարող է ճակատագրական լինել յուրաքանչյուրիդ համար:

- Հրամանատար, մենք չենք խուսափի մեր ճակատագրից,- լինում է վճռական պատասխանը...

«Մարդիկ կան,- ասել է 20-րդ դարի խոշորագույն զորահրամանատարներից մեկը՝ Գեորգի Կոստանդինովիչ Ժուկովը,- որ երազում են սեփական անկողնում մեռնել, մյուսները՝ նախընտրում են մեռնել կռվի դաշտում...»:

Տավուշի, Վահանի փոթորկուն կռիվներում դեսանտայինները կռվել էին, ինչպես պողպատը՝ հրում: Նրանց արծվային հայացքները մահն արդեն տեսել էին բազմիցս, բայց չէին երկնչել՝ իրենց խիզախությամբ հաղթել էին մահին: Ուրեմն, ինչ է՝ հիմա՞ պիտի մահվան սև ուրվականը վախեցներ նրանց:

Տեսնելով տղաների վճռականությունը, հրամանատարի լարված դեմքը հպարտությունից պայծառանում է.

- Դե, ձեզ տեսնեմ, իմ արծիվներ...

Եվ դեսանտայինները գերադասում են կռվի դաշտը՝ քաջ գիտակցելով, որ եթե իրենց են նետում Արծվաշեն, ուրեմն Արծվաշենի վիճակը ծանր է...

... Դժոխքը երախը բացել, կրակ է ժայթքում Արծվաշենի վրա: Չորս կողմից սուրացող արկերի ոռնոց, գնդակների սուլոց, այրվող տների ճարճատյուն: Ինչ գնով էլ լինի ժամ առաջ կանխել է պետք թշնամու մուտքը: Այն մահ կնշանակի հազարավոր խաղաղ բնակիչների համար, հարկավոր է ապահովել նրանց անկորուստ դուրսբերումը մահվան օղակից: Եվ տղաներն իրենց վրա են վերցնում հարձակման ալիքը՝ դիմակայելով ահեղ գրոհներին, արժանի հակահարվածներ տալով հակառակորդին: Ժամերը դանդաղ են սահում: Մառախլապատ օրը ավելի է մթագնել այրվող տների թանձր ծխի քուլաներից:

«Դիմադրել, հոգով չտկարանալ, չերկնչել ու չլքել դիրքերը, իսկ եթե նահատակվել՝ ուրեմն վերջին փամփուշտով մի վերջին ելուզակի էլ տապալած». այսպիսի ներշնչումով են կռվում Արծվաշենի արծիվները՝ նրանք, ում աննկուն ոգին պատվար էր դարձել, 4500 խաղաղ բնակչի կյանք փրկող պատվար:

Եվ չընկրկեցին, թուլակազմ չեղան, շեշտակի նայեցին մահ-վան աչքերին, մեկը կռվեց երկուսի դեմ, հինգի դեմ, տասի դեմ...

Չգիտեմ, ականատեսը չեմ եղել ահասարսուռ այդ տեսարան-ների, բայց մեր հեռուստատեսությամբ դիտել եմ «016-ը կապի մեջ է» փաստավավերագրական ժապավենը («Զինուժ»). նկա-րահանված Արծվաշենում, օգոստոսյան ահեղ այն օրերին... Արծ-վային հայացքով տղաները զինավառ են ոտից գլուխ: Այստեղ է նաև պատերազմական բոցերի միջով անցած զորահրամանա-տար Վազգեն Սարգսյանը. «Դիմակայել թշնամուն, ապահովել արծվաշենցիների անկորուստ դուրսբերումը:

Փրկել 4500 կյանք»,- սա է եղել հրամանը զորավարի: Հրա-մանը կատարվում է ճիշտ ժամանակին և անթերի: Իսկ մինչ մահվան հետ մի վերջին անգամ գոտեմարտի մտնելը, հեռուս-տաէկրանից մեզ ժպտում են Էդվարդը, Վոլոդյան, Դավիթը, Անանիան: Յուրաքանչյուրը մի երկու բառ է ասում՝ լավ ենք, ամեն ինչ լավ ա: Վոլոդյան նույնիսկ փորձում է կատակել.

- Փոխանակ ես հուսադրեմ տղաներին, նրանք են ինձ ոգևո-րում:

Գնդի բուժակ Դավիթը ճարպկորեն մի ուսից մյուսն է նետում ավտոմատը՝ ձեռքի հետ շարունակելով ճաշակել խնձորը... Ասում-խոսում են, ասես սպառնացող վտանգն իրենցից ընդամե-նը երկու քայլի վրա չլինի: Ծիծաղում են, ասես պատրաստվում են տոնական հրավառության խաղաղ պայմաններում: Չնայած այդ օրը ու այդ պահին կար փոթորկալի հրավառություն. դա մահվան հրավառություն էր, և ոռնացող արկերն ու գնդակներն ուղղված էին իրենց՝ Արծվաշենի քաջազուններին: «Մահ ոչ իմա-ցեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն»: Եվ դեսանտային-ները ևս մեկ անգամ ապացուցեցին դեռևս 5-րդ դարից եկած ճշմարտությունը. գիտակցված մահով նրանք անմահացան՝ ջար-դի ճիրաններից փրկելով 4500 կյանք: Նրանք հավատարիմ մնա-ցին Վահան գյուղում իրենց տված խոստմանն ու երդումին՝ սե-փական մարմինների ու երազանքների վրա ընդունելով մահա-բեր գնդակների տեղատարափը:

Իսկ ովքե՞ր էին այդ քաջազունները՝ Հայոց ազգային բանա-կի առաջին սուրբ նահատակները՝ թվով տասներկուս: Նրանց մասին դեռ կպատմենք առանձին-առանձին, իսկ առայժմ խոնար-հումով ու հիշատակի խնկարկումով ոսկետառենք նրանց անուն-ները:

Այսպես.

մայոր ԷԴՎԱՐԴ ՍՊԱՐՏԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
լեյտենանտ ՎՈԼՈԴՅԱ ՍԱՐԳՍԻ ԴԱՐԲԻՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԱՆԳՅՈՒԼԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ԺՈՐԱ ԱԼԲԵՐՏԻ ՀԱԿՈԲՅԱՆ
ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՆԻ ՍՄԲԱՏՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ՄԽԻԹԱՐ ԳԵՎՈՐԳԻ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ
ԴԱՎԻԹ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ԱՐՄԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՄԱԿԱՐՅԱՆ
ԿԱՄՈ ՌՈԲԵՐՏԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
ՍՈՒՐԵՆ ԼՅՈՒԴՎԻԳԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Չգիտեմ ով ինչպես, բայց մենք՝ հայերս, հրաշալի ճանաչում ենք թուրքին, գիտենք, թե ինչի է ընդունակ: Ուստի փորձենք մի պահ մտովի պատկերացնել, թե ինչ կկատարվեր Արծվաշենում, եթե հանկարծ խափանվեր բնակչության դուրսբերման օպերացի-ան. մոլուցքով սրի էր քաշվելու Արծվաշենի ողջ բնակչությունը. բռնաբարվելու, բարբարոսաբար խոշտանգվելու էին դեռատի հարսները, աղջիկները: Սեփական տան շեմին մորթվելու էր հայ շինականը, մանուկը ջախջախվելու էր օրորոցում, շենն ամբող-ջությամբ դառնալու էր մի ահռելի գերեզմանոց: Այսպես էր որոշել անել թուրքը: Հաստա՛տ: Իսկ եթե այդպես լինե՞ր: Ի՞նչ կա-սեինք այսօր ապրողներս, ինչպիսի՞ խարազան կդնեինք մեղա-վորների ճակատին: Իսկ ի՞նչ կասեին գալիք սերունդները, նզով-քի ի՞նչ խոսքերով կնշավակեին անփառունակ զորապետներին, եթե նրանք այսօր իրոք տկարամիտ ու անճարակ լինեին, եթե Արծվաշենն իրոք դառնար մի նոր գողգոթա...

ՀԵՐՈՍՆԵՐԻՆ ՉԵՆ ԱՅՐՈՒՄ...

1992 թվական, օգոստոսի 8. երկարատև մաքառումներից հետո Արծվաշենն ընկավ: Եվ որքա՞ն պիտի կարողանար դիմակայել, երբ երկուսուկես տասնյակ կիլոմետր խորությամբ մխրճվել էր ադրբեջանաբնակ շեների մեջ, երբ միայնակ էր մնացել իբրև արծիվ՝ գիշանգղների շրջապատման մեջ: Եվ հիմա, որքան էլ անփարատելի հայոց հնօրյա ոստանի կորստյան ցավն ու վիշտը, այնուամենայնիվ, պիտի փորձենք մխիթարվել այն իրողությամբ, որ Արծվաշենը չդարձավ Սումգայիթ և որ արծվաշենցիներն այսօր կան, ապրում են՝ իրենց հոգիներում անթեղած ցասման ու վրեժի սրբազան հուրը և հույսը փայփայելով տունդարձի: Ես հավատում եմ այդ օրվան... Գալու է և այդ օրը, վերստին շենանալու է արծվաբույնը, թոնրատների հացաբույր ծուխն է բարձրանալու երկինքն ի վեր, արծվաշենցին կարոտով փարվելու է իր հողին, իր հող ու ջրի բերք ու բարիքն է վայելելու և կենաց բաժակ է բարձրացնելու այն տղաների անմեռ հիշատակին, ովքեր կյանք պարգևեցին իրենց՝ զոհաբերելով սեփականը...

Շուրջ երկու ամիս տասներկու տղաներից լուր չկար՝ ո՞ւր էին նրանք՝ նահատակվե՞լ էին, գերեվարվե՞լ, թե՞ անցել էին սահմանագիծը՝ միանալու արցախյան ռազմաճակատներում մարտնչող իրենց արյունակիցներին: Ի՞նչ իմանաս, գուցե և այդպես, չէ՞ որ արծիվները սահմաններ չեն ճանաչում...

Թող այդպես լիներ: Թող նրանք թևած լինեին դեպի ազատատենչ լեռնաշխարհ: Թող այնտեղ մարտնչեին մինչև հաղթանակի բաղձալի օրը, մինչև նորից խաղաղ բացվեին հայոց եզերքների ցողաթաթախ արշալույսները...

Ավա՜ղ, նման ճակատագիր չէր տրված քաջազուններին: Եվ ոչ էլ նրանց ծնողներին էր բախտ վիճակված կրկին տեսնել իրենց սիրասուն զավակներին. քեֆ ու ուրախություն անել, զուռնա ու դհոլ թնդացնել նրանց հարսանիքներին: Ծնողներն ի՞նչ իմանային, որ իրենց կորյունները տունդարձի ճամփան են բռնելու նահատակի լուսապսակը ճակատներին, հերոսության դափնեպսակներով զարդարված...

Երկարատև որոնումներից հետո ցրվելու էր անհայտության մառախուղը, և աշնանային մի օր՝ հոկտեմբերի 6-ին, մայր հողին էին հանձնվելու տասներկու հերոս դեսանտայինների աճյունները: Ռուս դիտորդների օգնությամբ կայացած դիափոխանակմամբ հայրենիք հասած աճյունները, որ ամփոփվելու էին Եռաբլուրի եղբայրական գերեզմանոցում:

Աշնանային պայծառ, արևոտ օրը սևով էր երիզված: Զինվորական ավտոմեքենաների շարասյունը մայրաքաղաք Երևանի Սպայի տնից Եռաբլուր էր հասցնելու 12 կտրիճների դիերը: Ծոմվացած ժողովուրդը նրանց ճանապարհելու էր Հանրապետության հրապարակով: Ճանապարհելու էր՝ անթաքույց հիացմունքն հոգում ու արցունքն աչքերին... Թաղումը կառավարական էր...

Եռաբլուր՝ մեր սուրբ նահատակների հավերժական կացարան: Մեր նոր ուխտատեղի: Եկել են բոլոր նրանք, ում համար թանկ է Հայրենիքի Զինվոր հասկացությունը: Եկել են Հայրենիքի զինվոր գեներալներ, կառավարության ներկայացուցիչներ, Պաշտպանության նախարարության բարձրաստիճան դեկավարներ, պատասխանատու աշխատակիցներ: Ազատամարտիկներ, երկրապահներ: Աշխատավորներ: Նրանք խոսք ունեն ասելու, երդում ունեն տալու, վրեժ ունեն ու ցասում: Ու նաև արցունք՝ խառնելու հերոսներին իր գիրկն առնող մայր հողին:

Հրաժեշտից առաջ խոսք է ասում ՀՀ պաշտպանության փոխնախարար, գեներալ-մայոր Սերգեյ Մարտիրոսյանը.

- Անչափելիորեն մեծ է վիշտը, և դժվար է սփոփանքի բառեր ասել: Դժվար է թեթևացնել այն ցավը, որ կրում եք դուք, որ ունենք մենք... Իրադրությունը հանրապետության սահմաններում, օսմանյան նոր արշավանքը չէր կարող անտարբեր թողնել մեր ժողովրդի ազնվագույն զավակներին՝ հայրենիքը պաշտպանել է պետք... Ես այսօր շատ դժգոհություններ լսեցի, և դա բնական է... Բայց, հարգելիներս, չմոռանանք, որ պատերազմ է, չփակենք մեր աչքերը. թշնամին հարձակվում է մեր սահմանների ողջ երկայնքով: Այսօր Գորիսում, Ղափանում, Սիսիանում ավելի մեծ ճակատներ են բացվել: Եվ մենք պետք է պաշտպանենք մեր հայրենիքը: Բոլորս՝ ծերից մինչև մանուկ: Եթե չպաշտպանենք՝ ուրիշը մեզ չի պաշտպանի, և թշնամին ավելի անողոք կդառնա...

Կիսելով ձեր վիշտը, ասում եմ. Արծվաշենի 4500 բնակիչներին փրկել են ձեր որդիները: 4500 մարդ փրկվել են այս հերոսների շնորհիվ, այս հերոսների կյանքի գնով: Ահա նրանք...

Ես Հայաստանի Հանրապետության ռազմական խորհրդի անունից, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի անունից, Հայաստանի կառավարության անունից խորը ցավակցություն եմ հայտնում զոհված բոլոր հերոսների հարազատներին: Նրանց ընտանիքները մեր լավագույն զավակներին ծնած, դաստիարակած և հայրենիքին նվիրաբերած ընտանիքներն են և

արժանի են պետական հոգածության, պետական հարգանքի:

Թույլ տվեք վերստին ցավակցել ձեզ, կիսել ձեր վիշտը և իմ 65-ամյա հասակում երդվել, որ ես նույնպես պատրաստ եմ զոհվելու հանուն սուրբ գործի, հանուն հայրենիքի պաշտպանության...

Կեցցեն ձեր զավակները: Կուզենայի 13-րդը լինել...

Զուսպ, առինքնող խոսք է ասում ՀՀ ՊՆ սոցիալական բաժնի վարիչ Անդրանիկ Արշակյանը.

- Որքան էլ մեծ լինի կորստի ցավը, որքան էլ մեծ լինի վիշտը, բայց ավելին պիտի լինի հպարտության զգացումը... Բառեր չկան, բառերը քիչ են, և որևէ կերպ դժվար է պատմել-նկարագրել այն հերոսությունը, որ այս տասներկու հերոսները դրսևորել են մարտի դաշտում... Ոսոխն ինքը հիացած էր տղաների սխրագործությամբ: Ուզում եմ ձեզ բառացիորեն փոխանցել դիափոխանակման ժամանակ ազերի գնդապետ Ռուստամովի խոսքերը. «Սրանք ձեր ազգի պարծանքն են, թող ձեր ժողովուրդը լավ իմանա այս քաջերի մասին»:

Ազերի գնդապետը չի զլացել ասել ավելին. «Մենք ուզում էինք նրանց դիակներն այրել, սակայն այսպիսիներին չեն այրում: Նմանները, թեկուզ թշնամի, միայն հիացմունքի են արժանի... Նրանք ընկել էին մեկ քայլ չնահանջած ու վերջին փամփուշտը պարպած...»:

- Ես ձեզ խնդրում եմ,- շարունակում է Ա. Արշակյանը,- մենք իրավունք չունենք այսքան արցունք թափելու: Արցունք թափելով չէ, որ պիտի շարունակենք նրանց գործը: Եկեք գլուխներս բարձր, բռունցքներս բարձր, հերոսների ծնողներին վայել արժանապատվությամբ վերջին հրաժեշտը տանք:

Փա՜ռք նրանց:

Փա՜ռք:

Փա՜ռք:

Փա՜ռք:

... Եվ մայր հողը իր գիրկն առավ իր անմահ զավակներին:

Կյանքս՝ հայրենիքիս, Հոգիս՝ Ասպծուն, Պատիվս՝ ինձ...

«ՄԵՆՔ ՔԵԶ ՀԵՏ ԵՆՔ, ՀՐԱՄԱՆԱՏԱ՛Ր...»

ԷԴՎԱՐԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Այն ո՞ր որդեկորույս մայրը չի սպասում որդու վերադարձին: Արծվաշենի բնակչության դուրսբերումն ապահովող դեսանտայինների հրամանատար, մայոր Էդվարդ Ավետիսյանի մայրը՝ Վիոլետա Ավետիսյանն էլ է սպասում իր ծնած կորյունի վերադարձին... Ու թեև Եռաբլուրն իր ուխտատեղին է, բայց նա դարձյալ հավատում է, որ կատարվելու է հրաշքը ու ինքը մի օր փարվելու է ծխի ու վառոդի հոտով ներծծված իր որդու հուժկու ձեռքերին, որ վաղ թե ուշ ընկնելու է նրա վզովն ու հառաչելու՝ ինչո՞ւ այսքան ուշացար, որդի՜ս... Այսպիսին է գորովագութ մայրական սիրտը: Այն անկարող է ապրել առանց հավատի, առանց հույսի ու սպասումի:

Եթե հարյուրավոր ազգընտիր հայորդիներ, արցախյան գոյամարտի կանչին ունկնդիր, առաջի՞ն անգամ զենք բռնեցին ու ինքնամոռաց խանդավառությամբ նետվեցին ի մարտ, ապա Էդվարդ Ավետիսյանը ազգային-ազատագրական պայքարի մեջ մխրճվեց իբրև թրծված ու ուսյալ սպա: 1978 թվականին ավարտում է մայրաքաղաքի Ն 4 դպրոցը, երկու տարի աշխատում սպորտբազայում: 1980-ին ընդունվում է Յարոսլավլի ռազմաֆիզիկական բարձրագույն ուսումնարան: Գերազանց առաջադիմություն, ուսման ավարտ, ավագ լեյտենանտի կոչում և ծառայություն՝ Ուկրաինայի Զապորոժիե քաղաքում:

Մինչ խաղաղ ու անամպ է Ուկրաինայի երկինքը՝ հեռավոր Աֆղանստանում որոտում են խորհրդային հրանոթները, Խորհրդային Միության բոլոր հանրապետություններից 18-20 տարեկան պատանիներ անմիտ ու անմիտ կռիվ են մղում օտար հողի վրա: Օտար հողի վրա հեղում են իրենց այնքան թանկ արյունը: Հանուն ո՞ւմ, հանուն ինչի՞: Եվ եթե անփորձ ու զենքին անվարժ պատանիներն էին «ինտերնացիոնալիստական» պարտք կատարում «եղբայրական» ժողովրդի հանդեպ, ապա ինչպե՞ս կարող էր այդ պարտքից խուսափել ֆիզիկապես կոփված, տարբեր զինատեսակների տիրապետող կադրային սպան, որ զորամասում իրեն դրսևորել էր ոչ միայն որպես մարզիկ, այլև՝ բանիմաց հրամանատար: Ու երբ եկել էր «դուշմանների» դեմ գնալու պահը, զորամասի հրամանատար, փոխգնդապետ Յուրի Բալաշովը ողջերթի խոսք էր ասել. «Քեզ ոչ մի դուշմանի գնդակ էլ չի դիպչի: Ինչպես ողջ-առողջ գնում ես, այնպես էլ ետ կվերադառնաս»: Ճշմարիտ էր լինելու փոխգնդապետի խոսքը. աֆղանական հողում, ուր նաև տասնյակ պարմանահասակ հայորդիների կյանքի թել կտրվեց, Էդվարդ Ավետիսյանին չգտավ դուշմանի դավադիր, թե դիմահար գնդակը: Ավելին, մորն ու կնոջը՝ Սյուզիին, գրած նամակում (28.09.86) հանգստացնում էր. «Այստեղ ամեն ինչ լավ է, դուք չմտածեք: Այս երկու տարին այնպես կանցնի, որ չենք էլ զգա... Հիշո՞ւմ ես, մայրիկ, դու էիր ասում, որ կյանքը պայքար է... Ուղղակի խնդրում եմ ձեզ՝ շատ մի մտածեք, եղեք ուրախ, ինչպես իմ ծննդյան օրը...»:

Բայց քաղաքացիական պատերազմի թատերաբեմի վերածված երկրում ծառայող որդի ունեցող մոր սիրտն ինչպե՞ս կարող էր չանհանգստանալ, չերկյուղել, չտագնապել ու թաքուն մորմոքներ չունենալ: Ինչպե՞ս կարող էր թաքուն չարտասվել նոր-նոր ամուսնական առագաստ մտած ջահել կինը, որն արդեն փոքրիկի էր սպասում...

Գալու էր ժամանակը, աֆղանական մսաղացը դադար էր առնելու խորհրդային զինվորների համար, խորհրդային զորամիավորումները դուրս էին բերվելու երիցս այրված այդ հող-դժոխքից: «Մարտական ծառայության համար», «Խիզախության համար» և այլ մեդալներով պարգևատրված հայ կապիտանը դիմում է ԽՍՀՄ կոմերիտմիության Կենտկոմ՝ խնդրելով ծառայությունը շարունակել այն նույն քաղաքի նույն զորամասում, որտեղից մեկնել էր դուշմանների դեմ կռվելու...

Եվս մեկ տարի Զապորոժիեում, որից հետո խնդրագիր է ներկայացնում իրեն Հայաստան տեղափոխելու մասին. «Մինչև ե՞րբ զենք բռնեմ օտարի համար, չէ՞ որ հայրենիքիս հիմա ամենից շատ եմ անհրաժեշտ...»: Հրամանատարությունը չի մերժում փորձառու, իր պարտքը պատվով կատարած սպային: Եվ աֆղանական պատերազմի քուրայով անցած կապիտան Էդվարդ Ավետիսյանը 1990 թվականին վերադառնում է հայրենի եզերք: 1991-ին նա արդեն Կիրովականի 016 գնդի հրամանատարի տե-

դակալ է՝ թիկունքի գծով, իսկ մինչ այդ մասնակցել է Նոյեմբերյանի, Տավուշի, Իջևանի շրջանների պաշտպանական մարտերին: Նրա համար կռվելն արդեն «խաղուպար» է, իսկ իր անձնական օրինակը՝ ոգեշնչող իրեն թեութիկունք, բայց սկսնակ զինծառայող տղաների համար. «Հրամանատար, մենք քեզ հետ պատրաստ ենք ցանկացած մարտի...»:

Մայոր Էդվարդ Ավետիսյանը մարտեր շատ էր տեսել: Նրան սարսափելի չէր «գրադների» ռռնոցը: Նրա տագնապը միայն մի բանի համար է՝ կարողանալ ապահովել արծվաշենցիների անկորուստ դուրսբերումը, չէ՞ որ իրեն ու իր տղաներին է վստահված ճակատագրական այդ օպերացիան: Իր ունկերում դեռ արթուն է հրամանը. «Ապահովել 4500 արծվաշենցիների էվակուացումը»: Իսկ Արծվաշենի վրա չորս կողմից կրակ է թափվում: Չդադարող կրակ: Բայց հարկավոր է դիմակայել: Թուլական լինելը, դավաճանությունը երբևէ չջնջվող խարան է... Եվ մի բուռ քաջազուններ, ուժերի վերջին լարումով, ծանր կորուստներ են պատճառում մշուշի միջից սողացող մինչև ատամները սպառազեն ու կատաղի օմոնական հոծ շարքերին: Արդեն սպառվում է զինամթերքը: Տղաներից մի քանիսն ու ինքը՝ հրամանատարը, վիրավոր են: Բայց անձնուրաց տղաների ոգին աննկուն է. «Մենք քեզ հետ ենք, հրամանատա՛ր»: Քեզ հետ ենք՝ ասել է, թե պատրաստ ենք քեզ հետ մեռնելու...

Կատաղի մարտերից հետո, Արծվաշենն ընկավ: Քաջի մահով ընկան բոլոր տասներկուսը՝ Վոլոդյան, Անանիան, Դավիթը, Կարենը, Հարությունը, Կամոն, Ժորան, Տիգրանը, Արմենը, Սուրենը, Մխիթարը: Ու նաև ինքը՝ Էդվարդ Ավետիսյանը, որ աֆղանական պատերազմից մազապուրծ իր կյանքը ընծայաբերեց հայրենյաց փրկության զոհասեղանին...

- Լինելով զինվորական՝ նա մահից չէր երկնչում,- պատմում է ցավն անմռունչ տանող հրամանատարի այրին՝ Սյուզի Խանգելդյանը: - Հաճախ էր կրկնում՝ էլ ի՞նչ զինվորական, որ վախենում է թշնամուց ու մահից: Էլ ինչպե՞ս կարող է նա զենք բռնել: Երազում էր Հայաստանը տեսնել իրոք Ազատ, Անկախ և միացյալ՝ իր ամուր պետականությամբ ու հզոր բանակով:

Էդվարդ Ավետիսյանի, որի բրոնզաձույլ կիսանդրին այսօր դրված է ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» ռազմագիտական ինստիտուտ-թանգարանում, արմատները Էրգրից էին՝ Բիթլիսից: Նա իր հոգու աչքերով տեսել էր հայոց եղեռնի արյունոտ պատկերը, անցել գաղթի ու մահվան ճամփաներով: Եվ հավանաբար երազում էր հարմար առիթ՝ վրեժն առնելու...

Հերոսներն անմահ են, ու հուշն է անմահ նրանց սքանչելի կերպարներն ամբողջացնող: Ես էջ առ էջ թերթում եմ հուշի պատառիկները բոլոր նրանց, ովքեր մոտիկից ճանաչել, շփվել են անմահության ճանապարհը հարթած քաջազունների հետ: Եվ արցունքոտ են այդ հուշագրությունները. «Էդիկենց դասղեկությունն ստանձնեցի 4-րդ դասարանից,- գրում է դասղեկ Սարգսյանը: - Երանելի օրեր էին... Ու թեև Էդիկն ուսման առաջավոր չէր, սակայն մարդկայնության առումով առաջինն էր ու իր ետևից տանում էր մյուսներին: Սիրում էր ընկերներին, առավել սիրված էր նրանցից: Ընկերները միշտ հաշվի էին նստում նրա հետ, իսկ ինքը երբեք հուսախաբ չէր անում: Էդիկը հեղինակություն էր: Եթե դասարանում որևէ անկարգություն էր կատարվում, հարվածն իր վրա էր վերցնում, ներկայանում էր իբրև կազմակերպիչ՝ թեև, ասենք, դասերից փախուստի օրը ինքը հիվանդ պառկած է եղել: Նա չէր ուզում, որ ընկերներից մեկը տուժեր: Եթե պատիժ կար՝ թող իրեն հասներ:

Շատ էր սիրում պատմավեպեր կարդալ: Ամենաակտիվն էր, երբ ուսումնասիրում, վերլուծում էինք Ռաֆֆու «Սամվելը», Մուրացանի «Գևորգ Մարզպետունին»,

Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը». ոգևորությունից անճանաչելի էր դառնում, ուզում էր բոլորի փոխարեն պատասխանել: Աչքերը փայլում էին, կարծես ֆիզիկապես էլ էր հզորանում, բնութագրում էր հերոսներին, ոգևորվում նրանց արարքներով, հայրենասիրությամբ համակվում: Եվ պատահական չէր, որ ընտրեց զինվորականի համազգեստը: Նա իր ժողովրդի համար մերօրյա Սամվել, Մարզպետունի, Վարդան էր ուզում դառնալ: Ու... դարձավ:

... Վերջին անգամ տեսա 1992 թ. մայիսին, դպրոցից 150-200 մետր հեռավորությամբ: Անմիջապես արգելակեց մեքենան և առաջարկեց նստել: Փորձեցի հրաժարվել՝ չստացվեց:

- Էդիկ ջան, ինչպե՞ս ես, գո՞հ ես, որ Հայաստանում ես ծառայում:

- Իհարկե, չէ՞ որ հայրենիքիս եմ ծառայում,- պատասխանեց ժպտալով:

- Բալես, այն վտանգավոր կողմերը չգնաս,- շարունակեցի ես:

- Եթե հարկ լինի, ընկեր Սարգսյան, կգնամ և կյանքս էլ կտամ,- իրեն հատուկ հաստատակամությամբ պատասխանեց երեկվա իմ սիրելի սանը:

Ու գնաց... Էդիկն ու նրա նմանները մեր կյանքը գեղեցկացնողներն են, կյանքի համը, հոտը, բույրը: Նրանցով են անուշանում աշխարհի մարդիկ...»:

Կյանքին համ ու հոտ տվող տղաները գնացին: Հայրենի հողն ավելի սրբացավ նրանց ջահել արյունով: Հայրենի հողն ավելի զորեղացավ: Իսկ նրանցից ծնվելիք ծաղիկներն այդպես էլ ծիլ չտվեցին՝ բացառությամբ Էդվարդ Ավետիսյանի, որի Վիոլետ անունով փոքրիկ աղջնակը այդպես էլ չհասցրեց վայելել հայրական ձեռքերի գգվանքը, որոնք ավելի շատ զենք բռնեցին, քան փաղաքշեցին իրեն: Նա վաղը, մյուս օր նոր միայն կհասկանա, որ իր Սպարտակ պապիկը գնացել է Անմահությունից հետ բերելու իր ամենահաղթ ու աշխարհի ամենալավ հայրիկին: Գնացել է հայրիկին տո՜ւն բերելու:



ՀԻՆԳ ԿՈՐՅՈՒՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

ՎՈԼՈԴՅԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ

«Ամուսնանալը տղամարդկություն է, թշնամուն զարկելը՝ առավել ևս». հայ վրիժառու բազուկներից մեկի՝ Արամ Երկանյանի խոսքերն են: Այն վրիժառուի, որ վերացրեց հայոց 1915 թվականի ցեղասպանության կազմակերպիչներից երկուսին՝ Ջեմալ և Շաքիր փաշաներին:

Ամուսնանալը տղամարդկություն է: Ամուսնական ամուր միաբանությամբ է, որ ստեղծվում են հայրենաշեն օջախներ, այդ օջախներում լույս աշխարհ գալիս և դաստիարակվում հայրենիքի պաշտպաններն ու ապագա տերերը: Եվ կեցցե ընտանիքը: Եվ երիցս կեցցե այն ընտանիքը, որը զինվոր է տալիս հայրենիքին: Եվ դարձյալ կեցցեն այն ծնողները, ովքեր կորյուններ են ծնում...

Ոչ թե մեկ, այլ հինգ կորյուն են հայրենիքին պարգևել Ալվարդ և Սարգիս Դարբինյանները, որոնց հինգ զավակներից մեկը՝ Վոլոդյան, անմահացավ Արծվաշենում, իսկ մյուսներն առ այսօր լեռներում են, իրենց չնաշխարհիկ լեռնաստանի՝ Տավուշի շրջանի սահմանամերձ գյուղերի պաշտպանական դիրքերում:

Բերդ շրջկենտրոնի գլխավերևում՝ դեպի արևելք, բարձրիկ լեռան գլխին, իբրև արծիվ թառել է Վերին Կարմիրաղբյուր գյուղը: Շենը բավականին խոցելի դիրքում է թշնամական մերձակա տարածքներից «ալազաններից» և «գրադներից» հրետակոծելու համար: Այսօր էլ քիչ չեն ռմբակոծությունների հետևանքով կիսաքանդ կամ «վիրավոր» կառույցները, որոնք վաղ թե ուշ վերստին կհառնեն իրենց նախնական տեսքով, որովհետև չենացնող ու շինարար է յուրաքանչյուր կարմիրաղբյուրցի ու ստեղծագործ աշխատանքի ծարավ: Այդպիսի կարմիրաղբյուրցի է նաև ճակատի դառը քրտինքով գերդաստան պահող Սարգիս Դարբինյանը՝ համեստության, մարդկայնության տիպար, որի հանդեպ անկարող ես հարգանքով չլցվել: Ճիշտ այնպես, ինչպես՝ բոլոր

որդեկորույս ծնողների հանդեպ, որոնց մի աչքը լաց է լինում անդառնալի կորստի, մյուսն՝ ուրախանում ապրողների համար:

... Դեռ դպրոցական տարիքից ակնառու էին Վոլոդյայի արտակարգ ընդունակությունները, առանձնակի հակումը բնական գիտությունների հանդեպ: Մաթեմատիկայի դասաժամերին պարզապես փայլում էր: Եվ դա էր պատճառը, որ այս առարկայի ուսուցչուհի Մարուսյա Թումանյանը անկարող էր լինում զսպել հիացական արտահայտությունները, իր առանձնակի սերն ու վերաբերմունքը Վոլոդյայի նկատմամբ. «Կարծես իմ հոգուց է դուրս եկել, կարծես զուլալ ջրի կաթիլ լինի, որ հագեցնում է իմ ծարավը... Երբ լուծում է բարդ, շատերի համար անմատչելի խնդիրները, հուզմունքից, ուրախությունից քիչ է մնում, որ արտասվեմ...»: Եվ գուշակություններ էր անում վաստակաշատ ուսուցչուհին՝ Վոլոդյան ճանաչված մաթեմատիկոս կդառնա: Գուցե և դառնար, գուցե և ավելին դառնար, եթե հայրենասեր պատանու հոգում արմատներ նետած չլինեին ավելի բարձր ու նվիրական զգացմունքներ ու իրեն, հակառակ շրջապատի մտերիմ մարդկանց խորհուրդների, չմղեին խորանալու ռազմական գիտության գաղտնիքների մեջ:

Իսկ մինչ ա՞յդ... Մինչ այդ նա դեռ մանկապարտեզ էր գնալու, հասակակիցների շրջանում աչքի էր ընկնելու իր զարմանալի... չարաճճիությամբ, հեծանիվ քշել էր սովորելու, վեց տարեկանում պատժվելու էր իր Գառնիկ ընկերոջ հետ ծխախոտ ծխելու համար:

- Այդ օրվանից ծնողներս ինձ արգելեցին խաղալ թաղի երեխաների հետ,- պատմում է հերոսի մանկության մտերիմ ընկեր Գառնիկ Եսայանը: - Եվ Վոլոդյան, որի հետ մեր ամենօրյա հանդիպումները պարտադիր էին, զրկվելով դրանից, լաց եղել ու բողոքել էր մորը. «Բա Գառնիկը ընկեր չունենա՞...»:

Մանկան վճիտ հոգի, մանկական անմիջականություն՝ հատկանիշներ, որ չէին պղտորվելու, այլ վճռորոշ էին դառնալու խառնակ օրերի մթնոլորտում: Դպրոցում ստացած գիտելիքները, սերը գրականության, մասնավորապես պատմավեպերի հանդեպ, ազնվագույն գաղափարներով էին սնուցելու նրա հոգին. Հայկ Նահապետն ու Արա Գեղեցիկը, Վարդան Մամիկոնյանն ու Գևորգ Մարզպետունին, մեր դյուցազնավեպի հերոսները, մեր պատմության ֆիդայական շրջանի քաջազունները ոգու զորացման ու հայրենասիրության կենդանի քարոզիչներ էին խոհուն պատանու համար: Պատմության դասերից մեկի ժամանակ, երբ ուսուցչուհին՝ Սիրամարգ Գիժլարյանը, պատմում էր «Սուվորովի ալպյան արշավանքները» թեման, Վոլոդյայի ուշադրությունից չվրիպեց «Դժվար՝ ուսման ժամանակ, հեշտ՝ մարտում» արտահայտությունը, և հարցրեց. «Ինչպե՞ս հասկանալ»: Ուսուցչուհու մեկնաբանությունից հետո Վոլոդյան յուրահատուկ եզրակացության հանգեց.

- Իմ կարծիքով, դա նույնն է, որ եթե ես դպրոցում դասերս լավ սովորեմ, ապա հեշտ կլինի ոչ միայն տարեվերջյան, այլև ավարտական և ընդունելության քննությունների ժամանակ:

- Ապրես, Վոլոդյա,- արձագանքեց ուսուցչուհին,- ճիշտ ես հասկացել: Եվ եթե վարվես այնպես, ինչպես ընկալում ես մեծ զորավարի իմաստուն խոսքը, ապա, իմացիր, ուր էլ լինես, ինչ իդեա ու երազանք էլ ունենաս, լավ ձգտելու դեպքում, կիրականացնես:

Միշտ պարտաճանաչ, բարեխիղճ, առաջադրանքները ժամանակին կատարող: Եվ այս ամենի շնորհիվ՝ մասնակցություն օլիմպիադաների, մրցույթների: Եվ միշտ՝ մրցանակակիր ու հաղթող:

Դպրոցն ավարտեց իբրև կազմակերպված, աշխարհընկալման սեփական չափանիշներն ունեցող ընդգծված անհատականություն: Նրա համար անտանելի էր գորշ, միապաղաղ կյանքը: Նա խենթության սիրահար էր, խենթ երազանքների ու գեղեցիկ ձգտումների ասպետ: Ընկերության պարագայում՝ ինքնամոռաց նվիրյալ էր, անարդարության, անազնվության դեպքում՝ կատաղի հակառակորդ: Չէր սիրում դույզն-ինչ նեղություն տալ ցանկացած մեկին՝ հանուն իր եսի: Իր առջև ծառացած դժվարությունները հաղթահարում էր սեփական ուժերով: Հաշտարար հրեշտակ էր յուրաքանչյուր վիճաբանության մեջ և ազդեցիկ՝ շրջապատում: Նման մարդիկ խստապահանջ են նախևառաջ իրենք իրենց հանդեպ: Այս հոգեբանությունն էր պատճառը, որ ինքը հանդես էր գալիս նաև իբրև նախաձեռնող: Այսօր կարմիրաղբյուրցիները հուզմունքով են հիշում, թե ինչպես կազմակերպեց գյուղի երիտասարդներին՝ իրենց միակ կինոդահլիճը գործարան դարձնելու՝ վերևների որոշումը կանխելու համար: Կամ նրա ջանքերը, որպեսզի գյուղի երիտասարդությունը վոլեյբոլի, բասկետբոլի ընդարձակ հրապարակ ունենա: Այո, առօրյայում նման խառնվածքի տեր մարդիկ են, որ ծայրահեղ, վճռորոշ պահերին գիտակցաբար գնում են անձնազոհության:

Միջնակարգն ավարտելուց հետո Վոլոդյան տարակուսելու ոչինչ չուներ. արդեն ընտրել էր անցնելիք ուղին՝ դառնալ զինվորական: Նման վճռականությամբ էլ դիմեց և ընդունվեց Գոր-

կու մարզի Կարոգոյի ռազմական ուսումնարանը: Դրանից հետո գուցե նաև զինվորական ակադեմիայի դռնե՞րը բախեր: Գուցե: Բայց ժամանակները խառն էին՝ սկսվել էր Արցախյան շարժումը, ադրբեջանցին սկսել էր ոտնձգությունները հայոց սահմանամերձ գյուղերի հանդեպ: Հայրենասեր ու հայրենաբաղձ երիտասարդն այլևս անկարող էր դիմադրել վերադառնալու, իր հողուջրին սատար կանգնելու ներքին մղումին: Եվ, ուսումը կիսատ թողնելով, վերադարձավ: Բայց ծնողները հորդորեցին. «Որդի, ուսումդ կիսատ մի թող, գոնե մի տեղ սովորիր»: Եվ ռազմական ուսումնարանի նախկին սանը դիմեց Երևանի ժողտնտեսության ինստիտուտ, թեև հոգին Տավշո բարձրիկ լեռներում էր, շեները պահող երկրապահ տղաների կողքին:

Պատմում է մանկության ընկերը՝ Գառնիկ Եսայանը.

- Վոլոդյան Երևանում էր, երբ ես գյուղից քաղաք եկա և անմիջապես այցելեցի իրեն: Արդեն տեղյակ էր, որ ազերիները նաև մեր գյուղն են դարձրել հարվածի թիրախ: Ու շատ էր հուզված, այլայլված, անհանգիստ: Այնքան, որ հետը խոսել չէր լինում:

- Գառնիկ, հասկանո՞ւմ ես, մեր գյուղը ռմբակոծում են, բայց որսորդական հրացաններով, վատ զինված և անփորձ տղաներն են գնում դիրքեր: Իմ փորձն այնտեղ շատ-շատ է պետք: Այնպես որ, ես չեմ կարող չգնալ-չկանգնել նրանց կողքին...

Ավագ եղբայրը՝ Քաջիկը, արդեն իսկ զինվորագրվել էր հայրենյաց պաշտպանության գործին: Մյուս եղբայրները՝ Վաչիկը, Արմիկը՝ նույնպես: Ինչպես կլինի, որ ինքը մնա քաղաքում և խաղաղ հոգով ուսումը շարունակի: Ու գնաց ծննդավայրը: Հայրն ու մայրը փորձեցին համոզել, որ գոնե այս անգամ սովորելը կիսատ չթողնի.

- Որդի, ուսումդ ավարտի, հետո կծառայես, ծառայությունը հո չփախա՞վ: Հրեն, երկու-երեք ախպերներդ դիրքերում են: Այնպես որ, հայրենիք պաշտպանողը մեկը չի քո հայրական օջախից: Խիղճդ հանգիստ պահիր:

Ապարդյուն: Մեկնեց Վանաձոր ու կամավոր անդամագրվեց մոտոհրաձգային-դեսանտային գնդին: Ծառայության անցավ իբրև դեսանտային ջոկատի հրամանատար: Այդ ժամանակ արդեն լեյտենանտ էր:

Մինչ ինքը՝ ֆիզիկապես կոփված, ամուր, արծվային հայացքով դեսանտայինը, իր զորությունն էր ցույց տալիս թշնամուն, մինչ հարազատները խաղաղ ու անորոտ երկինք էին ակնկալում, ընկերուհին երազում նամակ է ստանում՝ Վոլոդյայի լուսանկարը՝ ոսկե շղթայից կախ: Լա՞վ է, վա՞տ է, Աստված իմ: Տեսնես ի՞նչ խորհուրդ ունի երազը: Չլինի՞ իր խիզախ սիրեցյալին մի բան պատահի... Ու գեղեցիկ, խորհրդավոր երազը սկսեց տանջել աղջկան:

Օրերը սահում էին: Դեսանտայինների ջոկատը տեղակայվեց Չինարուտում՝ լեյտենանտ Վոլոդյա Դաբինյանի հայրական տանը կպած: Բայց կարճ էին տևելու Չինարուտում անցկացրած օրերը: Թշնամական գերակշիռ ուժերը կենտրոնանալու էին Արծվաշենի ուղղությամբ: Ներքին Կարմիրաղբյուրին ու մերձակա շեներին անընդմեջ հրետակոծություններով անհանգստացնող ադրբեջանական ռազմական միավորումները ոչնչացնելուց հետո հրամանատարությունը դեսանտայիններին նետեց Արծվաշեն...

Լեյտենանտ, իմ կրտսեր եղբայր, թույլ տուր տողերիս հեղինակին զրուցել քեզ հետ, հարցեր տալ ու ակնկալել պատասխաններ... Դու լռո՞ւմ ես, բայց ես լսում եմ քո սրտի բաբախյունը, ես նայում եմ քո ծավի աչքերին ու այնտեղ տեսնում քո՛ երազների աղջկան, քեզ փայփայած քո մորը, քո ձյունաձերմակ մազերով Սարգիս հորը, քո եղբայրներին՝ քեզ պես ակնահաճո, քեզ պես առնական: Քո Գառնիկ ընկերոջը, քո մյուս հոգեհարազատներին: Գիտե՞ս, որ Գառնիկը հուշեր է գրել քո մասին: Ու մարգարտաշար իր ձեռագրով նշել է. «Իմ անվախ ընկեր, դու ոչ թե հերոսացար, այլ այդպիսին էիր ի սկզբանե»: Եվ հետո. «Իմ անփոխարինելի ընկեր, քո մեջ եռում էր կյանքը, որը դու այնքա՛ն սիրում էիր: Բայց դու այն չխնայեցիր քո ազգի համար: Եվ ես հպարտանում եմ քեզանով... Մեռնելու չափ կարոտում եմ քեզ...»:

Քեզանով այսօր հպարտանում է ոչ միայն քո ընկերը: Քեզանով հպարտանում են քո օրհնյալ ու բազմաձյուղ ողջ գերդաստանը, ամպերում ծրարված ու երկնամերձ քո ծննդավայրը՝ Վերին Կարմիրաղբյուր գյուղը, ողջ Տավուշը, ողջ Հայաստանն ու ողջ հայությունը: Մահապարտ արծվաշենցիների պաշտամունքն ես դու, ով խնկելի անուն:

Գիտե՞ս, որ քեզ համար մոմ է վառում արցունքն աչքերում մի աղջիկ, ու քո գրելիք տողերը գրվում են հարազատիդ մատներով: Գրվում են իբրև քո շուրթերից պոկված բանաստեղծական թրթռներ: Լսենք այն, իմ հերոս ընկեր, լսենք քո շշունջը.

Մայր իմ, հիշո՞ւմ ես,
Ես քեզ ասացի՝ մեկնում եմ մարտի:
- Ո՛չ, չեմ դիմանա,- ասացիր կտրուկ՝×
Հեռուստացույցի լուրերին գամված:

- Ի՞նչ է, ուզում ես հինգի մայր լինել
Ու մեկի քթին չլինի՞ արյուն,
Չէ, պիտի գնամ...
Մայր իմ, գնացի՛ և կգամ այն ժամ,
Մինչև իսկապես խաղաղվի կյանքը,
Որ հոգնած դու գաս և հանգստանաս,
Ոչ թե տագնապով լուրի սպասես...
Մայր իմ, չլացես՝ թեկուզ ես զոհվեմ,
Հորությունդ դու պահպանիր մի քիչ,
Որ ուրախանանք...
Զոհված կգամ ես, թե հերոսացած՝
Հորությունդ դու պահպանիր մի քիչ,
Որ ուրախանանք իմ նոր օջախում...
Մայր իմ, հասկացիր, պիտի դիմանանք,
Հայրենի հողը պիտի պաշտպանենք,
Թեկուզ անանուն մեզ հողին հանձնենք՝
Մայր իմ, լսո՞ւմ ես, արցունք չթափես...
Միայն ինձ հիշիր կատակ անելիս,
Կատակ անելիս միայն ինձ հիշիր,
Նազինանց աղջիկ...

Նազինանց աղջկա արևը քեզ մատաղ, հպարտ հայորդի, ով արծվի նման Եռաբլուրի բարձունքից հսկում ես նաև քո արյամբ նվաճված խախաղ առավոտները Հայոց անհանգիստ աշխարհի...



ԾՆՎԵՑ ԴԺՎԱՐ, ԱՊՐԵՑ ԿԱՐՃ, ՀԵՌԱՑԱՎ ՀԱՂԹԱՆԱԿԱԾ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

- Աչքդ լույս, Վարանգյուլ, մի արու զավակ էլ ունեցար, օջախիդ կամարն ամուր պահող մի սյուն էլ ավելացավ, Արեգնազ կինդ հայրենիքին մի զինվոր էլ պարգևեց...

Եվ այդ օրը՝ 1972 թվականի մարտի 30-ին, հույսի նոր ջահեր վառվեցին Էջմիածնի շրջանի Փարաքար գյուղի բնակիչ Վարանգյուլ Աբրահամյանի հարկի տակ. լույս աշխարհ էր եկել կապուտաչյա մի մանկիկ, որ ուղիղ քսան տարի հետո գյուղի պարծանքն էր դառնալու և իր անունով ու սխրանքով հավերժ դալար էր պահելու ապուպապերից եկած տոհմածառի կանաչ ճյուղը: Պահելու էր, անշուշտ, նաև իր զավակներով, եթե հասցներ, եթե նոր-նոր ծաղկող իր ծաղիկ հասակում չլիներ այնպիսին, ինչպես որ կար, եթե դեռ մանուկ հասակից Մասիսները՝ ասել է թե հայրենիքը, պաշտամունք չդառնար ու հայրենիքի համար կյանքը զոհաբերելու պատրաստակամության զգացումը չունենար իր հոգում... Քչե՞ր եղան, որ Նոյի ագռավների նման չվեցին օտար ափեր ու սպասեցին՝ մինչև կռվի հրդեհը հանգի, մինչև խաղաղվի պատերազմական ծխից սևացած Հայոց աշխարհի մի ափ երկինքը... Բայց Հարությունն ա՛յն շատերից էր, որոնց համար սրբության սրբոցը անունն ու պատիվն է և ոչ թե անխռով, ապահով, բայց նվաստացուցիչ կյանքը օտար միջավայրում...

Հայոց երկնի կապույտն աչքերին առած մանկիկը դեռ մանկապարտեզից բարության փոքրիկ հրեշտակ էր հիշեցնում. նրան ձեռքից-ձեռք էին խլում փոքրիկների այս տան աշխատակիցները, կարի արտադրամասում աշխատող Արեգնազ մոր ընկերուհիները տանը միայնակ քնած Հարութիկին թոցնում-բերում և ձեռքից-ձեռք փոխանցելով, սիրում-փայփայում էին ինչպես սեփական մանկիկին:

Աչքաբաց փոքրիկը չորս-հինգ տարեկանում արդեն տառաճանաչ էր: Գրել-կարդալը սովորել էր իր ավագ քույրերից, եղբորից: Դպրոցում 2-3-րդ դասարանից սկսեց հաճախել նկարչական, լոդի խմբակներ, իսկ մինչ այդ ընդունվել էր Երևանի «Արաքս» մարզական ակումբի ֆուտբոլի խումբը: Ի՞նչ իմանաս՝ գուցե հանճարեղ նկարի՞չ դառնար, գուցե լոդո՞րդ կամ ֆուտբոլի՞ստ... Բայց մեր բոլորիս կյանքը տնօրինողը ի վերուստ տրված ճակատագիրն է, որ երբեմն սիրում է քմահաճ խաղեր խաղալ...

- Երբ արդեն խոստումնալից պատանի ֆուտբոլիստ էր,- պատմում է մայրը,- մրցումների մեկնեցին Վոլգոգրադ: Հաղթել էին, հաղթանակած վերադարձել: Տեսնել ու զգալ էր պետք Հարությունի ցնծությունը. «Մա, կարևորը, որ մենք հաղթեցինք՝ բարձր պահելով մեր ժողովրդի պատիվը,- ու ավելացրել,- Մեր ազգը միշտ էլ հաղթել է և երբեք չպիտի պարտվի...»:

Հետո նամակներ էր ստանալու Վոլգոգրադից, ու այդ առիթով Գրիգոր եղբայրը կատակելու էր.

- Հարութ ջան, բա որ մի ամի՞ս մնայիր. ռոլջ Վոլգոգրադն էր քեզ ճանաչելու:

- Մարդն առանց շրջապատի, առանց ընկերոջ ու բարեկամի ինչպե՞ս կարող է ապրել,- եղել էր պատասխանը:

Տասնվեց տարեկան պատանի էր (այդ ժամանակ սովորում էր Երևանի էլեկտրատեխնիկական տեխնիկումի էլեկտրամեքենաշինության բաժնում), երբ եղավ 1988-ի դեկտեմբերյան ազգավեր երկրաշարժը: Նրբազգաց պատանու հոգում այդ օրը սևով երիզվեց. տուն եկավ մռայլ, վշտից ալեկոծ, հավաքեց անհրաժեշտ իրերն ու.

- Մամ ջան, ջոկատ ենք կազմել, ես պիտի գնամ:

- Ախր, դուք փոքր եք, ինչ պիտի անեք,- փորձեց ետ պահել մայրը:

- Թեկուզ մի կյանք էլ փրկենք, էլի օգուտ է մեր ազգին,- պատասխանեց ու վերցրեց իրերը:

Մի քանի օր հետո վերադարձած Հարութն ավելի լռակյաց ու ինքնամփոփ էր դարձել: Երկրաշարժի սահավոր տեսարանները խորապես ցնցել էին նրա զգայուն հոգին: Բայց մեռած քաղաքի պատկերը չէր վանելու ուսանող երիտասարդին և մեկ ամիս անց ջոկատի հետ վերատին մեկնելու էր Լենինական՝ այս անգամ շինարարական աշխատանքներին մասնակցելու:

Պատմում է մայրը. «Գնացինք տեսակցության: Երբեմնի չքնաղ քաղաքը ավերակվել, անճանաչելի էր դարձել: Հուզմունքս չթաքցրի՝ Աստված իմ, ե՞րբ կվերականգնվի, ինչպե՞ս: Հարութս նայեց շուրջբոլորն ու ցավով շշնջաց. «Ասենք քաղաքը վերականգնվեց, բայց մարդկայի՞ն կորուստը ոնց վերականգնվի, չէ՞ որ առանց այդ էլ շատ քիչ էր մեր ժողովուրդը...»:

Դրանից հետո, երբ որևէ մեկի տանը երեխա էր ծնվում, աշխարհով մեկ էր լինում.

- Մեր ազգը կորուստներ շատ է ունեցել, հիմա ծնունդները կրկնակի պիտի լինեն...

Երեխաների հանդեպ պաշտամունք ուներ: Լիներ հարազատի, ծանոթի թե անծանոթի մանուկ՝ պիտի գրկեր, սիրեր, կատակեր: Իսկ երեխաները մշտապես պիտի թառեին նրա ուսերին՝ ինչպես աղավնի ու պիտի ճովողեին իրենց սերը՝ առ բարի ու քնքշասիրտ այս երիտասարդը:

... 1990-ին Հարությունը մեկնեց Պենզա՝ քեռին այնտեղ էր, օգնելու կարիք ուներ: Երբեմն-երբեմն նամակներ էր գրում ու մեկ-մեկ ռուսերեն բառեր օգտագործում դրանցում: Կատակելով: Բայց որպեսզի տանը չմտածեն, թե ինքը մոռանում է մեսրոպյան լեզուն, «զգուշացնում է». «Հանկարծ չկասկածեք, թե հայերենը մոռանում եմ: Ուր էլ լինեմ, իմ մայրենի լեզուն ու իմ հայրենիքը երբեք չեմ մոռանա»:

Հայրենիք, հայ մարդ, մարդ առհասարակ՝ բոլորի համար իր սիրտը տեղ ուներ. օգնե՞լ է պետք պատահական վարորդին, որի մեքենան խափանվել է, ինչ կա որ, թեքերը կքշտեր, կչարչարվեր, կմրոտվեր, բայց կգոհացներ մարդուն: Ու կառներ նրա օրհնանքը: Մեկի տանը գո՞րծ կա: Ի՞նչ է եղել, հո կռները չե՞ն ընկնի,- կշտապեր օգնության ձեռք մեկնել: Համադասարանցիների քեֆ-ուրախությունն էլ կկազմակերպեր, սեղանի գլուխ թամադա էլ կնստեր ու այնպիսի կենացներ կասեր... էլ չասելու: Ու եթե պետք էր՝ կասմունքեր՝ Շիրազ, Սևակ, Տերյան: Ու նաև կփորձեր երգել, չէ՞ որ այդ շնորհքն էլ ուներ: Ավելին՝ փոքր ժամանակ երազում էր երգիչ՝ դառնալ... Որքա՜ն էր սիրում ճանաչված կատարողներին: Ի՜նչ զմայլանքով էր ըմբոշխնում «Ղարաբաղցին» երգը Ռուբեն Մաթևոսյանի կատարմամբ: Կամ՝ Չախ Հարութին, Սյուզան Մարգարյանին: Հաճախ, երբ տրամադրությունը բարձր էր լինում, վերցնում էր դհոլը, կիթառը կամ ակորդեոնը, ու՝ գնա՜ց... Նման պահերին ափսոսանքի խոսքեր էին պոկվում շուրթերից. «Թեև ծանրաբեռնված, բայց պիտի գնայի երաժշտական դպրոց, հիմա արդեն ուշ է՝ հիմա արդեն մեծ եմ...»: Բա «Գիտցիր, որ սուրբ է հողն հայկական» ե՞րգը: Ե՞րգ էր, թե՞ աղոթք՝ իր ընկալմամբ... Բա «Չորի Միրոն» ֆիլմը, որ եռք էր տալիս իր արյանը: Բա «Ինչո՞ւ է աղմկում գետը» կինոնկա՞րը, բա Սոս

Սարգսյա՞նը, Շերե՞նցը, Հրաչյա Ներսիսյա՞նը, մեր մյուս մեծե՞-
ը, որ ոչ թե ազգային սնապարծության, այլ հպարտության ու
հիացումի զգացում էին բորբոքում իր մեջ...

Եղբայրը՝ Գրիգորը, ծառայել է խորհրդային բանակում, ծա-
վային է եղել հեռավոր Կամչատկայում: Գերազանց ծառայութ-
յան համար արձակուրդ է ստանում և գալիս է տուն: Այդ նույն
օրերին արձակուրդ է գալիս նաև հորաքրոջ տղան՝ Լեհաստա-
նից: Հարությունը, կես-կատակ, կես-լուրջ, հանդիմանում է.

- Չեմ հասկանում ձեր ծառայությունը - օրումեջ տուն եք վա-
զում, որ ի՞նչ, տան ճաշերի՞ն եք կարոտում, թե՞ սիրած աղջիկ-
ներիդ: Գնացել եք՝ նամուսով ծառայեք: Թե չէ, գալիս եք, համ
մարդկանց եք ծախսի տակ գցում, համ հարազատներիդ լացաց-
նում: Տղամա՛րդ եղեք, երկու-երեք տարի է, էլի, բանակից արձա-
կուրդ վերցնե՞լս որն է:

Հետո փաղաքշանքով փարվում է նրանց ու ասում.

- Դուք գիտեք, որ ձեզ անչափ սիրում եմ, պարզապես տղա-
մարդը պետք է կամքի ուժ ունենա, դիմանա ու դիմադրի դժվա-
րություններին, որպեսզի պատվով, պարզերես տուն վերադառ-
նա:

Մայրը, լսելով որդու «դիտողությունները», վրա է բերում.

- Հարութ տղա, վաղը դու էլ ես բանակ գնալու, տեսնենք կու-
զենա՞ս արձակուրդ գալ, թե չէ...

Եվ եկավ այդ օրը: Հարությունը ծանուցագրով ներկայացավ
զինկոմիսարիատ: Զինկոմը, բավականին երկար զրուցելուց հե-
տո, հարցրեց.

- Տղաս, դու իմ դուրն եկար, ասա, որտե՞ղ կուզենայիր ծա-
ռայել, ինքդ ընտրիր,- ու տվել էր մի քանի զորամասերի անվա-
նումներ:

Հարությունը նախընտրել էր Կիրովականը: Տուն գալով՝ այս
մասին տեղեկացրել է մորը և նրա հարցին, թե ինչո՞ւ չես ու-
զում մոտակա զորամասերից մեկում ծառայել՝ պատասխանել է.

- Մայրիկ, սիրելիս, ուզում ես, որ միշտ աչքիդ առաջ լինեմ:
Ախր, դա ծառայություն չէ: 20 տարի մեր տան զինվորն եմ եղել,
ձեր կողքին, այժմ ժամանակն է, որ ազգիս զինվորը լինեմ... Բա-
ցի դա, Կիրովականը իմ ուզած զորամասն է, Հայկական առա-
ջին բանակն է կազմավորվում, խստություն կլինի, կարգուկանոն
կլինի, ծառայությունն էլ՝ ծառայության նման: Իսկական տղա-
մարդը այդպիսի զորամասում պիտի ծառայի...

Մայիսի 28-ին՝ Հանրապետության օրը, Հայոց ազգային բա-
նակի զինվոր Հարություն Աբրահամյանին ու իր ընկերներին

բախտ է վիճակվում Երևանի Հանրապետության հրապարակում
մասնակցել շքերթին ու հայրենիքին ծառայելու երդումն այստեղ
տալ: Հպարտ էր հրապարակավ իր երդումով:

Այդ նույն օրը վերադառնում են զորամաս: Հրամանատարու-
թյունը որոշում է նորակոչիկներին երկու օրով տուն թողնել: Հա-
վաքվում են հարևան, բարեկամ, ընկեր ու ծանոթ: Ուրախության
սեղան է բացվում, և հայրը բարձրացնում է կենաց բաժակը.

- Իմ զավակներ, ամուր կամք ձեզ, որպեսզի հայրենիքի հան-
դեպ պարտքը պատվով կատարեք, բարձր պահեք ձեր ծնողնե-
րի ու ընտանիքի պատիվը: Զորություն ձեր բազուկներին...

Ի պատասխան՝ լռություն է, տղաներն ասես ամաչում են...
Ի՞նչ իմանաս՝ ով ինչ է մտածում, ով ինչպես է ծառայելու: Տե-
ղից վեր կենալով, իսկական զինվորականի ձիգ կեցվածք ընդու-
նելով՝ Հարությունը կարծես երկրորդ անգամ է երդման խոսքեր
ասում, այս անգամ արդեն հարազատ հարկի տակ.

- Հայրիկ, անհոգ եղեք, մի վայրկյան անգամ չկասկածեք, որ
ձեր որդին իր գլխից բարձր կպահի ծնողների ու հայրենիքի պա-
տիվը: Ես երդվել եմ ու բոլորիդ հավաստիացնում եմ, որ երբեք
չեմ դրժի երեկվա երդումս. .

Ու հավատարիմ մնաց իր երդմանը փարաքարցի Հարություն
Աբրահամյանը: Նրա մարտական ուղին ձգվեց Կիրովականից
Տավուշ, Տավուշից՝ Վահան, Վահանից՝ Արծվաշեն, Արծվաշե-
նից... դեպի անմահություն...

... Եռաբլուր՝ նորօրյա քաջազունների հավիտենական ննջելա-
տեղի ու սրբացած բարձունք: Արծվաշենի հերոսների տարելիցի
օրն է՝ օգոստոսի 8-ը: Բազմամբոխ է տասներկուսի եղբայրական
գերեզմանի շուրջբոլորը: Այստեղ են նաև 12 հերոսների հետ ծա-
ռայած տղաներից մի քանիսը՝ նրանք, ովքեր հրաշքով դուրս էին
պրծել շրջափակումից: Նրանցից մեկը հիշում է արծվաշենյան
հերոսական ու մահաշունչ օրերը. «Ժամ առ ժամ սեղմվում էր
շրջապատման օղակը: Ամենածայրահեղ պահին, հրամանատարն
զգալով, որ փրկություն հուսալն այլևս անմտություն կլինի,
առաջարկեց.

- Իմ քաջեր, դուք ձեր գործն արել եք, ով կարող է՝ թող հե-
ռանա դիրքերից, թող իր գլուխն ազատի:

- Իսկ դո՞ւք, հրամանատար,- հարցրեց Հարությունը:

- Ես երդվել եմ՝ թեկուզ մահ՝ չեմ լքի դիրքերը:

- Իսկ ինչո՞ւ եք կարծում, որ ե՛ս կլքեմ... Ո՛չ մի դեպքում, որ-
տեղ դուք՝ այնտեղ էլ մենք,- շեշտեց Հարությունը:

Բոլորը հետևեցին նրան»:

... Սկսվել է Հայրենական մեծ պատերազմը: Հարությունի Գրիգոր պապը, հազարավոր հայորդիների նման, մեկնում է ռազմաճակատ: Մտերիմ զինակիցները հորդորում են. «Ա՛յ Գրիգոր, մի բան արա, ազատվիր, գնա տուն, ախր նորածին զավակիդ չես էլ տեսել, կինդ, երկու աղջիկներդ մեղք են»:

Գրիգորը բարկացել էր.

«Ես եկել եմ հայրենի՞ք պաշտպանելու, թե դասալիք դառնալու: Ո՛չ մի դեպքում, հրեն իմ նման տուն տեղ, ընտանիք թողած հազարները կան, բոլորը որ էսպես մտածեն, Հիտլերի դեմ էլ ո՞վ կկռվի... Ես գերադասում եմ պատվով մահը, քան անպատիվ կյանքը»:

Ու չի վերադառնում պատերազմից գյուղի ամենահարգարժան այրերից մեկը, որի քթից ասես թռած լիներ իր Հարություն թոռնիկը, իր հերոս թոռնիկը.

- Ես իմ պապի շարունակությունն եմ, հպարտ եմ նրանով և երբեք գետնովը չեմ տա նրա անունն ու պատիվը,- սիրում էր կրկնել Հարությունը, երբ իրեն նմանեցնում էին պապին ու նրա մասին հիշողություններ պատմում...

Իսկ հիմա, ավաղ, հիշողություններ են պատմում ի՞ր մասին: Պատմում են ընկերները, համադասարանցի աղջիկները, որոնք իբրև հարազատ եղբոր պաշտում էին գեղեցկության տիպար իրենց Հարություն-Բարությունին: Պատմում են ուսուցիչ-ուսուցչուհիները՝ արցունքի կաթիլներն հազիվ թաքցնելով կոպերի տակ:

«4-րդ դասարանում էր: Դասարանը պատրաստվում էր «Ի՞նչ դառնալ» թեմայով շարադրության,- գրում է դասվար Կատյա Տոնոյանը: - Երբ դիմեցի Հարությունին, կանգնեց, զինվորի նման հպարտ կեցվածք ընդունեց ու ասաց.

- Ես ուզում եմ զինվոր դառնալ, հետո՝ գեներալ: Երեխաներից մի քանիսը ծիծաղեցին: Ընկերներից մեկը հեգնեց:

- Շատ չեղա՞վ, Հարութ...

Հարությունը վիրավորված տոնով պատասխանեց.

- Բա շատ չեղա՞վ, որ դու ուզում ես շինարար ինժեներ դառնալ... Որ ոչ մեկս զինվոր չդառնանք, բա որ թուրքը գա, հայերիս նորից կոտորի, քո շինած շենքերն էլ քանդի, ո՞վ պիտի մեզ պաշտպանի:

Ես պաշտպանեցի Հարությունի տեսակետը, նա հանդարտվեց: Եվ հիմա ինձ համար զարմանալի չէ նրա հայրենիքի հերոս դառնալու իրողությունը»:

Արցունքոտ տողերով է հիշում իր սանին դասղեկ Ռ. Հովհաննիսյանը. «Հարություն, սիրելիս, դու չես էլ պատկերացնում, թե ինչ դաժան խաղ խաղացիր մեզ հետ: Այո, որդիս, ես քեզ հետ անցյալ ժամանակով չեմ խոսում, դու ապրում ես, քանի դեռ կամ ես, քո դասընկերները, ծնողներդ, քեզ ճանաչողները...

... Այնուամենայնիվ, ո՞վ ես դու. քո մտերիմների համար էլ՝ առեղծված, չբացահայտված մի անձնավորություն: Քո պարզության մեջ՝ բարդ, բարդության մեջ՝ նույնքան պարզ... Եվ այժմ, երբ երկյուղածությամբ գրիչը թղթին եմ հպում՝ ցանկանալով գծել քո դիմանկարը, ուզում եմ մտնել քո էության մեջ, ապրել ու հասկանալ քեզ: Ու չգիտեմ՝ որտեղի՞ց սկսել ու որտե՞ղ ավարտել, որ ոչ մի երանգ չպակասի, առավելևս՝ ոչ մի կեղծ գիծ չավելանա քո դիմանկարին:

Սիրելի տղա, կյանքով լեցուն ես դու, գեղեցիկ, ինչպես դեմքով (իսկապես դու իմ դասարանի ամենագեղեցիկ տղան էիր, և աղջիկներից շատերը թաքուն սիրահարված էին քեզ), այնպես էլ՝ հոգով, մարդ՝ բառի բուն իմաստով...»:

Իսկ դպրոցի տնօրեն Վոլոդյա Մնացականյանը Հարությունին տրված իր բնութագրում նշում է. «... Ամեն մի կորուստ ծանր եմ տարել, բայց չեմ լացել երբեք: Այս անգամ՝ չկարողացա, սիրտս փուլ եկավ... Հպարտանում եմ նման սան դաստիարակելու համար, ծունկի եմ իջնում նրան ծնող և սնող մոր առաջ...

Քաջերի հեռանալը «մահ» հասկացությամբ չի բնորոշվում... Նա ծնվեց դժվար, ապրեց՝ կարճ, հեռացավ՝ հաղթանակած...»:

Արեգնազ և Վարանգյուլ Աբրահամյանների հարկի տակ ծանրածանր վիշտն է բնավորվել. լույս աշխարհ բերած նրանց յոթ զավակներից այսօր հինգը մայր հողինն են արդեն (երեքը մահացել են փոքր հասակում, Գրիգորը 25 տարեկանում է հեռացել կյանքից, իսկ Հարությունը...): Զավակների կորստյան աներևակայելիորեն ծանր ցավն իրենց հոգիներում՝ ապրում են նրանք Փարաքարի՝ իրենց որդու՝ Հարություն Աբրահամյանի անունը կրող փողոցում տխրող այն համեստ տանը. որտեղից հինգ աղավնիներ չվեցին անվերադարձ: Ապրում են, դիմակայում իրենց դաժան ճակատագրին, ճակատագիր, որ երիցս դառնացրի է...

Այնուամենայնիվ, իր նուրբ սրտին հինգ ահեղ հարված ստացած մայրն ի զորու է ասելու. «Ես հայ եմ, հպարտ ազգի հպարտ դուստր, հպարտ՝ իմ հայրենիքով, իմ հարազատներով, իմ ընտանիքով: Անգամ վշտերիս ամենածանր պահերին չեմ արտահայտել կսկիծս ու ցույց չեմ տվել արցունքներս, որպեսզի չարժանանամ խղճացող հայացքների: Եվ այժմ նույնպես

հպարտ եմ, որ կարողացել եմ դաստիարակել, ազգիս ու հայրենիքիս արժանի զավակ նվիրել՝ հանձինս իմ կապուտաչյա գանգրահեր տղայի՝ իմ Հարությունի»:

ԳՆԴԻ ԲՈՒԺԱԿԸ



ԴԱՎԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Զանգեզուրցի Բալուն, որ եղել է Դավթի Օհան պապի քեռին հին զանգեզուրցիներն հիմա էլ են հիշում՝ ահ ու սարսափ չունեցող մի ածդահա, որ զորավար Անդրանիկի զինվորն է եղել: Պատմում են, ու նրա մասին պատմությունները լեգենդի են նման: Բալին զարմացրել է ոչ միայն իր զինակիցներին, ոչ միայն իր շենի մարդկանց, այլև թուրքի սարսափը դարձած մեծն հայդուկապետին:

Մի անգամ, երբ գարնանային ձնհալից ու անձրևներից վարարած-կատաղած Զաբուղ գետին են մոտենում, Զորավարը դիմում է ածդահային.

- Բալի, թուրքի դեմ փափախդ չես ծռում, դե մի փորձիր այս գետին էլ հաղթել: Կկարողանա՞ս...

Գետ, փրփրաբերան Զաբուղ, որ Լաչինի լեռների ձնաջրերն իր մեջ առել, ուռչել, կամուրջներ է քանդում: Գետը՝ գետ, բայց Բալին էլ հո Բալին է, կարո՞ղ է խեղճանալ: Ուսից հանում է մոսինը, որ չթրջվի, ու սկսում առաջանալ դեպի մյուս ափը: Թվում է, թե պղտոր ալիքները կգլորեն մինչև գոտկատեղ ջրասույզ ածդահային: Բայց դա միայն թվում է. Բալին Զաբուղը կտրում-անցնում է ափից-ափ ու անցած տեղով նորից ետ վերադառնում: Հայդուկապետը չի թաքցնում զարմանքն ու հիացմունքը.

- Չէ, Բալի, չեմ սխալվել, որ քեզ զինվոր եմ վերցրել,- ու ողջագուրվում է գետին էլ հաղթած իր ածդահայի հետ:

... Դավիթն իր արժանավոր նախնու մասին շատ պատմություններ էր լսել, բայց իր հոգում առավելապես տպավորվել էր այս մեկը: Եվ համոզված էր, որ իր երակներում հաղթողի արյուն է հոսում, իր արժանավոր նախնու արյունը, պատվարժան իր հոր արյունը...

Դեռ պատանեկության տարիներից ձևավորված բնավորություն էր՝ որքան ռոմանտիկ, նույնքան՝ իրատես, նպատակամետ:

Ավարտելով մայրաքաղաքի N169 դպրոցը, վճռեց իր անելիքը՝ դառնալ երաժիշտ, մարդկանց երգ պարգևել: Այս ուղղությամբ առաջին քայլը «Ծիածան» կոմբինատի երաժշտական երրորդ ստուդիա ընդունվելն եղավ: Թեև արդեն կատարելապես տիրապետում էր կիթառին, երաժշտական մի քանի այլ գործիքների, այնուամենայնիվ, չբավարարվեց սովորածով և շարունակեց ուսումը Մոսկվայի ժողովրդական համալսարանի կիթառի հեռակա բաժնում: Երկու տարի, և գերազանց ավարտավկայական: Թաղամասում, շրջապատում արդեն իսկ ճանաչված ու սիրված կիթառահար էր Դավոն: Խնջույքներն ու հարսանիքները իր կիթառով հաճախ ինքն էր զարդարում:

Անհոգ պատանեկության օրերը գլորվում էին հայրենի հարկի կամարների տակ՝ Դավոյի կիթառի հնչյունների ներքո: Մոր հոգին փառավորվում էր, հոր սիրտը բերկրանքից ուռչում:

- Ուրիշ է Դավոս, ես նրա ցավը տանեմ...

Բայց Դավոն միայն մեկ մասնագիտությամբ գոհացողը չէր. հիմա էլ որոշեց, որ ինքը նաև... Մարդ պիտի բուժի: Եվ սկսեց հաճախել ՀՀ ներքին գործերի նախարարության մշակույթի տան բուժական ֆակուլտետի դասընթացները: Այստեղ էլ տիրապետեց բուժակի մասնագիտությանը:

... 1992-ի մայիսի 6-ին մայրը՝ Սևիլան, հայրը՝ Արամայիսը, բաժակ են բարձրացնում, պատվով ծառայելու ու օրհնանքի խոսքեր ասում իրենց միջնեկին.

- Հիշիր, տղաս, քեզ «պապայի-մամայի» բալա չերևակայես, այնպես կծառայես, որ հարևան-բարեկամի առաջ ամոթով չմնանաք...

Չնայած այդ խոսքերը Դավթին չպիտի ասեին. իրենք էլ դա գիտեին:

- Դուք ինձ չե՞ք ճանաչում, որ կասկածում եք,- սրտնեղեց տղան: Սպասեք, կգա ժամանակը, մեր ողջ ժողովուրդը կխոսի իմ մասին...

Մարգարեությո՞ւն... Պայծառատեսությո՞ւն... Ուրիշ ի՞նչ խոսքերով բնորոշել, երբ 20-ամյա պատանին ենթագիտակցաբար կանխազգում է մոտ ապագան: Ոչ: Ուղղակի վստահություն իր ուժերի, սեփական էության հանդեպ:

Զինկոմիսարիատում մանրազնին ստուգումներից հետո Դավիթ Միքայելյանը զորակոչվում է բանակ՝ ծառայությունն սկսելով Կիրովականի դեսանտային գնդում: Կարճ ժամանակամիջոցում դառնում է գնդի սիրելին:

«Բժիշկ Դավո»,- այստեղ էլ այսպես են սկսում անվանել

երաժիշտ-բուժակին, որի կիթառի հոգեպարար մեղեդիները կարոտի ու հուշերի ալիքներ են արթնացնում տուն ու տեղից հեռու զինվորների սրտերում:

- Մեկ ամսից եկավ տուն,- պատմում է հայրը: - Հը, ի՞նչ կա, Դավո ջան,- հարցրինք:

- Կիրովականում մառախլապատ, խոնավ եղանակ է, տղաներից մեկի հոդն է ցավում, մյուսի՝ փորը, եկել եմ դեղորայք տանեմ,- ասում ու ցույց է տալիս դեղորայքով լի տոպրակը:

- Իսկ դո՞ւ:

- Ինձ ինչ կա: Ոչ մի բանից չեմ բողոքում, գնդում արդեն հրաշալի ընկերներ ունեմ, փառավոր հրամանատար: Այնպես որ, իմ մասին դուք հանկարծ չմտածեք:

Այդ օրը տխրությամբ է հիշում նաև Դավթի դասընկերուհին՝ Նարինե Խաչատրյանը: Եվ ոչ միայն այդ օրը. «Մեզ ընդամենը մեկ հարկ էր բաժանում իրարից, բայց ամեն անգամ այնքա՜ն խոսելու բան էր լինում, որ ժամանակը թվում էր քիչ... Դավթի հետ ձանձրանալ չկար, որովհետև նա կարողանում էր մարդուն հասկանալ, մարդու մեջ գնահատել լավը, ապրել նրա կյանքով, հոգալ նրա համար: Բայց դա շատ կարճ տևեց՝ ընդամենը քսան գարուն... Չեմ կարող մոռանալ մեր վերջին հանդիպումը, որ եղավ երեկոյան, երբ նա եկել էր զորամասից առաջին և ցավոք, վերջին անգամ. երեկոյան տուն էի գալիս, հանկարծ մուտքի մոտից ինձ շատ հարազատ ձայն լսվեց:

- Բա ինչ կանես՝ անցնում ես ու չես էլ նկատում, որ էստեղ մարդ կա, բան կա (սա Դավթի ամենասիրած արտահայտությունն էր, որ հաճախ էր գործածում):

Զարմանքս չթաքցնելով. հարցրի.

- Գիշեր է, անձրև է գալիս, էս ինչո՞ւ ես նստել, գոնե մուտքում կանգնեիր...

- Տրամադրություն չունեմ տուն գնալու, արի մի քիչ զրուցենք, եսիմ՝ էլ կտեսնե՞նք իրար, թե ոչ...

Իրոք, այդ օրը նա շատ տխուր էր, ես նրան այդքան տխուր երբեք չէի տեսել. չկար նրա կատակը, չկար նրա մշտապես թրթռացող ժպիտը, դեմքի փոսիկը չկար, որը ինձ շատ էր դուր գալիս...

Տրամադրությունը բարձրացնելու համար, ասացի, որ զինվորական համազգեստը իրեն շատ է սազում: Նա էլ թե.

- Դու ինձ հենց այսպես էլ կհիշես մինչև վերադառնամ...

Եվ իրոք, ես նրան այդպես էլ հիշում եմ՝ կարճ կտրած մազերով, խորհրդավոր ու թաց աչքերով, գունատ դեմքով, զինվորա-

կան համազգեստը հագին, որը, իրոք, իրեն շա՜տ էր սազում: Հիշում եմ նրա վերջին խոսքերը.

- Չեմ ուզում տուն մտնել, ինչ-որ բան ինձ շատ է տանջում... Ուզում եմ ժամերով թրջվել անձրևի տաք կաթիլներից: Չեմ հասկանում՝ ի՞նչ է կատարվում ինձ հետ: Ուզում եմ սիրտս բացվի, մի քիչ ուրախացնեմ ծնողներիս, նոր գնամ, բայց ինչ-որ ներքին մի ուժ ինձ վանում է տանից, չեմ կարողանում մերոնց աչքերին նայել... Ուզում եմ գրկել հորս ու մորս, համբուրել, բայց չի ստացվում, ես ինձ շատ-շատ օտար եմ զգում...

Դա, թերևս, նրա ներքին ձայնն էր, որ հուշում էր մեզ համար անկանխատեսելին...

Եվ հաջորդ օրը նորից գնդում էր: Ծառայության խաղաղ օրերը Կիրովականում շատ կարճ տևեցին: Սահմանամերձ գյուղերի վրա թշնամու բացահայտ ոտնձգությունները խռովելու էին նաև 016 գնդի անդորրը: Իր զինակից ընկերների հետ Դավիթն էլ էր մեկնելու նաև Փամբակ, այնուհետև՝ Տավուշ, մասնակցելու էր Ներքին Կարմիրաղբյուր և Այգեպար գյուղերի միջև ընկած բարձունքների գրավմանը, տասնյակ վիրավոր զինվորների էր կրակի տարափի տակ մարտադաշտից դուրս բերելու, առաջին օգնություն էր ցույց տալու նրանց: Ու հասնելու էր Արծվաշեն...

- Վերջին անգամ զանգահարեց Վահանից,- վերհիշում է մայրը,- ասաց, որ իրենք շատ լավ են, թեև թեժ կռիվների են մասնակցում: Դա օգոստոսի 4-ին էր:

Արամայիսի օջախը միշտ հյուրընկալ է: Սնազգեստ կինը՝ տիկին Սնիլան, որքան էլ վիշտն անհարատելի, իր տան դուռը բացողին ընդունում է ժպիտը դեմքին, ջերմությամբ: Իսկ Էդվարդ և Լևոն տղաները իսկական տան զավակներ են, որոնց նմաններով իրավունք ունի հպարտանալու յուրաքանչյուր ծնող: Եվ հպարտ տխրությամբ հպարտանում է Արամայիս Միքայելյանը.

- Մենք տխրելու իրավունք չունենք: Թող տխրեն նրանք, ում զավակները խուսափում են հայրենիքի հանդեպ իրենց պարտքը կատարելուց, ովքեր փախուստի մեջ են և, հեռուների տաքուկ և ապահով անկյուններում ծվարած, սպասում են... Նմանները հայրենիքի խորթ զավակներն են, իրենց ծնողների ու հարազատների ամոթանքը: Ես ամոթով ապրել չէի ուզենա, և հիմա հպարտ եմ իմ հերոս զավակով...

Վերջերս նրանց հարկի տակ կրկին անուշ ձվողություն լսվեց. բարեհամբույր, սիրունատես Արմինե հարսը միանգամից զույգ արու զավակներ պարգևեց իր Էդվարդ ամուսնուն, Լիանա քույրիկին՝ երկու թմբլիկ ու կարմրաթուշ եղբայր, Հայոց աշխարհին՝

Դավիթ և Տիգրան անուններով երկու պաշտպան ու զինվոր, իսկ պապին ու տատին՝ երկու նոր Դավիթ, որ մեծանալու են ու հնչեցնելու իրենց հերոս հորեղբոր լռած կիթառը...

Եվ ապրելու է Դավիթը երկրորդ կյանքով: Ապրելու է «Ռեմբոն», ապրելու է գնդի հրամանատար Ալեքսանդր Թազագույյանի խոսքերով ասած, «իր լավագույն ԱՍ-ը»: Ապրելու է, որովհետև հերոսները մահ չունեն...

... Ու թեև հերոսները մահ չունեն, միևնույն է, ցավը մնում է ցավ, կորուստը՝ կորուստ, մորմոքը՝ մորմոք: Եվ այդ մորմոքն է, որ թղթին է հանձնել Դավիթի մայրը՝ որպես արցունքոտ հուշարձան իր փրկիչ որդու մշտաղողանջ հիշատակին:

ՈՐԴՈՒՍ՝ ԴԱՎԹԻՆ

Ա՜խ, Դավիթ, Դավիթ...
Իմ քաղցր բալիկ.
Այդ ի՞նչ արեցիր,
Այդ ո՞ւր գնացիր,
Ա՜խ, Դավիթ, բալաս,
Ինչո՞ւ հետ չեկար,
Ինչո՞ւ խաբեցիր, էլ չգանգեցիր...
Ինչո՞ւ ասացիր. «Մամ ջան,
Ոչ մեկին ու ոչ մի մարդու
Եվ ոչ մի անգամ դու չհավատաս,
Ես կգամ,- ասիր,-
Դու ինձ սպասիր...
Ա՜խ, Դավիթ, Դավիթ,
Իմ անուշ բալիկ,
Իմ համով, հոտով, իմ սիրուն բալիկ.
Ա՜խ, ո՞ւր մնացիր, ո՞ր սարում, ձորում,
Ո՞ր անտառներում ու ո՞ր լեռներում...
Ա՜խ. այդ ի՞նչ եղավ, այդ ո՞նց պատահեց,
Որ իմ քաջ որդիս, իմ հերոս որդիս,
Շատերի համար իմ փրկիչ որդիս,
Շատերի համար իմ բժի՜շկ որդիս,
Գնաց ու մնաց ու հետ չդարձավ...
Ա՜խ, Դավիթ, Դավիթ,
Իմ քաղցր բալա,
Իմ խելոք ու գիժ, իմ եղնիկ բալաս,
Ա՜խ, ասա՛, էլ ո՞նց ապրենք առանց քեզ,
Ա՜խ, ասա՛, էլ ո՞նց մնանք առանց քեզ...

Ախ, Աստվա՜ծ, Աստվա՜ծ,
Բոլոր մայրերի, բոլոր հայրերի,
Բոլոր քույրերի ու եղբայրների
Ու ողջ մարդկության անունից
Խնդրում, աղաչում եմ քեզ՝
Թող պատերազմը կորչի, վերանա,
Թող էլ ոչ մի մայր ինձ պես չսգա,
Թող էլ ոչ մի հայր որդուն չկորցնի,
Թող խաղաղություն տիրի աշխարհին,
Թող որ մայրերը, լացի փոխարեն,
Միշտ ուրախության արցունքներ թափեն...

ՀԻՆԳ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԿ ԵՂԲԱՅՐԸ

ԿԱՄՈ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Մայրը՝ Վիկտորիան, խենթացել էր: Աշխարհով մեկ էին եղել Ֆլորա, Ֆրիդա, Գեղեցիկ քույրերը: Իսկ հայրը՝ Չարենցյան քաղաքում մեծ հարգանք ու համարում ունեցող հյուսն Ռոբերտը, այդ օրը քանի՜ հարևան-բարեկամի հետ իր օրինյալ զավակի ծննդյան կենացը խմեց: Ու՝ գինովցավ: Ինչպե՞ս չխմեր, ինչպե՞ս չգինովնար, չէ՞ որ լույս աշխարհ էր եկել իր երեք դուստրերի միակ եղբայրը: Չէ՞ որ, վերջապես, պապենական օջախի ծուխն անմար պահող Հո՜ւյսն էր արարվել՝ ձյունաճերմակ մաշկով, մանուշակ աչքերով աստվածատուր մի մանկիկ, մի հրաշամանուկ, անուշ ճռվողող իր բալիկը: Այդ օրը ծնվել էր իրենց միևնուճարը, որ հետո մի ողջ ժողովրդի պարծանքն էր դառնալու, հերոսանալու էր Տավուշի, Վահանի, Արծվաշենի ահեղ կռիվներում...

Խելացի, խոհեմ, երկնի խորությունն աչքերում թաքցրած Կամոն դեռ չորս տարեկանից սիրում էր իր տարիքին անհամապատասխան տրամաբանական հարցերով անհանգստացնել ծնողներին, քույրերին. մյուս մեծերին. «Հայրիկ, ամպերն ո՞ւր են գնում». «Ծառերն ինչո՞ւ են կանաչ», «Ինչի՞ց է առաջանում անձրևը»: Իսկ երբ փոքր-ինչ էլ մեծացավ, սկսեց հաճախակի դիմել մորը. «Մայրիկ, ինձ եղբայր պարգևիր, ես էլ եմ ուզում եղբայր ունենալ, որ էլ չասեն, թե աղջիկների մեջ լող եմ տալիս...»: Բայց Կամոյին բախտ չէր վիճակված իր թիկունքին թիկունք դարձող գոնե մի եղբայր ունենալ, մեն մի եղբայր. իրենից հետո ծնվածները նորից աղջիկներ էին լինելու՝ Լուսինեն, Գայանեն... Հինգ քույր, մի եղբայր, հինգ քրոջ ապավեն, հինգ քրոջ հպարտություն, հինգ քրոջ ուրախություն ու պարծանք... Ի՜նչ սքանչելի է հինգ քրոջ փաղաքշանքն ու սերը և որքան մեծ պարտքի, պարտականության զգացումը նրանց նկատմամբ: Ծաղիկներ են իր քույրերը, քնքշաբույր ու անուշ ծաղիկներ: Իսկ ինքը օջախի պաշտամունքն է:

Եվ այս համեստ կենսակերպով, խաղաղ ու ջերմ ընտանեկան մթնոլորտում հասակ է առնում հայրենիքի ապագա զինվորը, Մարտական խաչի առաջին աստիճանի շքանշանի ապագա ասպետն ու հերոսը: Իսկ մինչ այդ՝ ուսումնառության արգասավոր տարիներ Չարենցավանի N 4 դպրոցում, առանձնակի սիրո և ուշադրության դրսևորում գծագրության, երաժշտության, նկարչության հանդեպ: մանավանդ՝ վերջինի, որ իբրև առաջին սեր, հրապուրելու էր Կամոյին, ստիպելու էր ոտք դնել Երևանի գեղարվեստի ուսումնարան, մանրանկարչության բաժին: Այստեղ նույնպես հաջողություններն ակնհայտ էին լինելու՝ ինչպես սպորտի ասպարեզում (տասնմեկ տարեկանից զբաղվել է ձյուդո-ըմբշամարտով և հրազդանյան մրցումներում գրավել առաջին տեղը): Ուսումնարանի պատերի ցուցափեղկերում այսօր էլ կան ու խնամքով պահվում են չարենցավանցի այս տղայի թեև ուսանողական ձեռքով, բայց վարպետորեն վրձնած մանրանկարներից շատերը՝ իբրև գեղեցիկի խորհրդանիշ ու իբրև մասունք:

- Որդիս կարող էր իր ժողովրդի պատիվը բարձր պահող, ճանաչված մարզիկ դառնալ, նա դրա համար ուներ բոլոր տվյալները, մարզիչներն իրենք էլ էին խոստովանում դա և մեծ սպասելիքներ ունեին,- պատմում է մայրը: - Բայց քանի որ նա էր մեր միակ հույսը, մինուճարը՝ իբրև արու զավակ, ես երկյուղում էի՝ Աստված ոչ անի, վտանգավոր մարզաձև է, բա որ հանկարծ մի բա՞ն պատահի, ի՞նչ ենք անելու: Եվ հորդորեցի թողնել ձյուդոն: Բայց Կամոս ձեռք չքաշեց սպորտից՝ մինչև ծառայության մեկնելը պարապում էր արևելյան մարզաձևերով...

Մայրական սիրտ էր, պիտի տագնապեր, հատկապես, որ սեփական աչքերով էր տեսել որդուն մրցասպարեզում, սրբել էր նրա ճակատից ծորացող քրտինքը պարապմունքներից հետո...

Դառը քրտինքով ապրող գերդաստան: Հինգ քույր: Հագուստկապուստ է պետք, վաղը, մյուս օր ուրիշի տուն հարս են գնալու, հենց այդ գնալու մասին մտածել է պետք, ձեռքն ընկած կոպեկը քառուփուչ անելն իրենը չէ, թեև ծնողների գրպանը միշտ էլ բաց է իր՝ մինուճարի համար: Մանավանդ՝ Երևանում ուսումնառության տարիներին, երբ նա արդեն ամեն ինչ ծանր ու թեթև անող լրջմիտ երիտասարդ էր, հասկանում էր, որ աններելի է իր հյուսն հոր ու ներկարար մոր տքնանքով վաստակածից շռայլորեն օգտվելը. «Երբ կամենում էի մի փոքր ավելի գումար տալ՝ մտածելով, որ ջահել տղա է, ուսանողական միջավայր՝ ընկերընկերուհիներ կունենա, հանկարծ չնեղվի, փաղաքշանքով մերժում էր. «Ոչ, մամ ջան, ինձ երեք ռուբլին էլ բավական է, ի՞նչ եմ անելու, հո ռեստորան չե. մ մտնելու»: Իսկ երբ ստանում էր ամսվա կրթաթոշակը, տուն հասնելուն պես, ամբողջությամբ տալիս էր ինձ՝ իրեն կոպեկ չվերցնելով. «Մամ,- ասում էր,- գիտե՞ս, չէ, որ ես էլ եմ այս տան անդամ և պարտավոր եմ նաև ինքս ձեզ օգնելու»:

Երեքուկես տարի սովորելուց հետո Կամոն գերազանց գնահատականներով ավարտում է գեղարվեստի ուսումնարանը: Ավարտում է, բայց ուսման ծարավը դեռ չի հագեցրել. չէ՞ որ ինքն արդեն պարզ գիտակցում է իր ինչի ընդունակ և ինչի կոչված լինելը: Իրենը վրձինն է, գույների կախարդական աշխարհը, գերագույն նպատակը՝ նկարիչ դառնալը: Իսկ նկարիչ դառնալու համար դեռ քիչ են ուսումնարանում ձեռք բերած գիտելիքները, հմտությունն ու վարպետությունը՝ չնայած արդեն տասնյակ կտավներ ունի վրձնած՝ սրբապատկերներ, եկեղեցիներ, բնության գողտրիկ տեսարաններ, դիմանկարներ, նատյուրմորտներ... Եվ վճռում է ընդունվել մայրաքաղաքի գեղարվեստա-թատերական ինստիտուտի գեղանկարչական բաժին: «Վստահ չլինեի ուժերիս՝ չէի դիմի»,- ոգևորված ասում է հարազատներին ու բախում փափագելի ինստիտուտի դուռը: Քննություններն հանձնում է հաջողությամբ: Ոգևորությունն անսահման է: Տանեցիներինը՝ նույնպես... Բայց...

Մրցույթից «դուրս է մնում» ուսանողի կոչմանն իսկապես արժանի երիտասարդը:

«Ի՞նչ անել, դեռ էն գլխից է աշխարհն անարդար,- միտք է անում Կամոն,- գլուխդ պատովն էլ տաս, միևնույն է, ոչինչ չես փոխի, հարկավոր է ինչ-որ բան մտածել»: Ու ոտք դրեց գործարան՝ իբրև նկարիչ: Այստեղ էլ սերն ու հարգանքը եկան առանց ձիգերի. կոլեկտիվն ընդունեց ու սիրեց համեստ, աշխատասեր երիտասարդին:

Կյանքի, իրականության անարդարությունը ճաշակած Կամոյին, այնուամենայնիվ, չէր լքել ուսումը շարունակելու երազանքը: Աշխատանքին զուգահեռ, ընդունվում է Չարենցավանի «Թարիզ» կոոպերատիվ ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետ. «Վրձինը ձեռքիցս հո չե՞ն խլի, երբ էլ ուզեմ՝ կնկարեմ»: Իսկ իրավաբանի, դատավորի մասնագիտությունը դեռ մանուկ հասակի իր երազանքներից էր: Ու բացվեցին ինստիտուտի դռները ուսումնատենչ երիտասարդի առաջ՝ վերստին թեր պարգևելով նրան: Բայց Կամոյի ուրախությունն այստեղ էլ էր կարճ տևելու. ուսման համար պահանջվելիք ահռելի գումարը փշրելու էր նրա երազի թևերը, և ինքը, հակառակ ծնողների՝ ինստիտու-

տը չթողնելու համառ հորդորներին, կիսատ էր թողնելու դասընթացները և նվիրվելու էր աշխատանքին, որպեսզի հոր ու մոր խոնջացած կռները գոնե դույզն-ինչ թոթափեին տարիների հոգնածությունը...

Աշխատելով գործարանում, միևնույն ժամանակ սկսեց զբաղվել կոշկակարությամբ: Նույն մատները, որ սքանչելի կտավներ էին վրձնում, հիմա էլ սկսեցին բոլորովին ուրիշ շարժումներ յուրացնել: Քանի՞ ընկերոջ, հարազատների է լավություն արել նյութականի կարիքն ունեցող ընտանիքի անշահախնդիր այս զավակը: Քանի՞ հարևանի է օգնության ձեռք մեկնել: Եվ որքա՞ն սեր ու գորովանք ուներ ծնողների հանդեպ, առանց որոնց հացը կուլ չէր գնում: Եթե անգամ ուշ ժամի տուն գար՝ պիտի ստիպեր միասին ճաշել՝ ասելով. «Մենակ ուտել չեմ կարող, կերեք՝ թող աչքս տեսնի, որ հանգիստ լինեմ»: Որքա՞ն էր սիրում իր շուրջբոլորը թավռացող թիթեռնիկ քույրերին, որոնցից ամենափոքրիկի՝ Գայանեի հետ «Լամբադա» էր պարում, հա՛ պարում ու հոգնել չուներ... Իր զգայուն հոգին, իր զգայուն սիրտը... Ինչպես էր խոցվելու, երբ գործարանի «Լուսաբաց» երգի համույթի (այստեղ էլ էր աշխատում իբրև նկարիչ) հետ մեկնել էր Լենինական, տեսել երբեմնի զվարթ քաղաքի մռայլ պատկերները: Ի՞նչ տխրությամբ էին լցվել նրա երկնագույն աչքերը, ի՞նչ տառապալից էին դարձել դրանք...

«Քսանն արդեն հասուն տարիք է, ու թեև հայրենիքի հանդեպ դեռ պարտք ունի կատարելու, ինչ կա որ,- մտածում էին ծնողները,- ժամանակն է արդեն հարսնացուի մասին մտածել, մի անուշիկ աղջիկ ընտրել: Լավ աղջիկները շատ են, բայց ո՞րն է մեր որդուն համապատասխան...»: Ու մայրն սկսեց արդուզարդի հոգսերը հոգալ, ընտիր հագուստներ գնել իր ապագա չնաշխարհիկ հարսնուկի համար, որին պիտի փայփայեր հարազատ մոր հանգույն: Բա իր փեսացու որդո՞ւ համար գնած կոստյումը. որքա՞ն է սազում նրան: Այսօր էլ մոր ականջներում, իբրև անուշ մեղեդի, հնչում են Կամոյի խոսքերը, երբ նոր գնած կոստյումը հագավ ու ասաց. «Մամ ջան, սա լավ պահիր, որ վերադառնամ ծառայությունից, հարսանիքիս կհագնեմ...»:

... Ծանուցագիրն եկավ անակնկալ: Մայրը՝ Վիկտորիան, տանը չէր՝ բացակայում էր Հայաստանից: Հեռախոսազանգով տեղեկացրին, որ վաղն առավոտյան Կամոն մեկնելու է բանակ: մոր սիրտ է՝ մղկտաց, հեռվից-հեռու փորձեց վերադառնալ, հասցնել մայրական օրհնանքը տալ իր սիրասուն զավակին, բայց չհասցրեց:

Ստացվեց առաջին նամակը: Գրել էր Կիրովականից և տեղեկացրել, որ մայիսի 28-ին Երևանում է կատարվելու երդման հանդիսավոր արարողությունը: Ողջ ընտանիքն շտապեց Երևան: Հանրապետության հրապարակում խրոխտ շքերթ է: Մայրը, քույրերը, ամենքը քննախույզ հայացքով, սրտատրոփ հետևում էին կուռ շարքերով անցնող զինվորներին: Չնկատեցին: Բայց ահա ինչ որ մեկը թեթևակի դիպավ մոր ուսին: Մայրն սթափվեց, հայրենիքի զինվոր իր որդին էր: Այնպես էր փոխվել, առնականացել. «Կամո, իմ զինվոր բալաս, մաման քեզ մատաղ...»: Ուրախության արցունքն աչքերին, թևանցուկ արեց ու քայլեց շարքին համընթաց: Ու հպարտացավ, որ ինքը զինվորի մայր է, հայրենիքի համար ամենածանր ժամանակների զինվորի մայր: Ու հիմա կարոտի ցավն ու վիշտը հոգում, արցունքած աչքերով է հիշում Վիկտորիա մայրիկն այդ օրը. «Կամոս խնդրել էր հրամանատարին, որ ինքը քայլի շարքի եզրային մասով, որպեսզի ես իրեն տեսնեմ: Ասել էր, որ իրեն ճանապարհելիս ես տանը չեմ եղել... Ու հրամանատարը չէր մերժել որդուս խնդրանքը»:

Հաջորդ նամակը նույնպես Կիրովականից էր: Գրում էր, որ ամեն ինչ հրաշալի է, իր համար մտահոգվելու ոչինչ չկա, որ ինքն է մտահոգ հացի նոր թանկացման պատճառով. «Շատ եմ անհանգիստ՝ ո՞նց եք հարմարվում այդպիսի թանկության պայմաններում»: Նամակն ավարտել էր «Հայ մայրեր, որդիներդ չեն դավաճանի հայրենիքին» տողերով: Իսկ մեկ ուրիշ նամակում, հարազատներին, մորը հանգստացնելու համար գրել էր. «Մեր ջան, մի՛ մտածի, մենք կռվից շատ ենք հեռու, բոլորովին չգիտենք էլ ինչ է կատարվում սահմանում»: Այսպես պիտի գրեր, հո ժամանակից շուտ վախով ու տագնապով չէր լցնելու ծնողների, քույրերի հոգիները: Չէ՞ որ առանց այդ էլ նրանք անհանգիստ էին՝ քաջ գիտակցելով, որ հայրենիքին պատերազմի վտանգ է սպառնում:

Օգոստոսի երկուս: Վահան գյուղ: Կիրովականի դեսանտայինների ջոկատը տեղափոխվել է այստեղ՝ դիմակայելու թշնամական ոտնձգություններին: Հարազատները եկել են տեսակցության: Վերջի՞ն տեսակցության: Հրամանատարը թույլատրել է երկու ժամով «կտրվել» ծառայությունից՝ միաժամանակ զգուշացնելով՝ հանկարծակի տագնապի ազդանշան հնչեցնելու դեպքում շտապ ներկայանալ...

Այդ օրը Կամոյի կապույտ հայացքում թանձրացել էր թախիծը: Այդ օրը նա իր հարազատներին տեսնում և հրաժեշտ էր տալիս վերջին անգամ...

Մի քանի օր անց, դեսանտային գնդի ընտրյալներն արդեն Արծվաշենում էին: Կյանքի գնով իրենց անմահությունը նվաճելու նախաշեմին էին նրանք:

... Ու վերատին հառաչում է սիրտը մայրական.

ՈՐԴՈՒՄ՝ ԿԱՄՈՅԻՆ

Կամո՛, որդի՛ս, կրում ես դու քաջի անուն,
Քո երակներում՝ հերոսի արյուն:
Գիտեին մարդիկ, որ արծիվ էիր,
Արծվաշենին քեզ պաշտպան տարան,
Բայց չար անգղը մտնում է դարան:
Եվ չարը գործեց իր չարությունը,
Ավերակ դարձավ արծվի բույնը...
Իսկ դո՞ւ... Դու ո՞ւր ես,
Չէ, չհավատաց մոր սիրտը մահին,
Չանսաց վշտին ու նրա դավին:
Մայրդ թաց աչքով սպասում է դեռ,
Որ ողջ ես, կգաս, անմահ ես, անմեռ...
Մենք էլ ենք իրոք հավատում, որ կաս,
Դե արի՞, տղա՛ս,
Լսի՞ր կարկաչը հայրենի ջրի
Ու կանչը լսի՛ր սիրող մայր հողի,
Քո տունը դարձի՛ր,
Նորոգի՛ր բույնդ,
Ավեր է տունդ...
Լսիր, իմ Դավիթ,
Ուժ տուր քո բազկին,
Ելիր խոր հորից
Ու փրկիր ազգդ...



ՓՐԿՎԱԾԸ՝ ՓՐԿԱՐԱՐ

ՄԽԻԹԱՐ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Գեղամա լեռների գոգավորության մեջ ծփացող Սևանա լճի անբիծ հայելին երբեմն-երբեմն փշաքաղվում է զեփյուռի մեղմ շնչից՝ ոչ մի վտանգ չկանխագուշակելով երկու առագաստանավորդների համար: Մեղմ ծփանքը նրանց հոգիներն այնպես է թովել, որ չեն էլ նկատում ոչ սպիտակագորշավուն ամպերի կուտակվելը. ոչ էլ արևի՝ դեպի մայրամուտ թեքվելը:

- Մխիթար, ժամանակն է, չդառնա՞նք դեպի ափ,- վերջապես ասես ինչ-որ բան գուշակելով, ասում է վառվռուն աչքերով երիտասարդը:

- Մի քիչ էլ վայելենք, խանգարող ոչինչ չկա,- ընկերոջը հորդորում է ամրակազմ պատանին:

Եվ առագաստանավը շարունակում է թեթև ելևեջվող իր սահքը արդեն բարձրացող ալիքների վրա: Ափը բավականին հեռու է, հորիզոնին չի նկատվում ոչ նավ, ոչ նավակ: Ոպեներն անցնում, դառնում են ժամեր... Եվ հանկարծ արթնանում է բնության տարերքը. սաստկանում է իրիկնային քամին, լիճն սկսում է ալեկոծվել՝ ասես ընդերքում հսկաներ են դուրս եկել մենամարտի: Առագաստանավորդները վստահ են իրենց ուժերին ու մարզաձևի առանձնահատկություններին տիրապետում են գերազանց: Բայց որքան էլ մարդկային կամքը անհողդողդ՝ միևնույն է, առավել զորեղը բնության խենթացած ուժերն են, բնության անսանձ տարերքը: Ահռելի մի ալիքի հարվածից, թեթև տաշեղի նման, երկինք է շպրտվում առագաստանավն ու ջարդուփշուր եղած, սուզվում ալեբախ ջրերի մեջ: Խիզախ նավորդները, որքան էլ տոկուն, անկարող են այլևս դիմակայել. նրանց հոգնած բազուկները հազիվ թե կարողանան իրենց բաղձալի ափ հասցնել: Բարեբախտաբար, լողորդների հագին փրկարար ժիլետներ կան, որոնք էլ նրանց հոգնած մարմինները պահում են ջրի երեսին այնքան ժամանակ, մինչև լճի փրկարար ջոկատի անդամները,

ջահեր վառած, մոտորանավակներով հետախուզում ու գտնում են սառը ջրերում մահվան դեմ մաքառող տղաներին: Շուրջ վեց ժամ էր անցել: Գտնում են կենդանության նշաններ ցույց չտվող նավաբեկյալներին և անմիջապես հասցնում Սևան քաղաքի հիվանդանոց: Այդ օրը 1988 թ. օգոստոսի ինն էր:

... Կեսգիշերին Գեորգ և Նադյա Չիլինգարյանների բնակարանում չարագուշակ ծղրտոցով հնչեց հեռախոսազանգը: Զանգահարողները տեղեկացրին, որ Մխիթարը հիվանդացել և պառկած է հիվանդանոցում: Մոր սիրտը վատ բան գուշակեց՝ Աստված իմ, մի լուրջ բան պատահած չլինի՞: Եվ ծնողները փութացին դեպի Սևան: Մխիթարին նրանք գտան հիվանդանոցի վերակենդանացման բաժնում, գրեթե անշունչ պառկած, բժիշկների հսկողության տակ: Քսանչորս ժամ անց, սևանցի բժիշկները խորհուրդ տվեցին նրան տեղափոխել հանրապետական հիվանդանոց: Մի օր էլ այստեղի վերակենդանացման բաժանմունքում անցկացնելուց հետո, հաջորդ առավոտյան բժիշկներն ուրախալի լուրն ավետեցին՝ գիտակցության է գալիս, թեև վիճակը շատ է ծանր: Մանրակրկիտ զննումներից պարզվեց, որ թոքերի սուր բորբոքում է առաջացել, անհրաժեշտ է համապատասխան երկարատև բուժում:

Երբևէ կանցնե՞ր, արդյոք, առագաստանավորդներին փրկող տղաներից որևէ մեկի մտքով, թե մահից մազապուրծ մարզիկներից մեկը տարիներ անց ինքն է հազարներին փրկելու մահվան երախից, որ Մխիթար անունով պատանին դառնալու է ազգային հերոս, որ նրա անունը շուրթից-շուրթ է անցնելու ու անմահ տառերով է գրվելու հայոց պատմության էջերում:

Մխիթար Չիլինգարյանը ծնվել է 1972 թվականի մայիսի 16-ին, Երևանում: Ուսումնառությունն սկսել է N 118 դպրոցում, այնուհետև այն շարունակել N 18 միջնակարգ պրոֆտեխուսումնարանում՝ ամենուր վայելելով ուսուցչական կոլեկտիվի, միջավայրի սերն ու հարգանքը:

Խոհեմ պատանին լավ էր հասկանում, որ այնքան էլ նախանձելի չէ իրենց ընտանիքի սոցիալական վիճակը: Ուստի ձգտում էր արագորեն ինչ-որ մասնագիտություն ձեռք բերել: 1990-ին, ավարտելով ուսումնարանը, սկսեց աշխատանք որոնել: Բայց աշխատանք որտեղի՞ց՝ չեն գործում հիմնարկ-ձեռնարկությունները, ամենուր կրճատումներ են, կյանքն օր-օրի թանկանում է: Ի՞նչ անել: Ծնողներին, այնուամենայնիվ օգնել է պետք: Իրենից փոքր եղբայր ուներ՝ Վարդանը, քույր ուներ՝ Աննան: Մեծը փոքրերին պետք է հասնի: Եվ որոշեց անդամագրվել 1988-ի երկրաշարժից հետո ստեղծված «Սպիտակ» փրկարարական ջոկատին: Անդամագրվեց ու անմնացորդ նվիրումով լծվեց իր գործին: Իսկ գործ, իրոք որ այստեղ շատ կար՝ աղետյալ շրջանների համար ստացված միջոցների բաշխում, նորակառույցների շինարարություն, շուրջօրյա հերթապահություն: Ո՞ր մեկն անել, չէ՞ որ նաև տանն անելիքներ կան, ընտանեկան ջերմ ու կանչող մթնոլորտ կա, սիրասուն մայր կա, հայր կա, որի հետ կիսվելու այնքան բան ունի, անուշիկ քույր ու եղբայր կան, որոնք՝ իրեն ու ինքը նրանց արդեն կարոտում են: Տանն է ու կարոտում է, բա որ վաղը, մյուս օրը բանակ գնա՞. արդեն ժամանակն է...

Ու եկավ 1992 թվականի մայիսի 1-ը: Մխիթարին կանչեցին Մաշտոցի շրջանի զինկոմիսարիատ: Մայիսի 3-ին նա արդեն Կիրովականի նորաստեղծ դեսանտային գնդում էր՝ իր զինակից ու նաև բախտակից ընկերների կողքին, որոնցից տասներկուսի ճակատագիրը նույնն էր լինելու, անցնելիք մարտական փառահեղ ուղին՝ նույնը, նույնը նաև հավերժական ննջելատեղին՝ Եռաբլուրը, որին բոլոր մահկանացուներս չէ, որ ի զորու ենք արժանանալ...

Մայիսի 29-ին երեք օրով տուն եկավ: Թվում էր, թե ոչ մի բոպե չպիտի բացակայի հարազատ օջախից: Բայց տանը մնաց միայն գիշերները, որովհետև ընկերական շրջապատը մեծ էր, «Սպիտակ» փրկարարական ջոկատի գրասենյակը՝ իրենց տանն այնքան մոտիկ, ու ինքը՝ բոլորից սիրված, ու բոլորի կարոտով հոգին լեցուն: Մայրը նեղսրտեց՝ այ բալա, ախր երեք օրով ես տանը, մի քիչ էլ մեզ մոտ մնա, կարոտներս առնենք:

Իսկ նա, փարվելով մորը, ժպտում էր.

- Մամ ջան, գիշերը հո տո՞ւն եմ գալիս...

Երեք օրն անցավ երեք բոպեի նման: Մեկնելուց առաջ հիշեց, որ նոյեմբերին լրանում է եղբոր՝ Վարդանի 18 տարին, ասել է, թե նրան էլ են բանակ տանելու: Եվ քանի որ ինքը կարգ ու կանոնի սիրահար էր, չմոռացավ պատվիրել մորը.

- Երբ Վարդանին բանակ կանչեն, կասես այնպես անի, որ ընկնի Կիրովական, այնտեղ ծառայությունը հրաշալի է, կարգ ու կանոն կա, իսկական տղամարդ ես դառնում...

Մոր աչքերը լցվեցին. ասես նոր էր ծառայության ճանապարհում իր զավակին:

Շաբաթներ անց Մխիթարը կրկին առիթ ունեցավ լինելու Երևանում՝ զինվորների էր ուղեկցել պաշտպանության նախարարություն: Ուզում էր մեկ անգամ էլ տեսնել ծնողներին, հարազատներին, բայց ժամանակը սուղ էր: Միայն կարողացավ զանգահարել, հարցնել նրանց որպիսությունը:

Հետո բավականին երկար ժամանակ լռություն էր: Եղբոր սիրտը չհամբերեց՝ գնամ, տեսնեմ որտե՞ղ է, ինչո՞ւ նամակ չի գրում: Եվ իր Դավիթ ընկերոջ հետ մեկնեց Լոռի, որտեղ գնդի տղաները զինվարժություններ էին անցկացնում: Կարճատև հանդիպումից հետո, երբ եկավ եղբայրների հրաժեշտի պահը, Մխիթարն ասաց.

- Վարդան, խնդրում եմ մայրիկին չասես՝ մեզ այստեղից սահման՝ Տավուշ են տանելու, այնտեղից, հնարավոր է, Արծվաշեն...

Ո՞ր մոր աչքին քուն կգա, եթե իմանա, որ որդին հայտնվել է կրակագծում: Եվ Վարդանը կատարեց եղբոր պատվիրանը:

Օրերը ծանր էին անցնում: Ծանր ու տագնապալի: Մայրական սիրտն ահից կծկվում էր: Եվ ահա դստեր՝ Աննայի ծննդյան օրը՝ օգոստոսի 2-ին. նորից զանգ, այս անգամ՝ ավետաբեր. զանգահարողը Մխիթարի հետ ծառայող մի զինվորի եղբայրն էր: Նա տեղեկացնում է, որ տղաները Վահան գյուղում են և հեռախոսահամար է տալիս: Մոր ուրախությանը չափ ու սահման չկա: Որպեսզի անց Վահանից պատասխանեցին՝ Մխիթարը դիրքերում է, փոքր-ինչ սպասեք... Մոր ձեռքերն սկսեցին հուզմունքից դողալ, ուզեց լաց լինել, բայց հիշեց, որ Աննայի ծննդյան օրն է, պետք չէ այդ օրն արցունքոտել:

Խոսեցին շատ կարճ՝ հեռախոսն երկար զբաղեցնել չէր թույլատրվում: Մխիթարը չհասցրեց անգամ քրոջը շնորհավորել ծննդյան օրվա առթիվ.- Օրերս կզանգահարեմ,- խոստացավ մորն, ու կապն անջատվեց:

Օգոստոսի 3-ին Չիլինգարյանների բնակարանում հնչեց այն հեռախոսազանգը, որին սպասում էին սրտատրոփ: Այս անգամ մայր ու որդի խոսեցին երկար: Մորը խնդրեց իր փոխարեն, թեև ուշացումով, շնորհավորել ու համբուրել քրոջը, հարցրեց հորից, ընկերներից, հարևաններից, բոլորից: Ասես սիրտը վկայում էր, որ այլևս չի լսելու մոր կարոտաբաղձ ու անուշ ձայնը:

- Մխիթար, տղաս, ուզում ենք գալ քեզ տեսնելու,- ցանկություն հայտնեց մայրը:

- Մայրիկ, նաև դրա համար եմ զանգահարել, որպեսզի զգուշացնեմ՝ չգաք, մեզ ուրիշ տեղ են տանում, որ գաք էլ՝ չեք գտնի: Այնպես որ, մի եկեք ու իմ մասին էլ չմտածեք, ամեն ինչ լավ է լինելու...

Իրոք, դա մոր և որդու վերջին զրույցը եղավ: Հուսադրող վերջաբանով զրույցը, որ մոր ունկերում կինչի հավիտյանս.

Ու նորից սգում է սիրտը մայրական.
Մտամոլոր, լուռ ու անձայն

Կոծում եմ ես օրերն իմ սև.-
«Ի՞նչ ես լալիս, անգին մայրիկ...»,-
Ուրվականն էր դա իմ բալի..
Փափագ սրտով ես մոտեցա,
Որ գրկեմ ու համբուրեմ,
Ավա՜ղ, բալես շա՜տ էր հեռու,
Ու չհասա ես իրեն..

«ՄԵՆՔ ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ԿՎԵՐԱԴԱՌՆԱՆՔ...»

ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Արարատյան դաշտի հարյուրավոր գյուղերից մեկն էլ Արտիմետն է (նախկին Աթարբեկյանը), գյուղն այնքան մոտ է Էջմիածնին, որ նրա խաղաղ առավոտները «մյուռոնվում են» Մայր տաճարի զանգերի դողանջներով: Եվ այդ դողանջներն այսօր ի լուր աշխարհի ավետում են արտիմետցի երկու քաջազունների անունն ու սխրանքը, որոնք լույս աշխարհ եկան անմահության լուսապսակը ձակատներին: Ովքե՞ր էին նրանք: Կարեն Սերյոժայի Մնացականյան, Ժորա Ալբերտի Հակոբյան՝ երկուսը Արծվաշենի տասներկու քաջազուններից, որոնք իրենց երկրային կյանքն ապրեցին միասին, մանկապարտեզ ու դպրոց հաճախեցին միասին, բանակ զորակոչվեցին միասին, ի մարտ գնացին միասին ու միասին անմահացան Եռաբլուրի վեհ բարձունքին: Այսպիսի վիճակ էր գցել նրանց համար բախտը՝ անբաժան լինել անգամ հետմահու: Թեև նրանք հենց իրենց խենթ մահով էին հաղթելու մահին...

... Երբ 1972 թվականի ամանորից քսան օր անց՝ հունվարի 20-ին լույս աշխարհ եկավ Սերյոժա և Սիլվա ամուսինների անդրանիկ արու զավակը, մայրը խանդաղատանքով շշնջաց. «Փառքդ շատ, երկնային, օջախիս ծուխը չի մարի...»: Ու մայրական սրտի ողջ գորովանքը շռայլորեն նվիրեց նրան, գուրգուրեց իր ձագուկին՝ սրտատրոփ սպասելով նրա առաջին թոթովանքին, առաջին քայլն անելուն: Եվ աշխույժ, առույգ երեխան, դալար, կենսունակ շիվի նման, մեծացավ օր-օրի, հաճախեց հենց իրենց տան դիմաց գտնվող մանկան ճռվողյունով լեցուն մանկապարտեզը: Կմտածե՞ր, արդյոք, փոքրիկ Կարենը, որ երբևէ այդ մանկապարտեզն իր անունով կանվանակոչվի: Այն նույն մանկապարտեզը, ուր ինքն առաջին անգամ վախվորած ոտք դրեց՝ մոր ձեռքից ամուր բռնած... Հետո եկավ դպրոց գնալու

ժամանակը: Դեռ մանուկ հասակից առույգ, աշխույժ խաղերի սիրահար ու խաղերից հոգնածություն չունեցող երեխան հրապուրվեց ֆուտբոլով: Ճարպիկ խաղացող էր, անորսալի: Ճարպկության համար ընկերները նույնիսկ մականունով կնքեցին՝ «Չուկո»: Եվ «Չուկոն» թիմի զարկերակն էր, ուժ ու եռանդ տվողը, թիմի հպարտությունը: Դժգոհելը, տրտնջալն իր համար չէին, եթե անգամ ծանր վնասված լինեի ձեռքը կամ ոտքը: Կամային էր ցանկացած հարցում, սկզբունքին, նպատակին՝ հետամուտ: Որքան լուրջ՝ նույնքան էլ կատակասեր էր, բառ ու բանը հումորով շաղախող: Ու հումորը սուր էր, տեղին: Ընկերների պաշտամունքն էր, այսօր էլ նրա անունով են երդվում Ռուդիկը, Արմենը... Ծնողների, հարազատների հպարտությունն էր թելիկ-մելիկ հասակով համեստ այս պատանին... Աղավնիներ էր սիրում, ձերմակ-ձերմակ աղավնիներ, որոնց դունդունոց-լեզուն ասես ինքը հասկանում էր, որոնք ասես իր մաքրաթև երազներն էին, որ ճախրում էին կապույտ երկնքում ու որոնց ճախրին հետևում էր մինչև գլխապտույտի հասնելը:

Կարենը՝ արտիմետցի այս պատանին... Որքա՜ն գորով ու գութ կար իր հոգում, որքա՜ն անշահախնդիր էր, սրտացավ ու կարեկից...

Մի անգամ Էջմիածնի զորամասերից մեկում ծեծ ու կռիվ եղավ: Այս անգամ ծեծվածները երկու ուկրաինացիներ էին, որոնք սարսափահար լքել էին զորամասը և բարեգութ մարդկանց օգնության կարիքն էին զգում: Բախտները բերել էր՝ նրանք հանդիպել էին Կարենին և Ժորային, պատմել իրենց հետ կատարվածը: «Այլևս երկմտանք չկա, գնում ենք մեր տուն, և մեր տանն եք մնում այնքան, որքան դրա կարիքը կլինի...»: Բերում են տուն, բայց բնակարանը դեռ նոր է, հարմարություններ չկան: Ու անցնում են գործի՝ առաջինը կարգի են բերում զինվորների համար «նախատեսված» սենյակը, տրամադրում առաջին անհրաժեշտության իրեր: Երբ ամեն ինչ արված է, Կարենը կես կատակ-կես լուրջ, դիմում է մորը.

- Եթե ամեն օր ու ճիշտ ժամանակին զինվորների համար լավ ճաշեր չպատրաստես, ես հացադուլ կանեմ:

Նույն պատվիրանն իր մորն է փոխանցում նաև Ժորան: Հայկական երկու սուրբ օջախներում ջերմ ու հարազատ մթնոլորտ է ստեղծվում փախած օտարազգի զինծառայողների համար: Որքան մեծ է նրանց երախտագիտության զգացումը, որքա՜ն են իրենք պարտական այս նվիրյալ մարդկանց, որոնք իրենց երեք ամիս ապաստան տվեցին, կերակրեցին ու ընդունեցին իբրև հա-

ռազատների: Եվ հիմա հրաժեշտ են տալիս այս սքանչելի մարդկանց...

Ամիսներ են անցել զինվորների գնալուց: Եվ ահա թակում են դուռը: Անծանոթ, օտար մարդիկ են: Պարզվում է, որ այն նույն զինվորների ծնողներն են, որոնց բանակային զավակները պատմել են ամեն ինչ, աստվածացրել հավատավոր հայ ընտանիքներին, նրանց մեծին ու փոքրին:

- Եկել ենք ձեր ձեռքն ու շեմը համբուրելու, հարազատներս,- ու գրկախառնվում են:

Երեք օր էլ իրենք են հյուրընկալվում և շնորհակալության, օրհնանքի խոսքեր ասելով, հրաժեշտ տալիս շեն ու սրտաբաց օջախին... Հրաժեշտ են տալիս՝ հրավերք անելով Ուկրաինա արտիմետցի այն տղաներին ու նրանց ծնողներին, ովքեր մեր ողջ ժողովրդի մարդկային առաքինությունն են խտացնում իրենց էության մեջ:

... Դպրոցն ավարտելուց հետո, Կարենն ընդունվում է Էջմիածնի N 53 միջնակարգ-մասնագիտական ուսումնարան: Ինչպես դպրոցում, այստեղ նույնպես նույն խոհեմ ու պարտաճանաչ պատանին է, կրթօջախի լավագույն սաներից մեկը: Երեք տարի սովորելուց հետո ստանում է գյուղարտադրության էլեկտրասարքավորումներ վերանորոգողի որակավորում: Սակայն այդ մասնագիտությունը չէր լինելու նրա զբաղմունքը: Դիմելու էր հացի գործարան և աշխատելու էր իբրև հացթուխ... Հացի բույր էր գալու նրա ձեռքերից, հագուստից: Եվ նոր թխված հացի բույրը հասցնելու էր նաև տուն, որդու ալրաթաթախ ձեռքերն էր համբուրելու մայրը, հայրը թփթփացնելու նրա ուսին՝ որդիս ընտանիքին օգնող էլ դարձավ...

Բայց, ավաղ, կարճ էր տևելու այս ամենը: Կարճ՝ երազի նման: Գալու էր 1992 թվականի մայիսը, և Կարենը զորակոչվելու էր բանակ: Սկզբում ծառայելու էր Կիրովականում, այնուհետև Վահան գյուղում: Վերջում լինելու էր Արծվաշենը... Ծառայության կարճատև ամիսների ընթացքում հասցրեց ընդամենը մի քանի նամակ ուղարկել: Դրանցից մեկը Կարմիրի շրջանի Վահան գյուղից էր, որտեղ Կիրովականի 016 գնդի դեսանտայիններ պաշտպանական դիրքեր էին գրավել ու դիմագրավում էին ազերիների ջղաձիգ ոտնձգությունները: «Հարազատներս, մենք լավ ենք ու համոզված, որ չհայտարարված այս պատերազմում հաղթանակը մերն է լինելու,- գրել է Կարենն ու ավելացրել,- մենք կռվում ենք իբրև իսկական դեսանտայիններ...»:

Զինվոր, զինվորի պարտք, զինվորի երդում, ինդպե՞ս կարելի

է դրժել այն, եթե քո կյանքին անգամ մա՛հը սպառնա... Ու Կարենը, իբրև բարեպաշտ ընտանիքի բարեպաշտ զավակ, .,-ին ազնվագույն հայորդի, հավատարիմ մնաց իր երդմանը:

- 1992 թվականի օգոստոսի 6-ին,- պատմում է մայրը՝ տիկին Սիլվան,- շտապեցինք Վահան: Կարենս ու իր ընկերները մարտական դիրքերում էին: Հրամանատարությունը տեղեկանալով մեր՝ ծնողներիս այցի մասին, Կարենիս ու Ժորային թույլատրել էին տեսակցության: Կարենս զինված էր ոտքից գլուխ, իսկ Ժորան մրակոլոլ, իր մարտական մեքենայի ծխից սևացած անճանաչելի տեսք ուներ... Ընդամենը մի քանի ամսվա ընթացքում այնպես էին առնականացել, որ դժվար էր հավատալ նման փոփոխության... Աստված իմ, նրանց հո կռիվնե՞րն են կոփել... Ու վախվորած մտածեցինք՝ չի՞ լինի զավակներիս տանենք մեզ հետ, մինչև փորձություններն անցնեն: Երբ ակնարկ արեցինք մեր մտադրության մասին, նրանք պարզապես ծիծաղեցին. «Մեր ընկերներին կռվի դաշտում մենա՞կ թողնենք, ամոթ է: Հետո էլ՝ ժողովուրդն ասում է. չէ՞, որ ընկերովի մահը հարսանիք է... Մենք պիտի կռվենք, կռվենք ու հաղթանակած վերադառնանք»:

Վերջին անգամ մեր զավակների հետ նստեցինք սեղան: Գիշերը Կարենն ու Ժորան գրկախառնված, մի անկողնում քնեցին:

Եկավ օգոստոսի 7-ի լուսաբացը: Արագ հագնվելով, ողջագուրվեցին, համբուրեցին մեզ ու նետվեցին դեպի մարտական մեքենան: Մի վերջին անգամ Կարենս շրջվեց. «Մա, չմտածեք, մենք կվերադառնանք»: Եվ մեքենան ահեղ հռնդյունով պոկվեց տեղից՝ քիչ անց անհետանալով վերջին ոլորանի հետևում՝ փոշու թանձր ամպ թողնելով միայն...»:

Տղաները խոստացան վերադառնալ: Բայց առջևում դեռ Արծվաշեն կար և օրհասական վիճակում հայտնված հազարավոր արծվաշենցիներ...

Հասցրե՞ց, արդյոք, 20-ամյա պատանին սիրած աղջիկ ունենալ, հասցրե՞ց, արդյոք, սիրո քնքուշ խոսքեր շշնջալ իր երազների թագուհուն... Մայրն ասում էր, թե այդ մասին հարցնելիս, Կարենն ամոթխածորեն շիկնում, հայացքը փախցնում էր: Երևի կար այդպիսի մեկը՝ իր ձերմա՛կ-ձերմա՛կ աղավնիների նման մաքրամաքուր մի էակ, որի աչքը հիմա նույնպես արցունքոտ է...



ԳՆԴԻ ՈՐԴԻՆ, ՈՒԺԵՂ ՈՒ ԲԱՐԻ ՏՂԱՄԱՐԴԸ

ԺՈՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Նույն՝ Արտիմետ գյուղում միայնակ մի կին է ապրում, սգավոր, բարեպաշտ մի կին՝ Հռիփսիմե անունով: Բարեկիրթ, ուսյալ, տխո՞ւր-տխո՞ւր, արցունքից սևացած աչքերով այս հայուհին վշտի մարմնացում է, լեռնացած ցավի ու տառապանքի մարմնացում: Ճակատագիրը դաժան է եղել նրա հանդեպ, բայց ո՞ր մեղքի համար՝ ոչ ինքն է հասկանում, ոչ հարևան ու բարեկամ, ոչ գյուղական համայնք, ոչ էլ ես:

Դեռ այնքա՜ն վաղաժամ կորցրել է շենում մեծ սեր ու հարգանք վայելող ամուսնուն՝ Ալբերտին, այնուհետև՝ իրեն ու դստերը՝ Հեղինեին իբրև միակ հույս ու ապավեն մնացած որդուն՝ Ժորային...

Ժորա Հակոբյան. ծնվել է 1972 թվականի հուլիսի 12-ին, Էջմիածնի շրջանի (այժմ՝ Արմավիրի մարզ) Արտիմետ գյուղում: Ժորայի ծնունդը անթաքույց ցնծություն առաջացրեց գյուղում, բոլորի շուրթերին ավետաբեր լուրն էր՝ Ալբերտը արու զավակի հայր է դարձել: Խարտյաշ, ձյունաճերմակ փոքրիկին, սակայն, ի սկզբանե ծանր փորձություններ էին սպասում. ընդամենը մի քանի ամսական էր, երբ հիվանդացավ սալմանելոզ հիվանդությամբ, երբ քայլել սկսեց՝ մանկան ուշագարությամբ, իսկ յոթ տարին չբոլորած՝ պայթեց կույր աղին... Շատ չէի՞ն, արդյոք, այդ ամենը մանկական նվազ մարմնի համար, շատ չէի՞ն ծնողների, հարազատների տառապանքները: Իսկ այդքան ցավ ու տառապանք ճաշակած փոքրիկն՝ ինքը, խղճի, գթասրտության մարմնացում էր: Վիրավոր կամ հիվանդ որևէ կենդանի տեսներ՝ լիներ շուն, կատու, թռչուն, պիտի բերեր տուն, -իր նկուն մատներով բուժեր նրանց վերքերը, կերակրեր, կազդուրեր ու նոր կարողանար հանգիստ քնել: Թեկուզ բուժումը տևեր շաբաթներ, թեկուզ

մայրը հանդիմաներ կեղտոտ, անլվա կենդանիներին տուն բերելու համար:

Փոքրիկ մի առվակ է անցնում Հակոբյանների տնամերձի միջով: Առվակի այդ հատվածը Ժորան իսկական թռչնանոց էր դարձրել. բադեր, սագեր, իսկ բանջարանոցը տրամադրել էր դեկորատիվ թռչունների, կենդանիների տարատեսակ վանդակներին: Հայրը կրակն էր ընկել որդու ձեռքը՝ ես կենդանու համար ես վանդակը բեր, ջրամանը բեր, բուժդեղամիջոցը բեր, խմոցը բեր, կերը բեր, ակվարիում բեր... Բեր, հա բեր: Ու հայրը բերում էր՝ առանց կոտրելու որդու սիրտը:

Կենդանական աշխարհի տեսականին օր-օրի բազմազան էր դառնում՝ ձկներ, թռչուններ, սպիտակ մկներ, գերմանամկներ, ջրակուղբեր: Եվ Ժորան գիտեր բոլորի կենսակերպը, սովորությունները, հասկանում էր բոլորի լեզուն: Գիտեր՝ որը երբ է ձվադրելու, ձագեր ունենալու: Գիտեր՝ նման դեպքերում որին ինչով պետք է կերակրել, կերի ինչ չափաբաժիններով: Իսկ հիվանդությունների դեպքում բժիշկն ինքն էր ու ինքը: Այս գողտրիկ կենդանաբանական այգու ե՛ւ տնօրենն էր ինքը, ե՛ւ հավաքարարը: Ժորիկը երբեմն նաև ուսուցչի դեր էր ստանձնում: Պատահում էր կենսաբանության ուսուցիչները աշակերտներին բերում էին այստեղ. պատմում էր յուրաքանչյուր կենդանու մասին հանգամանորեն: Այնպիսի մանրամասնություններ էր ասում, որ ուսուցիչներն իրենք էլ էին մնում զարմացած: Զարմանում էին ու հպարտանում իրենց փոքրիկ կենսաբանով ու դասի ավարտին՝ գրկում, համբուրում շնորհառատ տղային:

Մանկան նրբին հոգին ահավոր ծանր էր տանում որևէ կենդանու կորչելը կամ սատկելը: Որքա՜ն արտասվեց այն օրը, երբ տեսավ իր սիբիրյան ցեղի կատվին՝ շներից բզկտված: Ի՜նչ ողբերգություն ապրեց ու իր հետ լացացրեց նաև մյուսներին: Բա իր Շեկո շան՝ մեքենայի տակ ընկնելը. Շեկոն ցավից գալարվում էր. շան հետ նաև ինքը: Շեկոյին բերեց մորաքույր Ռոզայի տուն ու տեղավորեց մաքուր գորգի վրա: Այնուհետև վազեց դուրս ու վերադարձավ դեղորայքի տուփը ձեռքին: Չոքեց շան կողքը, զգուշորեն մաքրեց վերքերը, երակի մեջ գլյուկոզա ներարկեց.

- Մորաքույր, որ մի քիչ մենք միջամտենք, օգնենք՝ լրացնենք կորցրած արյունը. կենդանին իր թքագեղձում ունեցած լիզին ֆերմենտով կբուժի իր վերքը: Կլիզի ու կլավացնի:

Այդպես էլ եղավ. յոթ օր անց Շեկոն արդեն թռչկոտում էր...

Ո՞ր մեկը հիշես. լճակից հանած կատվի ձագե՞րը, ոզնու հինգ ձագե՞րը, որոնց իր բաժին կաթով էր կերակրում, «սերա-

ֆիմո» թռչունի՞ն, որին հետո ստիպված տեղափոխեցին Այոր լիճ... Իսկ քանի՞ անգամ է եղբորից ծեծ կերել քույրիկը՝ Հեղինեն՝ նրա բերած, խնամքի կարոտ, բայց փնթի, տկար կենդանիներին դուրս գցելու համար... Երբեք չէր սիրում կենդանիներ վաճառել, թեև այդ կերպ կկարողանար թեթևացնել ընտանիքի հոգսերը: Վաճառելու փոխարեն նվիրում էր՝ հիշելով հոր խոսքերը. «Տղաս, վաճառես, փողասեր կդառնաս, իսկ որ նվիրես՝ ընկերասեր»:

Թեև կենդանական աշխարհը կլանել էր, բայց սիրում էր նաև ռազմական խաղեր. զանազան իրերով պատրաստում էր թշնամական կրակակետեր և մահճակալների, սեղանի տակից, զգեստապահարանի, դաշնամուրի անկյուններից «չո՜ւ-չո՜ւ» կրակում էր, «ոչնչացնում» երևակայական թշնամուն: Հայրը, տեսնելով այս ամենը, մտորում էր. «Չէ, տղաս կամ կենսաբան կդառնա կամ բարձրաստիճան զինվորական»:

Սուսերամարտ էր խաղում. վերցնում էր մեծ դանակն ու՝ գնա՜ց: Հայրը զգուշացնում էր տնեցիներին.

- Ապրումով է խաղում, հանկարծ չվնասի մեկնումեկիդ...

Մի օր էլ ինքնաշեն հրացան պատրաստեց: Դիպուկ նշանառությամբ զարմացնում էր շրջապատին: Ռազմագիտության ուսուցիչը հիացած էր: Ժորայից ետ չէր մնում նաև Կարենը, որ իր ամենամտերիմ ընկերն էր, հացի ու ծոցի ընկերը, ցավի ու ուրախության ընկերը:

Տարիներն անցնում էին, և մեծանում էր Ժորան: Միջին դասարաններում զբաղվում էր ինքնամարզմամբ. չէր սիրում թույլ, անկամ մարդկանց. «Տղամարդը պետք է ուժեղ լինի»:

1989-ին փայլուն գնահատականներով ավարտեց դպրոցը, ու թեև երազանքն էր ուսանել մայրաքաղաքի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում, բայց հոր խորհրդով ոտք դրեց Աբովյան քաղաքի ավտոճանապարհային տեխնիկում: Բայց, ավաղ, ինստիտուտ ընդունվելու երազանքը այդպես էլ անկատար էր մնալու. իր ուսանողության տարիներին ծանր հիվանդանալու էր հայրը, և ընտանիքի բեռն ընկնելու էր պատանեկան իր ուսերին: Նրա կենսուրախ կյանքը մթագնելու էր օրօրի, սոցիալական դժվարություններն ստիպելու էին հաճախակի բացակայել դասերից, նույնիսկ առանց մորն ասելու, աշխատանքի անցնել գյուղի խոզաբուծական ֆերմայում: Մայրը, իմանալուց հետո, հանդիմանում էր՝ գիշերային հերթապահություն է, առողջությանդ վրա կազդի, հետո էլ՝ որ հայրդ իմանա, իրեն վատ կզգա: Բայց խելամիտ պատանին հո լա՞վ էր հասկանում

ստեղծված իրավիճակը, մոր ջանքերը, տառապանքը... Եվ աշխատեց, որպեսզի թեթևացնի մոր հոգսերը:

Հորը սխալ ախտորոշմամբ երկու անգամ վիրահատել էին. հուսադրող քիչ բան կար: Բժիշկները խորհուրդ էին տվել տեղափոխել Մոսկվա: Մեկնելուց առաջ հայր ու որդի առանձնացել, զրուցել էին:

- Ինձ հաշված օրեր են մնացել, տղաս, դու քեզ ամուր պահիր, մորդ կլսես, կյանքում ոչ մեկին ցավ չպատճառես: Քրոջդ համար կլինես ե՛ւ հայր, ե՛ւ եղբայր...

Որդու սիրող սիրտ էր՝ ինչպե՞ս դիմանար: Եվ Ժորան սկսեց ավելի տխուր, մելամաղձոտ դառնալ: Հյուծվել: Ձուր էին ընկերների, անգամ Կարենի սփոփանքի խոսքերը:

1990 թվականի սեպտեմբերի 26-ին Արտիմետը սգաց. Ալբերտը վախճանվեց: Մոր, քրոջ, պատանու համար սկիզբ առան զարհուրելի օրեր. կոտրվել էր տան սյունը: Ամուսնու մահը ծանրորեն հարվածեց կնոջը՝ Հռիփսիմեին, բայց տապալել չկարողացավ՝ Ժորան այն հուսալի հենարանն էր, որ պահում էր նրան... Պահում էր:

Առաջին բուժօգնությունը միշտ առաջինն ինքն էր ցույց տալիս հիվանդ մորը, աշխատեցնում գյուղտեխնիկան, վարուցանք, խոտհունձ անում, այգի էտում, օգնության ձեռք մեկնում հեռումոտիկին: Փաստորեն, կյանքից վաղաժամ հեռացած հորը փոխարինել էր որդին: Արժանապատիվ որդին, որ կամք էր ունեցել վիշտը հաղթահարելու, ժամանակից շուտ տղամարդ դառնալու:

- 1992-ի գարնանային աշխատանքների ժամանակ առաջին անգամ խաղողի այգին ինքն էտեց,- հիշում է մայրը,- հանդիմանեցի՝ ասելով, որ դա անփորձ մարդու գործ չէ, կարող է այգին պտուղ չտալ սխալ էտելու պատճառով: Բայց այդ տարի զարմանալիորեն շռայլ եղավ այգու բերքը... Այդ տարվանից սկսած խաղողն այլևս չեմ էտում, ձեռքս չի գնում, էտողը մեր համագյուղացիներից մեկն է: Նա, թեև իր գործն անում է բանիմացորեն և հոգատարությամբ, բայց այլևս 1992-ի բերքը չի ստացվում. վազերը չորանում են: Տղայիս ձեռքերի՞ն են կարոտում...

... Գարուն հասակում նաև սերը պիտի ծաղկեր Ժորայի հոգում: Քույրը պատմում է, թե ինչպես առաջին ժամադրության օրը ավելի էր գեղեցկացել, ավելի վայելուչ տեսք ընդունել. «Ձուգվել էր» առանց այն էլ միշտ կոկիկ հագնվող իր եղբայրը: Էջմիածնեցի այն աղջկան հանդիպելու համար, որի հետ քիչ առաջ հեռախոսով խոսում էր.

- Կգաս, չէ՞,- ասել էր Ժորան:

- Կգամ,- պատասխանել էր աղջիկը:

Ժորան գնացել ու վերադարձել էր անտրամադիր՝ աղջիկը չէր եկել: Հետո իմացել էր չգալու պատճառը. «Մեղավորն անհամարձակությունս էր,- արդարացել էր աղջիկը,- մյուս անգամ երևի ուժ կգտնեմ, չէ՞ որ հանդիպումների համար ժամանակ դեռ շատ կա. .»:

Ժամանակը, սակայն, չհերիքեց, ժամանակն այդպես էլ չեկավ: 1992-ի մայիսին Ժորան զորակոչվեց բանակ՝ ունկերում տանելով քրոջ նորաթոթով դստրիկի՝ փոքրիկ Սոֆյայի, «Քելի, ալի՜, քելի, ալի՜...» կանչերը, հայացքում՝ մոր ու քրոջ, հարազատների արտասվաթոր աչքերն ու պատկերը հայրենի տան: Նա այդպես էլ չիմացավ, որ քեռի էր դարձել ևս երկու փոքրիկների, որ իր քույր Հեղինեն երկու արուզավակ է լույս աշխարհ բերել՝ կնքված հոր և իր անուններով: Որ այդ փոքրիկներն են ցրում հայրական տանը տիրող մռայլ լռությունը՝ սիրտ ու հոգի կեղեքող: Չիմացավ, որ այլևս չկան իր այնքա՜ն փայփայած կենդանիները, որ նրանց բներն այսօր դատարկ են: Չիմացավ, որ իր վարած գյուղտեխնիկան այսօր լռում է վերջին անգամ իր կանգնեցրած դիրքով:

... Իսկ մայրը հիշում է ամեն-ամեն ինչ: Հիշում է վերջին հանդիպումը Վահանում, իր որդու առնականացած դեմքը, նրա վերջին համբույրն ու բառերը օգոստոսյան այն առավոտվա: Ու նաև հրամանատարի խոսքը.

- Քո տղան հերոս է, Մութուդարա գյուղը ինքն ու իր ընկերներն են հողին հավասարեցրել, մենք նրան «Գնդի որդի» ենք ասում:

Արտիմետ գյուղում ապրում է Ժորայի մայր Հռիփսիմեն: Հաճախակի է լինում իր հերոս որդու անունը կրող դպրոցում, որի բակում վեր է հառնել հուշակոթողը՝ նվիրված հերոս-արծվաշենցիների ու համագյուղացի մյուս նահատակների հիշատակին: Իսկ յուրաքանչյուր ամսվա 8-ին, նաև պատեհ-անպատեհ առիթներով, բարձրանում է Եռաբլուր, ուր սավառնում են Ժորայի, Կարենի ու մյուս քաջազունների անմահ հոգիները:



ՈՉ ՈՔ ՉԵՐ ՈՒԶՈՒՄ ՀԱՎԱՏԱԼ...

ՍՈՒՐԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Եռաբլուր տանող ճանապարհը նաև նրանց՝ Էջմիածնի Կոտովսկու-28 տան բնակիչներ Լյուդվիգ և Լենա ամուսինների, նրանց Սարգիս զավակի և Սիրուն դստեր համար է սրբազան ու արցունքոտ: Այդ ճանապարհը, հարյուրավորների նման, նաև նրանց է հասցնում անմահների պանթեոն, ուր եղբայրական գերեզմանում հավերժական քնով քնած են տասներկու քաջազունները, որոնցից մեկն էլ նա է՝ Սուրեն Եղիազարյանը:

Ինչպես իր բախտակից ընկերների, այնպես էլ Սուրենի համար ժամանակի սլաքն սկսեց ավելի արագ պտտվել: Ավելի արագ՝ ժամանակից շուտ հասունանալու, աշխարհընկալման ու ա՛յլ չափանիշների առումով: 1988-ի Արցախյան շարժումը միանգամայն չափահաս դարձրեց պատանուն, երեկվա դպրոցականն այդ օրերին իրեն զգաց իբրև ազգի անտրոհելի մասնիկ, իբրև իր ժողովրդի հուզումն ու խռովքը սեփական հոգու բարոմետրով զգացող անհատ: Եվ հայրենիք հասկացությունը դասագրքայինից փոխակերպվեց իրականի, դարձավ ոգեղենի մարմնացում, որի ջակատագրից անմասն մնալը ցնորամիտ հոգինեռին միայն կարող էր բնորոշ լինել: Իսկ Սուրենը այդպիսիներից չէր կարող լինել, որովհետև հայրենասիրական ոգու առաջին սերմանողն իր հոգում ոչ այլ ոք էր, քան ամենահարազատ մարդը՝ հայրը՝ Լյուդվիգ Եղիազարյանը, որ հայրենիքին, ազգային ազատագրական շարժման իր նվիրվածությամբ օրինակ էր ծառայում հարազատ զավակին:

Ինչպե՞ս,- կհարցնի ընթերցողը,- միթե՞ հերոսի հայրն էլ է զենքը ձեռքին մարտնչել արցախյան ռազմաճակատներում: Ոչ, իսկ ի՞նչ պարտադիր է խրամատներում լինել, կրծքով փակել թշնամու հրակնատի փողը կամ վիրավորվել մարտադաշտում: Հող, հայրենիք սիրող մարդը իր սովորական թվացող աշխատանքով էլ է ի վիճակի հայրենասեր լինելու՝ իր նպաստը բերե-

լով ընդհանուր գործին, ազգային խնդիրների իրականացմանը:

1992 թվականի մայիս: Ազգային ազատագրական շարժման խռովահույզ ալիքը այլևս պատնեշներ չի ճանաչում: Կրակե օղակով շրջափակված Արցախի համար բացվել է կյանքի ճանապարհը՝ վերցված է Շուշին, Գորիս-Լաչին մայրուղին արդեն բաց է: Կենսատու երակի նման մայր հայրենիքը սնուցում է իր Արցախ զավակին: Լյուդվիգ Եղիազարյանին դժվարին բախտ է վիճակվում բազմիցս լինել Արցախում՝ իր բեռնատարով օգնություն հասցնելով Հադրութի շրջան: Հերթական բեռնատեղափոխման ժամանակ՝ հունիսի 30-ին, ականի պայթյունից ծանր վիրավորվում է ու հրաշքով փրկվում: Այդ ժամանակ Սուրենն արդեն ազգային կանոնավոր բանակի զինվոր էր և մասնակցում էր Կարմիրի շրջանի սահմանամերձ գյուղերի պաշտպանական մարտերին:

... Ամեն ոք գալիս է իր մանկությունից: Այս հասակում արդեն իսկ երևակվում են մարդկային հոգու թրթիռները, նրա խառնվածքը, չարի ու բարու ընկալման չափանիշները: Դեռ մանկապարտեզից փոքրիկ Սուրենն արդեն զգացել էր տալիս, որ ինքն ընկերասեր, կարեկից ու նրբազգաց էություն է:

Հիշում է դաստիարակչուհի Շողիկ Խաչատրյանը. «Մայրենի լեզվի պարապմունքներից մեկի ժամանակ կարդում էի Հովհ. Թումանյանի «Գառնիկ ախպերը»: Հեքիաթը կարդալիս հուզվեցի և հայացքս ակամայից փախցրի երեխաներից, որպեսզի նրանք չտեսնեն կոպերիս տակ ծանրացած արցունքները: Երբ, հանգստանալով, նորից սկսեցի կարդալ, հանկարծ լսեցի լացի ձայն. փոքրիկ Սուրիկը նույնպես լալիս էր, և արցունքները հոսում էին նրա այտերով...»: Նաև այս դեպքում է, թերևս, որ ասում են՝ պտուղը ծառից հեռու չի ընկնում: Մայրը՝ Լենա Ջավախյանը, բարության, գթասրտության մարմնացում է, Էջմիածնի մանկական պոլիկլինիկայի բանիմաց ու սիրված բուժքույրերից մեկը: Եվ պատահական չէ կոլեկտիվի, շրջապատի մարդկանց անշահախնդիր, բոլորանվեր սերն ու հարգանքը հայրենիքին հերոս զավակ պարգևած գործընկերոջ նկատմամբ:

Որքա՜ն անքուն գիշերներ է լուսացրել Լենա մայրիկը որդու օրորոցի առջև, որքա՜ն երազանքներ է հյուսել՝ փորձելով գուշակել իր բալիկի ապագան. «Ի՞նչ կդառնա որդիս՝ իմ նման սպիտակ խալա՞թ կհագնի՝ բժի՞շկ կդառնա, հոր նման վարո՞ղ, թե՞ օդաչու, տիեզերագնաց, անվանի մարզիկ... Ինչ էլ դառնա, թող տերը քաղցր աչքով նայի զավակիս, թող շառ ու փորձանքից հեռու լինի, Աստծու սիրուն, թող մատը փուշ չմտնի... Իսկ ո՞վ կլինի նրա հարսնացուն, ինչպիսի՞ն կլինի, ի՞նչ օջախի ծնունդ, որին կարողանամ սիրել, փայփայել հարազատ աղջկաս նման...»: Ո՞ր մայրը չի փայփայել նման երազներ... Սուրիկի մայրը երազում էր այնքան, մինչև հոգնած աչքերը փակվում, ու գլուխն իջնում էր որդու օրորոցին...

Դպրոց, դպրոցական անհոգ, ուրախ տարիներ: Նոր ընկերներ, նոր միջավայր, նոր շրջապատ: Ուսուցիչները բողոքելու ոչինչ չունեն մեղմ բնավորությամբ, կարգապահ ու կազմակերպված իրենց սանից: Հակառակը՝ նրանք հիացած են Սուրենի աշխատասիրությամբ:

Ֆիզիկապես կոփված, ամուր պատանին առանձնակի սեր ու հակվածություն է դրսևորում սպորտի նկատմամբ, մասնավորապես՝ ֆուտբոլի: Իդեալը Մարադոնան է՝ նոր ժամանակների ֆուտբոլի արքան: Վատ չի լինի, եթե ինքը ճանաչված ֆուտբոլիստ դառնա գոնե Հայաստանում, գոնե Էջմիածնում: Եվ դիմում ու ընդունվում է Էջմիածնի մանկապատանեկան մարզադպրոց: «Շատ շարժուն ու դինամիկ խաղացող էր,- իր տված բնութագրում շեշտում է մարզիչ Հ. Խանջյանը: - Մարզվելով, տարիների ընթացքում Սուրենը ձեռք բերեց կամային բարձր որակներ... Երբեք չէր սիրում պարտություն: Չէր սիրում ստախոս ընկերներին, որովհետև ինքն ազնիվ էր էությամբ, առաջադրանքներ կատարելիս:

Ես հպարտ եմ, որ ունեցել եմ այդպիսի սան...»: Էջմիածնի N 1 դպրոցն ավարտելուն հաջորդելու էր դասմնառությունը նույն քաղաքի N 53 պրոֆտեխուսումնարանում: Այստեղ նույնպես սեր ու հարգանք էր վայելելու խոհեմ, գործունյա, ամենահաս պատանին: Ահա ինչ են գրում, ինչպես են ներկայացնում իրենց սանին «Մեր Սուրենը» խորագրով բնութագիր-հուշագրում մի խումբ մանկավարժներ 1992 թվականի նոյեմբերին՝ Սուրեն Եղիազարյանի հերոսական մահից չորս ամիս անց.

«Չնայած տարիներ են անցել, բայց երեկվա պես հիշում եմ. ուսուցչանոցում հավաքվել էին դասատուները և սովորականի պես խոսում էին սովորողների մասին: Այդ օրը բոլորն էլ, կարծես խոսքերը մեկ արած, խոսում էին ավտոփականագործների N 19 խմբի ավագ Սուրենի մասին:

- Նա կարողանում է խումբը պահել,- բոլորից բարձր հնչեց կենսաբանության դասատու Նիկողոսյանի ձայնը: - Վերին աստիճանի պահանջկոտ է իր նկատմամբ, ես նրան ճանաչում եմ մանկուց:

- Բոլորից լավ է սովորում,- Նիկողոսյանին ընդհատեց Մեր

Պողոսյանը՝ մասնագիտական առարկաների դասատուն,- մեծ սեր ունի մեխանիզմների հանդեպ, շատ հավանական է՝ այն ժառանգել է հորից: Գերազանց գիտի մեքենաների տեխնիկական խնամքը և ճանապարհային երթևեկության կանոնները: Այդքանից հետո շատ համեստ է, քաղաքավարի:

- Ինձ էլ հերթ տվեք,- տեղից վեր կացավ ֆիզկուլտուրայի դասատու Արայիկը: - Սուրենն այնքան կազմակերպված տղա է, որ կարող է խումբ ղեկավարել: Վերջերս խմբի վարպետ Չալինյանը երկու օր աշխատանքի չեկավ, խումբը վստահեցին Սուրենին, ամեն ինչ հարթ, ոչ մի արտակարգ բան չպատահեց: Սուրենին վստահվել է ուսումնարանի ֆուտբոլի թիմի ավագությունը, նա հաճախ պարապմունքներից հետո առաջին կուրսեցիների հետ սպորտի արևելյան ձևերի վարժություններ է անցկացնում:

Եվ այսպես, համարյա բոլորն էլ լավ խոսքեր էին ասում Սուրենի մասին, գովում նրան ծնած ու դաստիարակած ծնողներին:

... Եվ ինչ... Այսօր չարագույժ բոթը հասավ ուսումնարան, համարյա նույն դասատուներն էին հավաքված, բոլորը մի պահ կարկամեցին, ծանր լռություն իջավ ուսուցչանոցում, ոչ-ոք չէր ուզում հավատալ... Սուրենը այլևս չկա՞... Չէ՛, չի կարող պատահել, ինչպե՞ս հավատալ նման երիտասարդի զոհվելուն...

Այո, հավատացե՛ք, Սուրենը ընկավ Արծվաշենում, ընկավ իր նման քաջարիների հետ, ընկավ հայրենիքի մի բուռ հողը պաշտպանելու համար մղված անհավասար մարտում:

Փառք նրան, նրան ծնող սնողներին, նրան դաստիարակած կոլեկտիվներին, որոնց համար Սուրենը միշտ կենդանի կմնա, նույն համեստը, պարտաճանաչը, նույն ազնիվ երիտասարդը:

Հավերժ փառք նրան»:

Փառք Էջմիածնի քաջազունին, որի շիրմի առաջ գլուխ է խոնարհում մի ողջ ժողովուրդ՝ իբրև ազգի ընտրյալ զավակներից մեկի... Իսկ նրա ծնողները տխուր հպարտությամբ են կրում իրենց ճակատագրի ծանր խաչը ու արցունքի միջից խոսում հայրենյաց հողի խնկելի նահատակ իրենց Սուրեն զավակի լուսանկարի հետ...



«ՈՒՄԻ՞Ց ՊԱԿԱՍ ՏՂԱ ԵՄ, ՈՐ ՉԵԱՌԱՅԵՄ...»

ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ

Ճակատագիրն այդպես էր տնօրինել՝ 1970-72 թվականներին լույս աշխարհ եկած հայորդիները դառնալու էին նորաստեղծ հանրապետության գոյության երաշխիք մեր ազգային կանոնավոր բանակի առաջին զինվորները: Մեր անկախության զինվորները: Ազատության զինվորները: Հենց այդ սերնդի սերուցքն էր, որ, հետևելով իր պապերի օրինակին, ոսոխին ցույց էր տալու հայոց մերկացրած սրի զորությունը ու չէր երկնչելու հայրենավտանգ դավադիր ուժերի առաջ: Այդ սերնդի պայծառ դեմքերից էր Արմեն Մակարյանը՝ ծնված 1972 թվականի հոկտեմբերի 20-ին, Չարենցավան քաղաքում:

Եթե ճակատագիրը դեռ է՞ն գլխից բարեհաճ լիներ, Վոլոդյա և Մելսիդա Մակարյանները մեկ տարեկան հասակում չէին կորցնի իրենց առաջնեկին, և Արմենը իրենից ավագ եղբայր կունենար: Ծանր էր ծնողների վիշտը. նոր-նոր տոտիկ անող ձագուկ էին կորցրել: Ծանր էին նաև հետագա մի քանի տարիները, երբ տան մեջ չէր զրնգում մանկական ծիծաղը... Հետո վարդի թերթերի նման բացվեցին Վարդիթեր և Աննա դուստրերը, Արմենն ու Խաչատուրը լույս աշխարհ եկան, և Մակարյանների երբեմնի տխուր օջախը շնչավորվեց երկու քույր, երկու եղբայրների աստվածատուր գոյությամբ:

Գրում եմ այս տողերն ու մտածում՝ որքա՞ն նման են 12 քաջազունները՝ սկսած մանկությունից, նրանց նախասիրություններն ու զբաղմունքը դպրոցական հասակում. Անանիայի, Կարենի, մյուս տղաների նման Արմենն էլ էր սիրում գրականություն, ֆիզկուլտուրա, սպորտ: Նրա համար գրքային հերոսները իրական կերպարներ էին, իրական մարդիկ, որոնք սխրանքների են գնացել՝ նախևառաջ կամքով արի և ֆիզիկապես ուժեղ լինելով:

Արմենը դեռ փոքրուց էր զբաղվում ինքնամարզմամբ: Հետո, երբ դեռ աղվամազը դեմքին պատանի էր, գնաց բռնցքամարտի: Մի որոշ ժամանակ անց, սկսեց զբաղվել արևելյան մարզաձևերով (կարատե, ձյուդո, ըմբշամարտ), հետո՝ ծանրամարտով: Երբ տնեցիները հարցնում էին՝ Արմեն, ախր ոնց կլինի այդպես շուտ-շուտ փոխել մարզաձևը, պատասխանում էր.

- Ամեն մեկով մեկ ամիս էլ պարապեմ, բավական է: Կարևորը, որ ես կոփվում եմ, ինչ իմանաս, կյանքում ինչ կարող է պատահել...

Այո, գալու էր ժամանակը, երբ այդ ամենն, իրոք, պետք էր գալու: Պետք էին գալու ծառայության կարճատև ամիսներին, մարատական գործողությունների ժամանակ, Արծվաշենում...

Իսկ մինչ այդ դեռ ժամանակ կա: Արմենը դեռ երեխա է, ունի ծով երազանքներ ու նաև զարմանալի՜ մի երազանք՝ մեծանալ և ծառայել ոչ այլ տեղ, քան... Աֆղանստանում: Աֆղանստան... Ախր, ինչո՞ւ հենց այնտեղ, չէ՞ որ այդ երկրում պատերազմ է, չէ՞ որ իրենց զավակներին Աֆղանստան ծառայության ուղարկած ծնողները լաց ու ողբի մեջ են, քանզի գիտեն ինչ է կատարվում օտար այդ երկրում, լսում-տեսնում են, թե քանի՜-քանի հայորդիներ են «վերադարձել» ցինկե դագաղներով: Միթե՞ նման երկրում ծառայելու ցանկությունը բնական կարելի է համարել թեկուզ երեխայի համար: Ծառայության մասին մտածող ու զե՜նք սիրող երեխայի: Իսկ Արմենը, կենդանիներ սիրելուց զատ. նաև զենք էր սիրում: Սիրում էր բարձրանալ լեռներն ու բարձունքներից նայել հարազատ բնօրրանին՝ հայոց աշխարհին: Սիրում էր հաճախ լինել Սևանա լճում, վայելել լճի ու թերակղզու կախարդիչ գեղեցկությունը: Ու լողալ մաքրաշիթ ջրերում՝ հայացքը հառած կապույտ հորիզոնին, ճերմակաթույր ճայերի անհոգ ճախրանքին... Երանելի օրեր, անհոգ պատանեկություն:

Ութամյա կրթություն ստանալով ծննդավայրի N 1 դպրոցում, ուսումը շարունակում է Չարենցավանի N 79 պրոֆտեխուսումնարանում: Այն ավարտելուց հետո վարպետ է աշխատում: Աշխատում է, որովհետև արդեն չափահաս է, իսկ այդ հասակում իր բանվոր ծնողներին օգնության ձեռք չմեկնելն աններելի մեղք է իր համար:

Օրերն անցնում են, ամիսներն հաջորդում են իրար: Արդեն զինակոչիկի տարիքում է, վերջապես եկել է ժամանակը զինվորական համազգեստ կրելու, զենք բռնելու զենքի կարոտ իր ձեռքերով: Ընկերներն արդեն ծանուցագրեր են ստացել: Ինքն անհամբեր է, սպասում է, որ նաև իրեն կանչեն: Բայց ծանուցագիր չկա, ինչո՞ւ են ուշացնում: Առանց տանն ասելու, դիմում է զինկոմիսարիատ. «Ինչո՞ւ ինձ չեք կանչում»: Զինկոմիսարիատում զարմանում են՝ ոմանք թաքնվում են ծնողների փեշի տակ, ձգտում ամեն կերպ խուսափել ծառայությունից, իսկ այս տղա՞ն... Արմենը չէր սիրում նմաններին. «Տղամարդը ինչպե՞ս կարող է վախենալ ծառայությունից, չէ՞ որ իսկական տղամարդ դառնում են բանակում ծառայելուց հետո միայն»:

Զինկոմիսարիատում փնտրում են Արմենի փաստաթղթերը, բայց այդ պահին չեն գտնում. «Չգիտեմ, իմ գործը չէ. որտեղից ուզում եք, ինչպես ուզում եք իմ փաստաթղթերը գտեք, թե չէ իբրև կամավորական կգնամ, ումի՞ց եմ պակաս տղա, որ չգնամ...»:

Փաստաթղթերը գտնվեցին: Ստորագրեց ծանուցագիրը և տուն վերադարձավ այնքան ուրախ, ասես հարսանիք էր գնալու: Եվ նա, որ պատանի հասակում քրոջը՝ Աննային թույլ գցել էր տալիս, իմանալու համար, թե բախտը կժպտա՞, արդյոք իրեն, որ ծառայի Աֆղանստանում, մայիսի 5-ին մեկնում է բանակ: Մեկնում է՝ ժպիտը դեմքին, ծնողներին, քույրերին քաջալերելով, թե ամեն ինչ լավ է, մտահոգվելու ոչինչ չկա, թե ինքը այնպես կծառայի, որ բոլորը հպարտանան...

Բայց Խաչատուր եղբորն այլ բան էր ասելու. «Ախպեր ջան, ես գնում եմ ծառայության, պապային, մամային լսող կլինես... Ինչ ասեմ, ես գնում եմ բանակ, Աստված գիտի՝ կգամ, թե չեմ գա, հիմա այնպիսի խառը ժամանակներ են, որ չեմ կարող երաշխավորել վերադարձս...»:

Գրկախառնվում են, երկար ժամանակ չեն կարողանում բաժանվել միմյանցից:

- Երբ դեպքը պատահեց, ես Ռուսաստանում էի, չէի հավատում կատարվածին, չէի համարձակվում մտածել, որ այլևս չունեմ իմ թևութիկունք եղբորը, իմ հերոս ու ազնվական հոգու տեր եղբորը,- հիշում է Խաչատուրը,- հպարտ եմ, որ ծնողներս կարողացել են հայրենիքի նվիրյալ և շրջապատից, ամենքից սիրված, հարգված զավակ դաստիարակել: Հիմա էլ, երբ դուրս եմ գալիս փողոց, թվում է, թե եղբայրս կողքիս կանգնած է, որ ես զգում եմ նրա շնչառությունը...

Ծառայության ընթացքում (Կիրովական) գիտեր, որ ծնողներն, այնուամենայնիվ, մտահոգ են: Ուստի հեռախոսային խոսակցությունների ժամանակ միշտ փորձում էր հանգստացնել՝ ապահով եղեք, մեր ծառայությունն անցնում է հանգիստ ու խաղաղ, ես ինձ լավ եմ զգում, մտահոգվելու հարկ չկա...

Վերջին (1992-ի օգոստոսի 2) նամակը հորն էր հասցեագրված: Առանձնակի ջերմություն կա, հարազատներին կարոտած զավակի սեր ու քնքշանք կա տողերում: Ու նաև հատուկ խնդրանք, մորը պաշտող նրբազգաց որդու խնդրանք. «Պապ ջան, այնպես արա, որ նամակս մամայի ձեռքը չընկնի, որ նա չիմանա, թե ես սահման եմ գնացել...»:

Սահման՝ ասել է, թե Տավուշ: Սահման՝ ասել է, թե Կարմիրի շրջան, Վահան գյուղ: Սահման՝ ասել է, թե կրակ ու բոց. «գրադ» ու «ալազան», հրետակոծություն ու նաև զոհեր: Զոհեր՝ սահմանամերձ շեներում, դաշտերում, մարտական դիրքերում: Իսկ այս ամենը բոլորը քաջ գիտեին. Պաշտպանության նախարարության օպերատիվ հաղորդագրությունները հեռուստատեսությամբ, ձայնասփյուռով հանգամանորեն ներկայացնում էին, թե ինչ է կատարվում հայոց անհանգիստ սահմաններում... Դրա համար էր նա զգուշացնում հորը, դրա համար էր ուզում, որ մոր քնքուշ սիրտը չանհանգստանա: Բայց ճակատագիրն ավելի ծանր, ահագնորեն ծանր հարված էր պատրաստել՝ որդու անմահացումը Արծվաշենում, նրա հավերժացումը Եռաբլուրի նվիրական բարձունքին:

Ու նորից կանչում-կեղեքվում է սիրտը մայրական.
Իմ սիրելի Արմեն,
Իմ քաջարի զավակ,
Ի՞նչ կլինի՝ գեթ մեկ անգամ
Դուռը բացես ու ներս մտնես,
Տեսնեմ հպարտ, ուրախ դեմքդ.
Ախր, շատ եմ կարոտել քո ժպիտը.
Կուզեմ տեսնել չինար բոյդ.
Ի՞նչ կլինի՝ գեթ մեկ անգամ
Դուռը բացես ու ներս մտնես...



... ԳՆԴԱԿՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻԲՐԵՎ ՀԱՄԲՈՒՅՐ

ԱՆԱՆԻԱ ՍՄԲԱՏՅԱՆ

Մեծն Գարեգին Նժդեհը մարգարեանում է. «Եթե ուզում ես գուշակել մի ժողովրդի ապագան, նայիր նրա երիտասարդությանը»: Եվ երիցս ճշմարիտ է Զանգեզուրի արծիվը, քանզի երիտասարդությունն է նախնառաջ յուրաքանչյուր ժողովրդի ե՛ւ դեմքը, ե՛ւ ողնաշարը, ե՛ւ երաշխիքը գոյատևելու: Իսկ մեր ժողովուրդը դարերի հոլովույթում մեկ անգամ չէ, որ բախվել է լինել-չլինելու գերխնդրին: 1988 թվականի համազգային զարթոնքը յուրօրինակ խթան եղավ ու արմատախիլ արեց տասնամյակների մեր թմբիրը, առաջ մղեց պառթկուն ու բոցավառ մեր երիտասարդությունը, որ պատրաստ էր ինքնազոհության: Վկան՝ ազատագրված Արցախը, վկան՝ Եռաբլուրը, ուր սավառնում է նաև Անանիա Սմբատյանի անմահ ոգին:

Անանիան ծնվել է 1972 թվականի օգոստոսի 21-ին: Մայրաքաղաքի Նոր Նորքի հինգերորդ զանգվածի N 53 նորակառույց շենքում առաջին ծնունդն էր: Վարդան և Զարդալամ ամուսիններին սևորակ աչքերով փոքրիկը ոչ միայն ծնողների, այլ նաև շենքի ողջ բնակչության ուրախությունն էր, ովոհետև առաջին ծնունդը լինելով, բարին էր խորհրդանշելու բոլոր նրանց համար, ովքեր մանկան ձիչի էին սպասում նաև իրենց հարկի տակ:

1978-ին նրա առջև դռները բացեց N 159 միջնակարգ դպրոցը, որտեղ և ձևավորվելու էր ապագա հերոսի խառնվածքն ու մտածողությունը, հայրենասիրական ոգին: Մասնավորապես, նրա սեղանի գրքերն էին դառնալու պատմա-գեղարվեստական ստեղծագործությունները: Ծնողները զարմանում էին ու նաև ուրախանում, որ վեցերորդում սովորող իրենց հրաշամանուկը մեկը մյուսի հետևից «Վարդանանք» ու «Մուսա լեռան քառասուն օր» է կարդում, իսկ հետո՝ պատերազմական թեմաներով վեպեր

և զինվորական գրողների հուշեր՝ Ա. Չակովսկու «Բլոկադան» ու Կ. Ռոկոսսովսկու «Զինվորի պարտքը», Ա. Վասիլևսկու «Իմ կյանքի գործը», Հ. Բաղրամյանի՝ «Իմ հիշողությունները», Ս. Շտեմենկոյի «Գլխավոր շտաբը պատերազմի տարիներին»: Ո՞ր մեկը թվես: Փոքր ավելի ուշ հայոց ցեղասպանությանը վերաբերող գրականությունն է հիմնովին կլանում նրան:

Մտավոր զարգացմանը զուգահեռ, միջին դասարաններից սկսած, Անանիկն զբաղվում է նաև մարմնի կոփմամբ՝ անսալով «Առողջ մարմնում՝ առողջ հոգի» իմաստությանը: Ամենօրյա վազքը պարտադիր էր, մարզական տարբեր գործիքներն անբաժան էին գրքերից:

Դպրոցն ավարտելուց հետո աշխատանքի է անցնում «Մուշ-89» կոոպերատիվում: Հարգանք ու սեր նաև այստեղ:

Անանիան զինակոչային տարիքում է, զինկոմիսարիատից ծանուցագիր է ստացվել: Ներկայանում է: Բժշկական հանձնաժողովի գրավոր եզրակացությունը զննելով՝ զինկոմը հարցնում է.

- Ի՞նչ զորամասում ես ցանկանում ծառայել, երիտասարդ:

- Դեսանտային:

- Շատ լավ,- ակնոցները հանելով, ասում է զինկոմն ու կատարում համապատասխան նշումներ:

Զինակոչիկն անդամագրվելու էր Կիրովականի 016 մոտոհրանգային գնդի N 3 դեսանտային վաշտին:

Անանիան զինվոր է: Ու թեև խիստ է բանակային կարգուկանոնը, ու թեև փոխվել է կենսակերպը, բայց ինքը նվնվացող չէ: Ավելին՝ այդ ամենն իրեն դուր է գալիս, և ինքը պարտավոր է իրեն դրսևորել որպես կարգապահ զինվոր: Իր համար ուրախալի է և այն, որ նույն վաշտում է ծառայում նաև մորաքրոջ տղան՝ Արտակ Փարսոյանը, իսկ ծառայության ժամանակ կողքը հարազատ մեկին ունենալն արդեն իսկ քիչ բան չէ...

1992-ի մայիսի 28-ին դեսանտային վաշտի կազմում գալիս է Երևան և Հանրապետության հրապարակում հանդիսավոր երդում տալիս, մասնակցում Անկախության օրվան նվիրված շքերթին և երեկոյան վերադառնում զորամաս: Հաջորդ օրը, զորամասի հրամանատարի հրամանով, օրինակելի ծառայության համար, մի քանի օրով արձակվում է տուն: Ու նորից ցնծություն հարազատ հարկի տակ: Ցնծություն, բայց կարճատև: Հիշում է քույրը՝ Արմինեն. «Գիշերվա ժամը մեկն էր, մերոնք քնած էին, բայց իմ քունը չէր տանում: Հանկարծ շքամուտքում ինչ-որ ձայն լսեցի, հետո՝ դռան թակոց: Անկախ ինձանից, անմիջապես ձայն տվեցի. «Մայրիկ, Անանն է, բաց դուռը»: Մայրս, երևի, ինձ այնքան էլ

չհավատաց և, մոտենալով դռանը, հարցրեց. «Ո՞վ է»: Ես նորից կրկնեցի. «Անանիկն է, մամ: Դե շուտ բացիր»: Եվ իսկապես՝ նա էր, իմ եղբայրը:

... Նրա զինվորական համազգեստն էի արդուկում, երբ նկատեց և մոտենալով, ասաց. «Արմին ջան, այդպես չեն արդուկում», և իմ ձեռքից վերցնելով արդուկը, ինքն արդուկեց: Եվ իսկապես արդուկեց հիանալի: Այդ հանդիպումից անցավ մոտ մեկ ամիս, երբ որոշեցինք գնալ նրա մոտ զորամաս: Դա եղավ իմ և նրա, ինչպես նաև մորս վերջին հանդիպումը... Ծանր էր բաժանման պահը, երբ եղբայրս փարվեց ինձ և ասաց. «Արմին ջան, քույր ջան, մամային ու պապային լավ կպահես...»: Հիշում եմ մեր զրույցը ծառայության մեկնելուց առաջ.

- Մահից վախենո՞ւմ ես,- հարցերց:

Ես շփոթված արձագանքեցի.

- Ինչո՞ւ ես մահի մասին մտածում, չէ՞ որ ամբողջ կյանքդ առջևում է, դու դեռ նոր ես սկսել ապրել:

- Բայց դու պատկերացրու՝ հիմա ապրում եմ, լսում, տեսնում և զգում ամեն ինչ, և հանկարծ ամեն բան կանգ է առնում, և ոչինչ չեմ զգում, չկամ...

Գուցե ճիշտ է խոսքը, թե մարդ զգում է իր մոտալուտ մահը... Նրան կորցնելուց հետո քանի՞ անգամ է երազիս եկել ու փարվել ինձ. և ինձ այնպես է թվացել, թե իրողություն է: Բայց երբ աչքերս եմ բացել, արցունքի հեղեղն առել է աչքերս, և ցավն առավել է զորեղացել...

Ամեն անգամ, երբ թաքուն նայել եմ նրա աչքերին, ինձ երջանիկ եմ զգացել, որ այդպիսի եղբայր ունեմ: Թե ինչ հոգի ուներ նա՝ դժվարանում եմ նկարագրել: Պարզ էր առվակի նման, հպարտ ու քաջ՝ արծվի պես...»:

Գալու էր ժամանակը, քրոջ աչքում արծիվ իր եղբայրը, իրոք, արծվանալու էր Տավուշի սահմանամերձ գյուղերի պաշտպանական դիրքերում՝ Պառավաքարում, Ներքին Կարմիրաղբյուրում, այնուհետև՝ Կարմիրի շրջանի Վահան գյուղում: Իսկ հերոսի լուսապսակը նրա հպարտ ձակատը զարդարելու էր Արծվաշենի՝ չորս զոր ու գիշեր տնած ահեղ, անհավասար մարտերում, երբ դեսանտային գնդի տղաները, առանց երերալու, մահվան աչքերին նայեցին ու հրեղեն գնդակն ընդունեցին իբրև համբույր, ճիշտ այնպես, ինչպես դարասկզբի անմահ ֆիդայիները Սասնո անառիկ լեռներում:

Իսկ մինչ այդ՝ Արծվաշենի անկումից վեց օր առաջ, Անանիայի հայրը՝ հայրենական մեծ պատերազմի վետերան Վարդան

Սմբատյանը, հասցնում է մի վերջին անգամ տեսնել որդուն: Դա օգոստոսի 2-ին էր, Վահան գյուղում:

- Ձեզ լավ կպահեք, տղաներ, ծանր ժամանակներ են,- ասել էր հրաժեշտից առաջ՝ խոստանալով հաջորդ այցին բերել նաև քրոջն ու մորը, իսկ տղայի ծննդյան օրվա՝ օգոստոսի 21-ի առիթով թույլտվություն խնդրել հրամանատարությունից, որպեսզի այդ օրը նա տանը լինի: Իսկ Անանիայի ծննդյան օրվան մնում էր ընդամենը երկու շաբաթ...

Իմ ձեռքին Անանիայի՝ 12.06.92 թվագրությամբ նամակն է. «Բարև, սիրելի մայրիկ, հայրիկ և քույրիկ ջան: Ես շատ լավ եմ, գործերս՝ նույնպես: Ասեմ, որ այս նամակը ուղարկում եմ մեր ընկերոջ հետ... Ես կաշխատեմ հաճախակի նամակ գրել, այնպես որ, դուք չանհանգստանաք... Դե, հաջողություն, կներեք, որ մի քիչ խզի-բզի եմ գրել, ուղղակի շատ եմ վռազում...»:

Ինձ այնպես է թվում, թե նամակը գրելու պահին ոչ այնքան հեռու որոտացել են «գրադներն» ու «ալազանները», և հայրենիքի զինվորը այս մի քանի տողն է հասցրել գրել ոտքի վրա: Միակ նամակը չէ, իմ ձեռքի տակ Անանիայի այլ ձեռագրեր էլ կան: Բանաստեղծություններ են՝ գրված 1988 թվականին: Ասել է, թե երբ ընդամենը 16 տարեկան պատանի է եղել:

... Մութ ու գեղեցիկ գիշերվա նման՝
Անցար, գնացիր մութ ու գեղեցիկ,
Գիշերվա նման հոգիս մթնեցրիր
Ու մութ գիշերով անցար գնացիր:
Կամ՝
Սիրեցի ես քեզ, սիրեցի թաքուն,
Սիրեցի ես քո աչքերը սիրուն,
Դու աղջիկ ես դպրոցական,
.....
Ամեն րոպե, ամեն վայրկյան
Պետք է հիշես քո ապագան:

1987 թ.

Մեկ այլ քառատող ևս, որ շատ է տխուր ու շատ խորհրդավոր.

Ես կզոհվեմ, դու կմնաս,
Իմ շիրիմին այցի կգաս,
Գերեզմանիս քարի վրա
Շատ չլացես,- ես կզարթնեմ...

Մայրն է բերել որդու այս տողերն ու որդու նամակը՝ հազարանգամ մայրական արցունքով թրջված: Ու բերել է նաև իր արցունքոտ հուշերը. «Մի անգամ ասաց. «Մամ, բա որ հանկարծ ձեզ հետ մի բան պատահի, ես ի՞նչ եմ անելու առանց հոր ու մոր, չէ՞ որ ես դեռ շատ եմ ջահել...»: Սիրտս ասես դանակով կտրեին, հիմա էլ այդ խոսքերը խոցում են սիրտս... Ո՞ւր էր թե այդպես լիներ՝ մենք գնայինք, ինքը մեր բաժին կյանքն էլ ապրեր... Իր ծննդյան 16-ամյակի առիթով մագնիտոֆոն նվիրեցինք: Մի օր չեղավ ուրախ երաժշտություն ու երգեր լսեր. ինչ լսում էր՝ տխուր էր ու տխուր: Մի անգամ էլ զայրացա՝ հերի՛ք է տխուր երգեր լսես... Իրենից հետո մագնիտոֆոնին ձեռք չենք տվել, չենք միացրել: Նա էլ է լռել որդուս նման:

... Երբ ընկերները գալիս էին մեր տուն, նրանց հետ ուժ էր փորձում, և իր ձեռքը ծալող չկար: Ասում էի՝ բալես, կռվի դաշտում զենքով են կռվում: Պատասխանում էր՝ մամ, կասկածո՞ւմ ես, որ այնտեղ էլ կհաղթեմ...

Երբ աշխատանքից ուշանում էր, իջնում էի կանգառ, սպասում մինչև իր գալը: Գալիս էր ու հարցնում՝ էլի՞ ես սպասում: Ասում էի, որ մոր սիրտը չի համբերում, որ երբ ինքը կողքիս չէ՝ գժվածի եմ նմանվում: «Բա որ բանակ գնամ ու ինձ հետ մի վատ բան կատարվի, ի՞նչ կանես»,- իբր կատակում էր: «Կմեռնեմ, չեմ դիմանա»,- պատասխանում էի: «Բա էն ուրիշների մայրերը ինչպե՞ս են դիմանում, դու էլ կդիմանաս, մամ...»: Ասես գուշակում էր, ասես զգում էր կատարվելիքը...»:

Ու բխում են մոր սրտից արցունքոտ այս տողերը.
Իմ դառնացած սրտի համար
Ուրիշ դեղ ու դարման չկա,
Ո՞ւր գնամ ես, որտե՞ղ փնտրեմ՝
Արծվաշե՞ն, թե սև Մութուդարա...

Իսկ ես մխիթարում եմ որդեկորույս մորը. մի՛ փնտրիր նրան, Զարդալամ մայրիկ, քանզի նա ապրում է ժողովրդի հոգու մեջ, քանզի նրա երկրային կյանքը շարունակվում է երկնքում՝ հրեշտակների լուսեղեն թևերին, և մենք՝ սովորական մահկանացուներս, դժվար թե հասնենք նրա անմահության բարձունքներին...

ԿՈՎՈՒՄ ՈՒ ԿՈՎԻՑ ՉԵՐ ՎԱԽԵՆՈՒՄ

ՏԻԳՐԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Գրիգոր Թովմասյանի օջախ Ոսկեհատ անունով մի անուշ աղջիկ հարս է եկել: Գրիգորի Գագիկ անունով որդին հենց նրան է ընտրել՝ Ոսկեհատ անունով հալալ կաթնակեր այս աղջկան, որ նրա գալով նոր լույս մտնի իրենց՝ վշտից լույս ու ժպիտ կորցրած օջախ, որ հետո ծնվի մի թիթեռնիկ-բալիկ ու ցրի իր Գրիգոր պապի ու Գեղեցիկ տատի հոգիներում բույն դրած մռայլը: Տատն ու պապը, Գագիկն ու Ոսկեհատը արդեն իսկ որոշել են՝ ուր-որ է իրենց տան մեջ մանկան ձիչ է լսվելու, և նորածնի անունը լինելու է Տիգրան կամ Տիգրանուհի՝ նայած տերը ինչ կկամենա՝ տղա՞, թե՞ աղջիկ: Ուր էր, թե տղա ծնվի, որովհետև տղամարդու մի աթոռ այսօր դատարկ է մնում Թովմասյանների ընտանիքում, գինով լի մի բաժակի զնգոց չի լսվում տխրությամբ բեռնված նրանց սեղանին, ու այնպե՞ս զգացվում է վաստակող և ուտող մի բերանի բացակայությունը: Այդ բացական Արծվաշենի քաջազուններից մեկն է՝ Տիգրան Թովմասյանը՝ ծնված 1972 թվականի հուլիս 14-ին, Երևան քաղաքում...

Սովորական մանուկ, սովորական առօրյա: Դասեր, դասագրքեր, դպրոց: Սիրելի ուսուցիչներ, որոնք իրենց սաների մեջ նախնառաջ ուզում են ՄԱՐԴՈՒՆ տեսնել: Ուսուցիչներից և ոչ մեկի մտքով չէր անցնի, թե իրենք կրթում են նաև մեկին, որը 20 տարեկանում անօրինակ սխրանք էր գործելու, թե իրենց աչքերը թրջվելու են ու ցավելու են հոգիները անդառնալի կորստից:

Ավ. Իսահակյանի անվան դպրոցի ուսուցչական կոլեկտիվը անակնկալի էր գալու ու տխուր հպարտությամբ նաև հպարտանալու էր, որ իրենց կրթօջախում Մարտական խաչի առաջին աստիճանի շքանշանակիր ասպետ է սովորել. . Իսկ դատեկը՝ Ջիվանյանը, մինչև հիմա էլ շարունակում է այցելել իր սանի ծնողներին, նրանց հետ հիշել Տիգրանի դպրոցական տարիները՝ մերթ ընդ

մերթ չորացնելով կոպերի տակ ծանրացած արցունքի կաթիլները...

Տիգրանի համար հայրենիք հասկացությունը միայն ափաչափ այսօրվա Հայաստանով չէր սահմանափակվում: Հայրը՝ Գրիգորը, նրան հաճախակի էր պատմում կորսված Էրգրի՝ Արևմտահայաստանի մասին, դարասկզբի հայոց եղեռնի մասին, թուրքական յաթաղանի ոճրագործությունների մասին: Պատմում էր, թե ինչպես են իր պապն ու տատը Սվասից մահապուրծ նախ Հունաստան հասել՝ կորցնելով տուն-տեղ, հարազատ ու գերդաստան, այնուհետև հանգրվան գտել Մասիսների հայացքի դեմ հանդիման:

- Իսկ ովքե՞ր են սպանել հայերին, ինչո՞ւ,- հարցնում էր աշխարհի չարն ու բարին դեռ չճանաչող երեխան ու աչքերը հառում հոր տխուր աչքերին:

Թուրքերն, էլ ո՞վ,- պատասխանում էր հայրն ու շարունակում: - Թուրքերը, տղաս, որովհետև իրենք երկիր չեն ունեցել, սրով, զորքով եկել, գրավել են մեր հողերը և, որպեսզի հետո մենք հող չպահանջենք, սպանել են մեծ ու փոքրի, մի մասին էլ կոտորել են գաղթի ճանապարհին, անապատներում...

Այն ժամանակ ամեն ինչ մշուշոտ էր Տիգրանի համար: Ժամանակ էր պետք, որ հստակվի: Միջին դասարաններում սկսեց ավելի շատ կարդալ գեղարվեստական երկեր, պատմական թեմաներով գրքեր: Հայրն, առանց ափսոսանքի, գնում էր որդու պահանջած ցանկացած գիրք կամ հայթայթում ծանոթ-բարեկամների գրադարաններից:

Դասերին զուգահեռ իրեն նվիրեց նաև ծանրամարտին: Տասնվեց տարեկանում արդեն կոփված, բնավորությամբ ձևավորված, շրջապատում ընդունված ու հարգանք վայելող պատանի էր: Մեծի հետ մեծ էր, փոքրի հետ՝ փոքր, հարևան բարեկամի աչքի լույսը, որովհետև ոչ մեկի սիրտը չէր ցավեցրել, ոչ մեկին չոր խոսք չէր ասել, ոչ էլ մերժել որևէ խնդրանք:

Հոգում արդեն հուրհրում էր սիրո առաջին կրակը, ու իր երազների աղջկան՝ Վարսիկին, խոստովանել էր իր անկաշառ սերը: Տուն էլ էր հրավիրել մի երկու անգամ: Ծնողները մեկուսի շշնջացել էին՝ բախտավոր լինեք, գառնուկներս, սիրով լինեք, Տիրոջ ձեռքը՝ ձեզ ապավեն...

Սկսվել է ազգային-ազատագրական շարժման փոթորիկը: Ինքը դեռ երկու տարի ունի մինչև զինծառայության մեկնելը: Թեև հոգով պատրաստ է մեծ գործի մասնիկը դառնալու, բայց դեռ շուտ է, դեռ դրա ժամանակն էլ կգա: Եվ ընդունվում է ուսումնարան՝ յուրացնելով վարսավիրի մասնագիտությունը: Շուրջ

տարիուկես աշխատելով «Օլիմպիա» վարսավիրանոցում, արժանանում է գովասանագրերի, հատուկ մրցանակի:

Թեև գործը սիրելի էր իրեն ու նաև կենսամիջոց, Տիգրանն, այնուամենայնիվ, չէր կարող ձեռքերը ծալած նստել ու նայել խռովահույզ օրերի ընթացքին: Պատահում էր այնպես, որ զանգահարում էր տուն՝ տեղեկացնելով, որ ինքը մի քանի օրով բացակայելու է, որ շատ կարևոր գործեր կան անելու, թող ծնողները չանհանգստանան: Իսկ գործը իրոք կարևոր էր՝ ազգանվեր տղաների, խմբերի հետ զենք, սննդեղեն, զինամթերք հասցնել աշխարհից շրջապատման օղակով կտրված Արցախ ազատատենչ լեռնակողմ կռվող տղաներին, երկրապահ ջոկատներին: Հենց այդ օրերին էլ կրկին վերհիշեց հոր պատմածները, գրքերում կարդացածները եղեռնի մասին, Սումգայիթի, Բաքվի վերջին ջարդերը, որոնք սոսկալի էին, վրեժի բոցն արթնացնող... Եվ պարթևահասակ երիտասարդը իրեն պատկերացրեց վրիժառու ֆիդայու հագուկապուստով, մոսինն՝ իր զորեղ բազուկների մեջ, մտովի սուրաց ի մարտ:

Եկավ 1992 թվականի մայիսը: Տիգրան Թովմասյանը զինվորագրվեց Հայոց ազգային բանակին՝ ծառայությունն սկսելով Կիրովականի 016 գնդում: Իր հերոս-ընկերների նման նա էլ հայրենիքի անբասիր ծառայության երդումը տվեց Երևանի Հանրապետության հրապարակում, այնուհետև առիթ ունեցավ մի քանի օրով լինել տանը, քիչ թե շատ բուժել զինվորական անհարմար կոշիկներից ոտքերին առաջացած վերքերն ու վերադարձավ զորամաս: Կարճատև հանգստի պահերին հիշողություններն իրենք իրենց բացվում ու զինվորին առնում էին իրենց գիրկը: Լրացել է իր 18 տարին, սեղան է բացվել. եկել են ազգ ու բարեկամ, մտերիմ ընկերները, հնչում է ցնծուն մեղեդին: Ու սեղանի գլուխ իր Նունիկ տատն է՝ օրհնանքի մեղրանուշ բառեր շուրթերին, իր ծնողներն են՝ կենսուրախ ու խնդուն, իր Գագիկ եղբայրն է: Ի՜նչ լավ կլիներ, որ կողքին ժպտար նաև այն աղջիկը, որին այնքան կարոտում է...

Հիշում է, թե ինչպես պատառ հացը կուլ չէր գնում առանց Նունիկ տատի... Հիշում է, թե ինչպես հայրն զգուշացրեց, որ հանկարծ փող չվերցնի այն պատանուց, որի մազերն էր կտրում իրենց տանը: Հիշում է նաև իր պատասխանը՝ բա ամոթ չի՞, պապ, բա ես նրանից փող կվերցնե՞մ...

Հուշե՜ր, հուշե՜ր, հուշե՜ր... Եթե այսօր մեր կողքին լիներ, ինչպիսի՜ հուշեր կպատմեր սահմանամերձ գյուղերի պաշտպանության օրերից՝ Վահանից, Այգեպարից ու Արծվաշենից: Կպատմեր

իբրև ականատես ու մասնակից, կպատմեր ողջակիզված ընկերների մասին, հրամանատարների մասին ու կասեր նաև, թե ինչ բան է դեմառդեմ կանգնած մահը, որին պարտավոր ես դու հաղթել, այլապես ինքը քեզ կհաղթի ու հետո՝ միայն քեզ չէ, որ սպառնում է...

Երբ հայրը զորամաս էր գնացել տեսակցության, որդին խոստովանել էր. «Մի քիչ դժվար է, բայց արդեն դառնում է սովորական»: Եվ մերժել էր հոր այն առաջարկը՝ թե՝ որդիս, խոսենք հրամանատարության հետ, թող տեղափոխեն այլ զորամաս: Եվ հայրը կրկին համոզվել էր, որ իր օջախին պատիվ բերող զավակ է դաստիարակել:

Այնքան կարճ տևեց քսանը նոր-նոր բոլորած զինվոր Տիգրան Թովմասյանի ծանր ու պատասխանատու ծառայությունը, որ չհասցրեց անգամ մի երկու նամակ ուղարկել հարազատներին, սիրած աղջկան, ընկերներին: Միակ նամակ-երկտողը, որ Վահան գյուղից էր, այսօր իբրև սրբազան մասունք է պահվում մոր բարձի տակ: Ու մայրական արցունքով են թրջվում արդեն իսկ խունացած տողերը. «Սիրելի ծնողներ, ես լավ եմ, թեև կռվում ենք, բայց ես կռվից չեմ վախենում... Հայրիկ, դու քեզ լավ պահիր, ծառայությունս կավարտվի, կգամ ու քեզ կուղարկեմ սանատորիա...» (իր ծառայության մեկնելուց առաջ հայրը ծանր հիվանդացել էր): Նա չգիտեր, որ նաև իր ծնողների համար է Եռաբլուրը դառնալու ուխտատեղի, որ ինքն անմահանալու է պատմության գրվելիք էջերում:

Փառք քեզ, քաջորդի, որ գնացիր ի մարտ ու կյանքի գնով հույս ու հենակ դարձար մեր ապրած այսօրվան, վաղվան ու Հայաստան աշխարհի գալիքին...

ՈՐԴԵԿՈՐՈՒՅՍ ԾՆՈՂՆԵՐԻ ՈՒԽՏԸ

Հարյուրավոր սուրբ նահատակների հավերժական կացարանի՝ Եռաբլուրի, ճանապարհն առավել մարդաշատ է դառնում շաբաթ-կիրակի օրերին: Մարդիկ գալիս են առանձին-առանձին, խմբերով, գերդաստաններով: Գալիս են խունկ վառելու, ծաղիկ դնելու իրենց արծվահայաց տղաների, ջահել-ջիվան կյանքները հայրենի հողի ազատությանը զոհաբերած իրենց քաջազունների հավերժ արցունքոտ ու հավերժ մորմոքուն շիրիմներին...

Արծվաշենի տասներկու հերոսների եղբայրական գերեզմանը, որի վրա վեր է խոյացել ճարտարապետ Ասլան Մխիթարյանի հեղինական «Սխրանք» հուշակոթողը, տարին բոլոր պատված է թարմ ծաղիկներով: Ամառային տապ լինի, թե ձմեռային բքաշունչ եղանակ, այցելուներն անպակաս են: Նրանցից շատերը երկար ու ձիգ ճանապարհ են կտրում՝ Տավուշից, Չարենցավանից, Էջմիածնից... Ի՞նչ անեն, ափաչափ այս հողն է նրանց սփոփանքի վայրը, այստեղ է գլորվում նրանց ցամաքած աչքերի վերջին կաթ արցունքը, այստեղ են որդեկորույս ծնողները մեկը մյուսի առաջ սիրտ ու հոգի բացում, խոսում իրենց դարդ ու ցավից, առօրյա հոգսերից, տունուտեղից, անելիքներից: Եվ ինչպես տասներկու դեսանտայիններն էին միասին զորանոցում, խրամատներում, կրակագծերում, Արծվաշենում ու հիմա նաև Եռաբլուրում, այնպես էլ նրանց ծնողները պատեհ առիթը բաց չեն թողնում հավաքվելու գլուխ գլխի, մեկտեղվելու՝ լինի տղաներից մեկի ծննդյան օրը, մեկնումեկի անունով փողոցի, դպրոցի անվանակոչություն: Վիշտն այնպես է մտերմացրել բոլորին, որ կողքից նայողին կարող է թվալ, թե այս սգակիր մարդիկ նույն գերդաստանի շառավիղներն են՝ միաբանված արյունակցական անխզելի կապերով: Եվ իսկապես մի ընտանիքի են նման: Այս էլ հինգ տարի անընդմեջ այս մեծ ընտանիքի սիրտը տրոփում է նույն ռիթմով: Եվ այս գեղեցիկ իրողության մերանը զոհված զինծառայողների ծնողական կոմիտեի նախագահ Արամայիս Միքայելյանն է: Մի մարդ, որն ականջալուր է ու հասվեհաս բոլոր նրանց, ովքեր իր օգնության, աջակցության կարիքն ունեն: Եվ սա այն դեպքում, երբ իր հայրական գերդաստանը յոթ զոհ է տվել Արցախյան հերոսամարտին, և նրանց հետ՝ հարազատ զավակը՝ Կիրովականի դեսանտային գնդի բուժակ Դավիթ Միքայելյանը:

Յուրաքանչյուր ամսի 8-ը սրբազան օր է որդեկորույս ծնող-



Որդեկորույս ծնողները Եռաբլուրում:

ների համար: Առանց լրացուցիչ հիշեցումների, մեկ մարդու նման, մոռացած ամենաանհետաձգելի գործերն անգամ, մեծ ու փոքրով բոլորն շտապում են դեպի Եռաբլուր: Եվ եթե հանկարծ բացակայում է մեկը՝ տագնապում են՝ չլինի՞ հիվանդ է կամ որևէ դեպք է պատահել, և իրենք տեղյակ չեն: Հաջորդ օրն ամենինչ պարզվում է:

Այո, բախտակիցներ են նրանք: Նույնն է և նրանց ցավը: Վիշտը նույնն է, և իրենք ապրում, մխիթարվում են մեկը մյուսով: Ծնողներն իրար կարիքն առավել շատ են զգում հատկապես դաշտային աշխատանքների ժամանակ, դժվարին պահերին: Եվ երբեք հուսախաբ չեն լինում՝ մեկի բազուկը բանում է մյուսի համար, և մեկտեղ կտրած աղուհացն ավելի է սրբանում: Նրանք ուխտ են արել՝ կողք-կողքի լինել՝ ինչպես իրենց զավակները, աջակից լինել՝ ինչպես եղբայրն եղբորը, վիշտն ու ուրախությունը կիսել իբրև հարազատներ: Եվ որպեսզի ուխտն ավելի ամուր լինի, աղջիկ ու տղա են պսակում: Կան այդպիսի դեպքեր... Ամեն անգամ հերոս զավակների ծնողներին հանդիպելիս, սիրտս լցվում է խանդաղատանքով՝ ինչ լավ է, որ կան այսպիսի մարդիք, որ կա այսպիսի սրտացավ մթնոլորտ, այլապես որքան դժվար կլիներ ապրելը:

Ես գլուխ եմ խոնարհում նաև ծնողների առաջ...

ՄԱՐՏԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Նվիրում եմ հայոց բանակի մարտիկներին

Աջ ու ահյակ, տղե՛րք, վիշապներ են վխտում,
Աջ ու ահյակ մա՛հ է, սակայն մեզ մահ չկա,
Մեր ձեռքով է այսօր Հայկը Բելին հաղթում,
Հաղթաբազուկ դյուցազն իմ Արցախը վկա:
Վիրավոր է թեև մեր հոգին էլ այսօր,
Մեր բաց վերքից թեև տաք արյուն է ծորում,
Բայց հզո՛ր ենք նորից, մահի՛ց էլ ենք հզոր,
Ինչպես սուրբ Վարդանը՝ Տղմուտ-Ավարայրում:
Հե՜յ, զինավառ տղերք, հե՜յ, արծիվներ մեր քաջ,
Մահվան միջով անգամ առա՜ջ, միայն առա՜ջ,
Թող ոսոխը սարսի մեր զարկերից ազդու,
Հայ քաջորդուն միայն հաղթանակ է սազում:
Ազատության համար պայքարել ենք դարեր
Եվ դարերի միջով Եռագույնն ենք տարել,
Բռունցքվում ենք այժմ էլ ծփանքի տակ նրա,
Որ հաղթանակ տոնենք Մասիսների վրա...

Գրքում զետեղված լուսանկարների մի մասը ուղղակիորեն չեն առնչվում բուն նյութին: Դրանք նպատակամետ են ներկա և գալիք ընթերցողներին ներկայացնել հայոց ազգային բանակի անցած ուղին, նրա զորահրամանատարներին, հասարակական-քաղաքական գործիչներին, հոգևոր այրերին, որոնց ազգանվեր գործունեությամբ էլ ամրացավ, զորեղացավ ու պաշտպանվեց հող հայրենին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 3
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ 4
ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 5
ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀՈՂ 6
ԱՐԵՎԱՇԵՆ 8
ՄՇՏԱԳՐԳԻՌ ԱԽՈՐԺԱԿ 12
ԱՌԱՅԺՄ ՆՐԱՆՑ ԱՌԱՎԵԼՈՒԹՅԱՄԲ 19
ԿԻՐՈՎԱԿԱՆԻՑ ՏՂԵՐՔԸ ՀԱՍԱՆ... 20
ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՉԻՆԱՐՈՒՏ 23
ԴԵՊԻ ԱՐԵՎԱՇԵՆ՝ ԴԵՊԻ... ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ 25
ՀԵՐՈՍՆԵՐԻՆ ՉԵՆ ԱՅՐՈՒՄ... 32
ԷԴՎԱՐԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ 36
ՎՈԼՈԴՅԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ 41
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 47
ԴԱՎԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ 55
ԿԱՄՈ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ 61
ՄԽԻԹԱՐ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ 67
ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ 72
ԺՈՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ 76
ՍՈՒՐԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ 81
ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ 85
ԱՆԱՆԻԱ ՍՄԲԱՏՅԱՆ 89
ՏԻԳՐԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ 94
ՈՐԴԵԿՈՐՈՒՅՍ ԵՆՈՂՆԵՐԻ ՈՒԽՏԸ 98
ՄԱՐՏԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ 100

«Շուշան» հրատարակչությունը իր կատարած աշխատանքները նվիրում է հերոսների հիշատակին

ԽՄԲԱԳԻՐ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ
ՇԱՊԻԿԸ՝ ԱՐՏԱԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ
ՍՐԲԱԳՐԻՉ՝ ԳՈՀԱՐ ՂԱԼԻՋԱՆՅԱՆ
ԳԵՂ. ԽՄԲԱԳԻՐ՝ ՏԻԳՐԱՆ ՍՈՍՈՅԱՆ

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՐԾՎԱՅԻՆ ԹՌԻՉՔ
ՀԱԿՈԲ ՍՐԱՊՅԱՆ

Հանձնված է արտադրության 10.07.1998:
Ստորագրված է տպագրության 15.07.1998:
Չափսը 60x84 1/16, 6.5 տպագրական մամուլ:
Պատվեր 174: Տպաքանակը 3000:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ